

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ԵՍ. ԶԸՋԵՅԱՆ ԳՐԱՏԱՆ

ԶԱՊԷԼ Զ. ԱՍԱՏՈՒՐ

Գործնական

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ՊԱՅՆՈՒՆՁԱՐԻ

Ա. ԳԻՐԻՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ Գ. Ա. ԵՐԱՅՈՒՍՅԱՆ



Զ. ՏԱԼԿՈՒԹՅՈՒՆ

1914

431.99-5
Ա-73



ՏԱԿՐԻԹԻՒՆ Ա. ԱՍՏՈՒՆՆԵՆ



Ա. Ե ԱԶԸԸԵԱՆ

11, Պագրճըղար, Սուչրան Հանուր

Կ. ՊՈԼԻՍ

Պատ. Ուսուցիչներու եւ Ուսուցչուհիներու զիւրութեան համար, մեր նոր հրատարակած հետեւեալ դասագիրքերը վերածուած են դասընթացներու:

Տարրական Դասընթացք Ա. եւ Բ. Տարի

Մայրենի Լեզու Բերական Ընթերցարան, Ա. Տարի, Մ. Պոնցացի,	3
» » Ընթերցարան Բ. » » »	5
» » » Գ. » » »	6
Թանգարան Տարրական Զ. եւ Զ. Ասասուր	4
Բերականութիւն, Ա. Գիրք	4
Կրօնի Ուսում, Տարրական, Գ. Խաչկոնց	4 1/2
Աշխարհագրութիւն » »	6 1/2
Հայոց Պատմութիւն » »	6
Թուաբանութիւն » Գ. Գալաճեան	4 1/2

Միջին Դասընթացք Գ. եւ Դ. Տարի

Թանգարան Միջին Զ. եւ Զ. Ասասուր	8
Բերականութիւն, Բ. Գիրք »	4
Ոսկեմատենիկ Ֆրանս. Լեզուի, Ա. Գիրք, Օր. Ա. Արապեան	3
Կրօնի Ուսում, Միջին Գ. Խաչկոնց	6
Աշխարհագրութիւն » »	10
Հայոց Պատմութիւն, Միջին Ա. »	8
» » » Բ. » »	10
Թուաբանութիւն Գ. եւ Դ. Տարի Գ. Գալաճեան	7 1/2
Դուն Պիտի Ըլլաս, Միջին, Գ. Խաչկոնց	6

Բարձրագոյն Դասընթացք Ե. եւ Զ Տարի.

Թանգարան Բարձրագոյն, Զ. եւ Զ. Ասասուր	10
Կրօնի Ուսում, » Գ. Խաչկոնց	12 1/2
Աշխարհագրութիւն » »	15
Թուաբանութիւն, Ե. եւ Զ. Տարի, Գ. Գալաճեան	12
Դուն Պիտի Ըլլաս (Մանչոց), Գ. Խաչկոնց	8
» » » (Աղջկանց), » »	8

Չերմապէս կը յանձնարարենք այս գիրքերու գործածութիւնը որոնք արդէն Պատ. հասարակութենէն գնահատուելով՝ ընդունուած են մայրաքաղաքիս եւ գաւառի ոչ միայն մեր այլ եւ Հայ-Բողոքական, Հայ-Հռոմէական վարժարաններու եւ օտարահպատակ կրթական հաստատութեանց մէջ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԵԱԶԸԸԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԶԱՊԷԼ Հ. ԱՍԱՏՈՒՐ



ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



Ա. ԳԻՐԶ




ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ ՎԱԿԵՐԱՑՈՒԱԾ



(ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒԱԾ)

Կ. ՊՈԼԻՍ

Ա. ԵԱԶԸԸԵԱՆ ԳՐԱՑՈՒՆ



Շատ հեռու չեն այն ժամանակները, ուր մեր վարժարաններուն մէջ զրաբար բերականութիւն դաս կը տրուէր անչափահաս մանուկներու որոնք հազիւ կարողալ ու գրել ուսած էին: Գրաբարը անհասկնալի լեզու մըն էր իրենց համար, և տարիներ կ'անցընէին զոց սորվելով հողովուններ ու խոնարհուններ որոնց նշանակութիւնը գրեթէ չէին ըմբռներ:

Փորձառութիւնը զգացուց թէ ժամավաճառութիւն էր զրաբարի արդիւնատեղեւ այդ հասակի տղաքը, իրենց խօսած լեզուն սորվեցնելէ առաջ, և Ուսումնական Խորհուրդը իր ժրագրին մէջ ընդունեցաւ աշխարհաբար բերականութիւնը նախակրթարաններու մէջ աւանդելու գրութիւնը:

Սակայն այս պէտքը ճանչցուելէ գրեթէ մէկ ու կէս դար առաջ, 1726ին, Միխիմար Արբայ մտածած էր արդէն ճշդել մեր գաւառաբարբառին բերականական օրէնքները, և պատրաստած էր բերականութիւն մը որ դեռ ձեռագիր կը մնայ Ս. Ղազարու վանքը: անոր մէկ համառօտութիւնը միայն սպագրուած է տաճկերէն լեզուով 1727ին: Յետոյ, 1847ին, Էլիաս Ռիկա՝ ամերիկացի միսիոնար մը՝ Պոլսոյ և Փոքր Ասիոյ աշխարհաբարին բերականութիւնը գրած է անգլիերէն լեզուով: Այս երկու երկերը չենք տեսած: միայն գիտենք թէ գործնական արդիւնք մը ունեցած չեն աշխարհաբարի ուսումը մեր մէջ ծաւալելու տեսակէտով:

Մեր վարժարաններուն մէջ նոր լեզուն աւանդելու նպատակով հրատարակուած առաջին բերականութիւնը Ուղղախօսութիւնն է. 1853ին տպուած այս գործը, որուն գլխաւոր հեղինակն է Ռուսինեան, կը ներկայացընէ աշխարհաբարը ոչ այնպէս ինչպէս որ է, այլ նորօրինակ ուղղագրութեամբ ու կանոններով որոնց մէջ մեծ դեր կը կատարէ հեղինակին բնահմոյքը:

Այնուհետև 1864ին Պոլիս տպուած է Քիրէճեանի բերականութիւնը, որ թէպէտ այժմ մոռցուած՝ սակայն ունի իր լաւ կողմերը, և կրնայ նկատուել աշխարհաբարի բերականութեան առաջին դասագիրքը, որ գործնապէս օգտակար եղած ըլլայ:

Յետոյ, Թուականի կարգով կուգայ Հ. Այտընեանի հոյակապ երկը, Բնական Քերականութիւն արդի աշխարհաբար լեզուի, 1866ին տպուած Վիէնայի մէջ: Այս գիրքը, որ մեր դարուն հայ տաղանդին մեծ արտարութիւններէն մէկն է, երեւան բերած է աշխարհաբարի գոյութեան

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՅ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանանքլար Եօզուու, Կ. Պոլիս



8477-26

իրաւունքը՝ զրաբարէն անշատու իր ընդարձակ յառաջարանը յիշուկերտ մըն է աշխարհաբարբ պատմութեան, հին դարերէն մինչև մեր ժամանակները, իսկ բուն բերականութեան մէջ, Հ. Այտընեան կ'ուսումնասիրէ՝ մասնաբաժնի հետազոտութիւններով՝ Պոլսոյ և Փոքր-Ասիոյ գաւառաբարբառը, երեւան կը հանէ անոր թարգման զանձերը, և կը ճշդէ անոր բերականական կանոնները:

Սակայն Հ. Այտընեանի այս փառաւոր երկասիրութիւնը, զասագիրք մը չըլլալուն պատճառաւ, բնական էր որ չընդհանրանար մեր վարժարաններուն մէջ. միայն թէ գարմանալի է որ մեր այն ժամանակի աշխարհաբարբ գրողները, ընդհանրապէս զրաբար բերականութիւններուն վրայ լեզուն ուսած, չկրցան կամ չուզեցին օգտուիլ այդ աշխատութեանէն որ ժողովուրդին լեզուն կը պատկերացնէր, ու հետանալով անկէ, զացին յարեցան զրաբարբին, որուն մէջ ուզեցին ձուլել արդի աշխարհաբարբ:

Այս շարժման հետ յառաջ կու գան այն բազմազան ձևերը զորս աշխարհաբարբին տուաւ ամէն զրող իր ճաշակին և հմտութեան համեմատ: Այսպէս տեսցայ մինչև 1880ի ատենները, ուր նոր գրողներու սերունդ մը հետեւելով բանի մը հինքուր, եկաւ հակագործել այդ ձգտումին ղէմ, և աշխարհաբարբը վերստացաւ իր բնական, պարզ, յստակ ու ժողովրդական նկարագիրը, բայլ մը առնելով ղէպ ի 1840ի և 50ի զրագէտ սերունդին լեզուն, ղէպ ի ետ բայլ մը, որ սակայն յառաջդիմութիւն մըն էր աշխարհաբարբ լեզուին համար:

Դալով աշխարհաբարբի բերականութեան զասագիրքերուն, անոնք արդէն սկսած էին, 1880էն ետքը, մուտ գտնել մեր վարժարաններուն մէջ. Գարագաշեան, Թէրզեան, Աճէմեան, Դաւութեան, Պօզաճեան, Պետիկեան հետզհետէ հրատարակեցին իրենց գործերը, զորս բննած, իրարու հետ բաղդատած, և գործարութեան դնելով, անձնական փորձառութեամբ օգտուած ենք անոնցմէ՝ այս բերականութիւնը զրելու համար: Այս գործին մէջ, ուր աշխատութեան կարևոր բաժին մը ունեցած է ամուսինս՝ Հրանտ Ասատուր, զխաւոր ջանքերնիս եղած է պատկերացնել արդի հայերէնին օրէնքները, բաղելով գանտնք լաւագոյն գրողներու երկերէն, և ներշնչուելով մասաւանդ մեր ժողովուրդին գործածած կանոններէն, աղբիւր ունենալով մեզ Պոլսոյ աշխարհաբարբը: Մենք մեր կողմէ բնաւ օրէնք մը հեղինակած չենք, որովհետև այդ ձեռնհասութիւնը չենք ճանչցած մեզի, նկատելով որ լեզուին մէջ բան մը հեղինակելու իրաւունքը ժողովուրդին կը պատկանի, և ո՛չ անհատներուն:

Մեր բերականութեան համար ընտրած ենք Փոէտէռի Պամայի մեթոտը, որ իր մէջ կը պարունակէ ընթերցանութեան և ուղղագրութեան հատուածներ, բերականութեան կանոններ իրենց հրահանգներով և շարադրու-

Յեան ու արտասանութեան ղասեր: Բոլոր ոտանաւորները մասնաւորապէս պարտատուած են այս զրքին համար, մէկ մասը թարգմանութեամբ, մէկ մասը հետեւողութեամբ և փոքր մաս մըն ալ հեղինակութեամբ: Իսկ շարագրութեան ղասերը ընթերցանութեան ծառայող հատուածներուն վրայ յօրինուած են հարցումներով, որոնց զրաւոր և բերանացի պատասխանները պիտի վարժեցնեն տղարը՝ զրելու և պատմելու: Յիշեալ հատուածներուն, ինչպէս բոլոր բերականութեան մէջ՝ խնամք տարած ենք լեզուի միութիւն պահելու, և գործարած ենք ճշդիւ ինչ որ աւանդած ենք տեսականով: Ոտանաւորներուն մէջ միայն ընդունած ենք լեզուի աննշան զարտուղութիւններ, զխաւորաբար յօդերու գործածութեան մասին. այս կանոնները աւանդուած են Բ. Գրքին և Գ. Գրքին մէջ:

Մեր զասախօսութեան ընթացքին մէջ՝ անձնական փորձառութեամբ տեսած ենք այս մեթոտին առաւելութիւնները, որովհետև մեր բերականութիւնը երկու տարի գործարդելէ ետքը հրապարակ հանած ենք. այնուհետև տանըվեց տարի շարունակ ղասախօսած ենք զայն, ամէն տպագրութեան՝ միշտ սրբագրելով մեր փորձառութեան ու դիտողութեանց համեմատ: Այս անգամ վեցերորդ տպագրութիւնն է որ կը կատարենք մեծ փոփոխութիւններով, ըստ մանկավարժական նոր դրութեանց, Աւելցուցած ենք նոր հատուածներ, նոր ոտանաւորներ, պատկերազարդելով ամբողջ գիրքը, աւելի հասցելի և օգտակար ընծայելու համար զայն ուսանողներուն:

Չ. Ա.



ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԱՇԵԱՐՀԱԲԱՐԻ

Ա. ՏԱՐԻ

Ա. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԱՌՏՈՒՆ

Այս առտու ես կանուխ արթնցայ մեր աքաղաղին ձայնէն: Լոյսը ծագեր էր. արեւուն ճառագայթները պատուանէս ներս կը մանէին, և կու դային մինչև բարձիս վրայ: Ինչ փողոցը մարդ չկար, և ամէն կողմ լուռ էր: Քիչ ետքը, եկեղեցիին զանգակը սկսաւ հնչել: Մեր պարտէզին թզենիներուն մէջ, ճնճղուկները սկսան ճիւ ճիւ երգել: Իրացի տուներուն դուռները բացուեցան հետզհետէ: Ծերունի մը իր ցուպին կաթնած եկեղեցի կ'երթայ: Աղջիկ մը հաւնոցին դուռը բացաւ. կեր կու տայ վառեակներուն: Հիմայ ամէն մարդ ոտքի վրայ է, և տղաքը կ'սկսին դպրոց երթալ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

1. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ գրաւոր.

1. Այս առտու ինչպէս արթնցար — 2. Ի՞նչ տեսար — 3. Փողոցը ի՞նչպէս էր — 4. Քիչ ետքը ի՞նչ պատահեցաւ — 5. Ձեր պարտէզին մէջ ի՞նչ եղաւ — 6. Յետոյ ի՞նչ եղաւ — 7. Աղջիկ մը ի՞նչ ըրաւ — 8. Հիմայ ամէն մարդ ի՞նչ կ'ընէ — 9. Տղաքը ի՞նչ կ'ընեն:

2. Սորվիլ հետեւեալ բառերը.

Հորիզոն, արշալոյս, ճառագայթ, ամպ, զեփիւռ, մշուշ, ցեղ, աքաղաղ, արբոր, դայլայիկ, ճնճղուկ, հաւնոց:

Ա. ԴԱՍ. — ԲԱՌ. ԵՒ ԽՕՍԲ

1. Բառերը խօսելու և գրելու կը ծառայեն:
2. Խօսքը բառերու միացումն է իմաստ մը յայտնելու համար:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

3. Օրինակել Ընթերցուածը, բաժնել բառերը իրարմէ՝ հորիզոնական զիծով, եւ խօսքերը՝ ուղղահայեաց զիծով:

ՕՐԻՆԱԿ. — Այս — առտու — ես — կանուխ — արթնցայ — աքաղաղին — ձայնէն: | Լոյսը — ծագեր — էր, եւայլն:

4. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղազրութիւնը:

5. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղական	Ձայն	Պարտէզ
Սեռական	Ձայն ի	Պարտէզ ի
Բացառական	Ձայն է	Պարտէզ է
Գործիական	Ձայն ով	Պարտէզ ով

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ. — Բառի մը վերջաւորութեան այս կերպով փոխուելուն հոշովում կ'ըսուի:

1. ԱՐՏԱՍՆՈՒԹԻՒՆ. — ԱՌՏՈՒՆ

Ծագեց արեւն հորիզոնէն
 Կարմիր, դեղին ցոլբերով.
 Մեծ ծառերը շուք ձգեր են
 Աղբիւրներուն ջուրին թով:

Կ'անցնի զեփիւռն ալ խաղալով
 Տերեւներուն հետ կանանչ,
 Ու կը փայլին դաշտին մէջ զով
 Յասփկը, վարդն ու կակաչ:

Իր փեծակէն ծըռաւ մեղուն,
 Ծաղկէ ծաղիկ կ'ոստոստէ.
 Ելի՛ր, մանո՛ւկ, մտքով բեղուն՝
 Կանուխ դասըդ պատրաստէ:

Բ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՄԵՐ ՇՈՒՆԸ

Մենք աղուոր շուն մը ունինք Սիլլա անունով: Սեփ սեւ մազեր և կրակի պէս փայլուն աչքեր ունի: Զմեղ շատ կը սիրէ, մեր քովէն չի բաժնուիր քնաւ, և կ'ուզէ միշտ մեզի հետ խաղալ: Բայց այնքան խելացի է, որ երբ գիրքս ձեռքս առնեմ, կը հասկնայ թէ դաս պիտի պատրաստեմ, և կ'երթայ անկիւն մը խելօք կը նստի: Այնքան անձնուէր է, որ անցեալ տարի, երբ փոքրիկ քոյրս հիւանդացաւ, շարաթ մը անոր անկողինն տակ պառկեցաւ անօթի ծարաւ: Ինչպէս չսիրեմ իմ հաւատարիմ Սիլլան:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

6. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ գրաւոր.

1. Դուք ի՞նչ ունիք: — 2. Իր աչքերն ու մազերը ի՞նչպէս են: — 3. Ի՞նչպէս կը վարուի ձեզի հետ: — 4. Երբ գիրքդ ձեռքդ առնես ի՞նչ կ'ընէ: — 5. Երբ քոյրդ հիւանդացաւ, ի՞նչ ըրաւ Սիլլան: — 6. Ինչո՞ւ կը սիրես Սիլլան:

7. Սորվիլ հետեւեալ բառերը.

Փայլուն, անձնուէր, հաւատարիմ, զանգուր, վարս, ստեւ, ցռուկ, Թաթ, ձանկ, շալակ, սարսափ:

8. Սորվիլ վերի Ընթերցուածին ուղղագրութիւնը:

9. Օրինակել մէկ, երկու եւ աւելի վանկ ունեցող հետեւեալ բառերը գատ գատ սիւնակներու մէջ.

Սեղան, սիւնոց, անձեռոց, Թանաման, պնակ, սկաւառակ, դգալ, պատառաքաղ, դանակ, աղցանոց, աղաման, պղպեղաման, գաւաթ, սրուակ, սրճաման, ծաղկաման, հաց, գինի, միս, կարագ, աղանդեր:

Բ. ԴԱՍ. — Վ. Ա. Ն. Կ.

3. Երբ մէկ կամ աւելի տառեր մէկ հնչումով կ'արտասանուին, յիսնկ մը կը կազմեն, ինչպէս. մարդ, հաց, հոգի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

10. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղական	Անկիւն	Կրակ
Սեռական	Անկիւն ի	Կրակ ի
Բացառական	Անկիւն է	Կրակ է
Գործիական	Անկիւն ուլ	Կրակ ուլ

11. Այսպէս հոլովել գրաւոր եւ բերանացի.


ձանկ, Թաթ, ցռուկ, աչք, ձեռք, դաս, առիւծ:

2. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄԻՂԼԱՆ

Ես շուն մը ունիմ զանգուր վարսերով. Աչքերը փայլուն՝ ցռուկն է դեղին. Մեզի, ամէնուս կը փարի սիրով. Մեր պահապանը՝ սարսափն է գիւղին:

Տեսնելով իր կեռ ակռաններն ամուր, Զարերն ու գողերն իրմէ կը փախչին. Իր խոշոր Թաթերն ու հանկերը սուր Առիւծին, վագրին վիզին կը կառչին:

Ամէն առաւօտ ինք մեր ետեւէն Սակառնիս շիտակ կը տանի դպրոց, Եւ երբ մայրիկը դուրս ելլէ տունէն, Մեր դըրան առջև կ'սպասէ տըղոց:



Մենք ազուր շուն մը ունինք Սիլլա անունով (տե՛ս էջ 8):



Արսինէ զուարթ աղջիկ մըն է (տե՛ս էջ 12):

Գ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՍԻՐԵԼԻ Ա.ՂԶԻՆԸ

Արսինէ զուարթ աղջիկ մըն է: Իր թարմ չրթունքներուն վրայ միշտ ժպտա մը կը տեսնուի, և աչքերը խնդալով երեսդ կը նային: Երբեք դժգոհ, երբեք տրտում չես տեսներ զինքը: Ամէն բան աղէկ, ամէն մարդ բարի կ'երեւայ իրեն, որովհետեւ ինք բարեբարոյ է, անուշ կը վարուի ամէնուն հետ, ու տեղի չի տար որ մէկը անհաճոյ խօսք մը ըսէ իրեն: Այսքան քաղաքավար, այսքան ազնիւ աղջիկ մը բնական է զք սիրուի իր ընկերներէն, ծնողքէն և ուսուցիչներէն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

12. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ՝ գրաւոր.

1. Ի՞նչպէս աղջիկ է Արսինէ — 2. Իր աչքերը ինչպէս երեսդ կը նային — 3. Ի՞նչպէս չես տեսներ զինքը — 4. Ամէն բան և ամէն մարդ ի՞նչպէս կ'երեւայ իրեն — 5. Ինչո՞ւ — 6. Այսպիսի աղջիկ մը որմէ կը սիրուի:

13. Սորվիլ հետեւեալ բառերը.

Զուարթութիւն, համեստութիւն, հնազանդութիւն, քաղաքավարութիւն, աշխատասիրութիւն, հեզութիւն, կանոնաւորութիւն, մաքրութիւն:

14. Օրինակել վերի Ընթերցուածը, եւ բերանացի ըսել ամէն մէկ բառին մէջ գտնուած բաղաձայնները:

15. Բերանացի ըսել ամէն մէկ բառին մէջ գտնուած ձայնաւորները:

16. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

Գ. ԴԱՍ. — ԳՒՐ

- 4. Գրուած բառերը գիրերէ կը բաղկանան:
- 5. Երկու տեսակ գիր կայ. ձայնաւոր և քաղաձայն:
- 6. Ձայնաւորները այն գիրերն են որ ինքնին ձայն ունին, և ուրիշ հատ են. ա, ե, է, ը, ի, ո, շ, օ:
- 7. Բաղաձայնները այն գիրերն են որ ձայնաւորներուն օգնութեամբ միայն կրնան ձայն հանել, և երեսուն հատ են. ք, գ, դ, զ, փ, ժ, շ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, լ, յ, ճ, չ, պ, ջ, ռ, ս, ղ, վ, ճ, ռ, յ, ղ, փ, փ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

17. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.


Ուղղական	Ժպիտ	Ծնողը
Սեռական	Ժպիտ ի	Ծնողը ի
Բացումական	Ժպիտ է	Ծնողը է
Գործիական	Ժպիտ ով	Ծնողը ով

18. Այսպէս հոլովել գրաւոր եւ բերանացի.

Դէմք, երես, աչք, շրթունք, ձեռք, կունակ, հասակ:

3. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՒՐԻՆ ԱՐՍԻՆԷՒՆ

Անուշ աղջիկ մ'ես, զուարթ Արսինէս. Երբեք չեմ տեսած բուրդէմբղ տըխուր. Կոտրած սիրտերը շուտ մը կը շինես. Գիտես թէ խօսել և թէ կենալ լուռ: Ով զքեզ տեսնէ, կը սիրէ խկոյն. Բերնէզչիլտուրխօսքը փունջկամուտ. Թէ քաղաքավար, թէ բարի ես գունս Բարի օրինակ մ'ես բուր թոյրերուդ: Եւ երբ որ տեսնես մայրիկըդ յոգնած, «Դուն հանգչէ, կ'ըսես, ես քովդ եմ կեցած»:




Հ. ՂԵՒՈՆԳ ԱԼԻՇԱՆ



ԵՂԻՇԷ ԱՐԳԵՊ. ԳՈՒՐԵԱՆ



ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ



ԱՐԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ




ԳԱՄՄԱՌ ԳԱԹԻՊԱ

Ուր որ սեսնէ հայ երեսելի հեղինակի մը պատկերը կը նանչնայ
էւ անուըր կու տայ քեզի (տե՛ս էջ 16):




ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿՈՒՇԷԼԵԱՆ



ՌԵԹԷՂՈՍ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ուր որ սեսնէ հայ երեսելի հեղինակի մը պատկերը կը նանչնայ
էւ անուըր կու տայ քեզի (տե՛ս էջ 16):



ՄԱՏԹԷՂՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Դ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՀԱՅՐԵՆԱՍԱԷՐ ԵՐՈՒԱՆԵՐ

Երուանդ իմ ընկերս է. և ես շատ կը համակրիմ իրեն, որովհետև հայրենասէր տղայ մըն է: Շատ մաքուր հայերէն կը խօսի, և մեծ եռանդով կը հետեւի մեր լեզուի և ազգային պատմութեան դասերուն: Անիկա երբեք չի նմանիր այն ծաղրելի տղոց որոնք իրենց մայրենի լեզուն չեն գիտեր, խօսակցութեան մէջ օտար բառեր կը գործածեն, և շարունակ եւրոպական գիրքեր կը կարդան: Ան կրնայ պատմել ձեզի հայ զիւցազներու վէպերը, հայ թագաւորներու քաջութիւններն ու դժբախտութիւնները: Ուր որ տեսնէ հայ երեւելի հեղինակի մը պատկերը, կը ձանձնայ, և անոր անունը կու տայ ձեզի:

Հ Ի Ա Հ Ա Ն Պ Ն Ե Ր

- 19. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ՝ գրաւոր.
 - 1. Ո՞վ է Երուանդը — 2. Ինչո՞ւ կը համակրիս իրեն — 3. Որո՞ւն չի նմանիր Երուանդի — 4. Ի՞նչ կրնայ պատմել — 5. Ի՞նչ կը նշանակէ զիւցազն — 6. Գիտե՞ս հայ թագաւորներու անունները — 7. Զո՞վ կը ձանձնայ Երուանդը
- 20. Սորվիլ հետեւեալ բառերը.

Հայրենասէր, ազգային, օտար, քաջութիւն, դժբախտութիւն, հեղինակ, երեւելի, վէպ, եռանդ, խօսակցութիւն, ծաղրելի:
- 21. Օրինակել վերի Ընթերցուածը, եւ ստորագծել այն բառերը որոնց մէջ Ե գիրը իր յատուկ հնչումը կը պահէ:
- 22. Կրկին օրինակել եւ ստորագծել այն բառերը որոնց մէջ Ե գիրը էի պէս կը հնչուի:
- 23. Սորվիլ վերի Ընթերցուածին ուղղագրութիւնը:

Դ. ԴԱՍ. — Ե ԵՒ Է ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐԸ

- 8. Ե և Է ձայնաւորները, բառերուն մէջտեղը, երկու բաղաձայնի միջև, միեւնոյն հնչումը ունին, ինչպէս. կե-րակուր, բերան:
- 9. Ե ձայնաւորը իր յատուկ հնչումը կը պահէ բառերուն սկիզբը, ինչպէս. եպիսկոպոս, երիսաւարդ:
- 10. Ե գիրը բնաւ չի գործածուիր բառերուն վերջը:

Հ Ի Ա Հ Ա Ն Պ Ն Ե Ր

- 24. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ.	Պատմութիւն	Խօսակցութիւն
Սեռ.	Պատմութեան	Խօսակցութեան
Բաց.	Պատմութենէ	Խօսակցութենէ
Գործ.	Պատմութեամբ	Խօսակցութեամբ
- 25. Այսպէս հոլովել գրաւոր եւ բերանացի.

Բաշումիւն, դժբախտութիւն, ուղղագրութիւն, բերականութիւն:

4. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՀԱՅ ՏՂԱՆ

Ես հայ տղայ մ'եմ զարմէն հայկազուն
 Կը խօսիմ Հայկին, Արամին լեզուն.
 Զունիմ թագ, ոսկի, զահ և աղամանդ,
 Բայց սիրտս հարուստ է, պարկեշտ մանաւանդ:
 Վառուած իմ ազգիս սիրով կաթոզին,
 Իմ մէջըս կ'ապրի քաջերու հոգին,
 Եւ նախնիքներուս հուրը սրբազան,
 Զոր չեմ տար երբեք զանձերու փոխան:
 Թէպէտ տարագիրք, Թէպէտ հալածուած,
 Զի մուրար երբեք Հայը մէկէն հաց.
 Իր զարդն է ճակտին քրտինքը մաքուր.
 Եւ իր հովանին՝ հաւատքն երկնատուր:



Ե. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԽԵՂՃ ԱՂԶԻԿԸ

Երէկ առաւօտ շատ ցուրտ էր և սաստիկ հով կը փչէր, երբ դպրոց դացի քրոջս, Ուվաննային հետ: Փողոցը՝ հանդիպեցանք աղքատ աղջկան մը որ ողորմութիւն խնդրեց մեզմէ: Զգեստի տեղ՝ ցնցոտիներ հագած էր որոնք կտոր կտոր կը թափէին վրայէն, և ոտքը կօշիկ չկար: Ըսաւ մեզի թէ որք էր, և թէ ոչ մէկը հող կը տանէր իր վրայ: Հէք սղալ, ո՞վ գիտէ որչափ կը տառապէր: Տուինք անոր ինչ որ ունէինք մեր գրպանին և սակառին մէջ: Յետոյ, քոյրս իր բուրդէ վզնոցը հանեց ու անոր վիզը փաթթեց: Երբ դպրոց հասանք, մեր վար ժուհին նշմարեց որ երկուքս ալ լացեր էինք:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

26. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի՝ յետոյ գրաւոր.

1. Երէկ առաւօտ օդը ինչպէս էր: — 2. Փողոցը որոն հանդիպեցաք: — 3. Ի՞նչ հագած էր: — 4. Ի՞նչ ըսաւ ձեզի: — 5. Ի՞նչ տուիք անոր: — 6. Քորդ ինչ ըրաւ: — 7. Դպրոցին մէջ ինչ պատահեցաւ:

27. Սորվիլ հետեւեալ բառերը.

Սաստիկ, զգեստ, ցնցոտի, վզնոց, հէք, կը տառապէր, նշմարեց:

28. Օրինակել վերի Ընթերցուածը, եւ ստորագծել այն բառերը որոնց մէջ **ո** գիրը օի պէս կը հնչուի:

29. Կրկին օրինակել, եւ ստորագծել այն բառերը որոնց մէջ **ո** գիրը իր յատուկ հնչումը կը պահէ:

30. Սորվիլ վերի Ընթերցուածին ուղղագրութիւնը:

Ե. ԴԱՍ. — ՈՆՈՑ ԶԱՅՆԱՒՈՐՆԵՐԸ

11. ՈՒ ԵՕ ձայնաւորները միեւնոյն կերպով կը հնչուին բառերուն մէջտեղը, ինչպէս. դպրոց, մասնոց:

12. ՈՒ ձայնաւորը իր յատուկ հնչումը կը պահէ բառերուն սկիզբը, ինչպէս. ոսկի, որչափ:

13. ՈՒ ձայնաւորը Վ բաղաձայնէն առաջ գրուելով, Օ ի նման կը հնչուի, ինչպէս. ովիխանոս, ովսաննա:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

31. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ.	Ողորմութիւն	ԳՅութիւն
Սեռ.	Ողորմութեան	ԳՅուութեան
Բաց.	Ողորմութենէ	ԳՅութենէ
Գործ.	Ողորմութեամբ	ԳՅութեամբ

32. Այսպէս հոլովել գրաւոր եւ բերանացի.

Աշխատութիւն, գիտութիւն, համբերութիւն, հնազանդութիւն

5. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՒԲՐԻԿ ԲԱՐՁԻԿԸ

- | | |
|---------------------------------|--------------------------------|
| 1. Փոքրիկ բարձիկ սիրական, | 2. Հովին ձայնէն երբ վախնամ, |
| Կակնուղ զլուստ տակ տըկար, | Գայլն ու մրրիկ երբ գոռան, |
| ձեւմակ, տաքուկ պատուական | Վըրադ ննչել միշտ կու գամ, |
| Բուրդով լեցուած ինձ համար: | Փոքրիկ բարձիկ սիրական: |
| 3. Կան անձիւ խեղճ մանուկներ | 4. Ո՛հ, դառըն բախտ, միշտ քընստ |
| Մերկ, մայր չունին, չունին տուն, | Կը տառապին երբ այսպէս, |
| Եւ բարձ մ'անգամ չեն գտներ, | Անուշ մայրիկ, անընդհատ |
| Երբ աչքերնին փակէ բուն: | Արցունք կու գայ աչքերէս: |

Չ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՍՈՒՑ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ.

Մեր դասարանին մէջ երկու տղաք կան, Եղուարդ և Սուրէն, որոնք իրարմէ ոչ նուազ կը շահագրգռեն զիս: Եղուարդ իր աշխատութեամբ միշտ կը յաջողի դասերուն մէջ, և առաջին մրցանակի կ'արժանանայ. իսկ Սուրէն ժրքեք չ'աշխատիր, բայց քծնելով, նուաստանալով իր շարագրութիւնները ուրիշներուն զրել կու տայ, և բոլոր դասերը ասկէ անկէ կ'ընդօրինակէ: Այս խարդախ միջոցներով երբեմն կը յաջողի, և առաջին մրցանակը իրեն կը տրուի: Սակայն մեր ուսուցիչը անցեալ օր երեւան հանեց Սուրէնին մէկ խարդախութիւնը և աղուոր մը խայտառակեց զայն: Հիմայ համոզուած եմ թէ սուտ յաջողութիւնը վաղանցուկ է, և ճշմարիտ արժանիքն է միայն որ կը յարգուի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

33. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ՝ գրաւոր.

1. Ձեր դասարանին մէջ, իր տղաքը կը շահագրգռեն զբեզ — 2. Եղուարդ քնչ կ'ընէ — 3. — Սուրէն ինչ կ'ընէ — 4. Սուրէն քնչ միջոցներով կը յաջողի — 5. Ձեր ուսուցիչը քնչ ըրաւ անցեալ օր — 6. Հիմայ քնչ բանի համոզուած ես — 7. Ո՞վ է միայն որ կը յաղթէ:

34. Սորվիլ հետեւեալ բառերը.

Կը շահագրգռեն, մրցանակ, քծնելով, նուաստանալով, խարդախ, վաղանցուկ, կը յարգուի, արժանիք:

35. Օրինակել վերի Ընթերցուածը եւ ստորագծել այն բառերը որոնց մէջ ռւր վ կը հնչուի:

36. Սորվիլ վերի Ընթերցուածին ուղղագրութիւնը:

Չ. ԴԱՍ. — ՈՒ Ի ՀՆՉՈՒՄԸ

14. Ո՞ր բառի մը մէջտեղը, ձայնաւորէ մը առաջ գրուելով Վ ի հնչում կ'ստանայ, ինչպէս. Երուարդ պէտք է կարգալ Եղվարդ, զուարթ պէտք է կարգալ զըվարդ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

37. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ.	Երդում	Ուսում
Սեռ.	Երդամ կամ Երդամի	Ուսման կամ Ուսումի
Բաց.	Երդումէ	Ուսումէ
Գործ.	Երդումով կամ Երդամբ	Ուսումով կամ Ուսմամբ

38. Այսպէս հոլովել հետեւեալ բառերը.

Լուծում, զգացում, դադարում, հաւարում, մտածում

39. Ուղղական ընել հետեւեալ բառերը.

Բացման, Թաղումէ, հնչմամբ, ծագման, յուզմամբ, զրդումով, մերժման, սոսկումի, դիտումէ:

6. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԽՂՈՒՆՁԸ

Օր մը, արծիւն, անեղ իշխանն ամպերու,
Որ չի վախնար ամպրոպներէն անարկու,
Կաղնիի մը գագաթն իջաւ խոյանքով,
Եւ խըղունջ մը նշմարելով հոն իր քով,
«Ի՞նչպէս, ըսաւ, անարգ զեռուն հողակեր,
«Ի՞նչպէս կրցար դուն բարձրանալ այսքան վեր
«Եւ գալ ըլլալ ինձ այսչափ մօտ զըրացի»
Խըղունջն ըսաւ հրպարտութեամբ. «Սողացի»



Զգեսի տեղ՝ ցնցոսիներ հազած էր որոնք կտր կտր կը բափէին
վրայէն (տե՛ս էջ 18) :



Յուսիկ հօտերբայրս մակոյկ մը գնեց, եւ ամէն առտու,
արշալոյսին, ձուկ որսալու կ'երթանք Մարմարայի
բացերը (տե՛ս էջ 24) :

Է. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ

Այս տարի շատ հաճելի արձակուրդ մը կ'անցընենք գիւղը: Յուսիկ հօրեղբայրս մակոյկ մը գնեց, և ամէն առտու, արշաղոյսին, ձուկ որսալու կ'երթանք Մարմարայի բացերը: Կանխաւ կը պատրաստենք մեր կարթերը, խայծերը կ'անցընենք կեռ ասեղին ծայրը, ու կը ձգենք ծովուն յատակը: Յետոյ, յանկարծ ձուկը կու գայ խայծը յափշտակելու. այն ատեն կը քաշենք մեր կարթերը, ու մակոյկը կը լեցուի գոյնզգոյն ձուկերով: Երբ երկինքը մշուշ ըլլայ կամ ակիւքները՝ փոթորկոտ, մեր ձկնորսութիւնը շատ չի յաջողիր. բայց երբ ծովը յատակ ըլլայ և օդը՝ պայծառ, ոչ միայն մեր սեղանին համար կը հայթայթենք գեղեցիկ ձուկեր, այլ և մօտակայ խրճիթներուն տղոցը կը բաշխենք:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

40. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ՝ գրաւոր.

1. Այս տարի ինչպէս կ'անցընէք ձեր արձակուրդը. — 2. Արշաղոյսին հըր կ'երթաք. — 3. Ինչպէս կը պատրաստէք ձեր կարթերը. — 4. Երբ ձուկը գայ, ինչ կ'ընէք. — 5. Ձկնորսութիւնը երբ չի յաջողիր. — 6. Իսկ երբ ծովը յատակ ըլլայ:

41. Սորվիլ հետեւեալ բառերը.

Հաճելի, Մարմարա, կարծ, խայծ, յատակ, յափշտակել, գոյնզգոյն, փոթորկոտ, յատակ, պայծառ, կը հայթայթենք, կը բաշխենք:

42. Օրինակել վերի Ընթերցուածը, եւ ստորագծել այն բառերը որոնց մէջ յ գիրը հի ծայն կը հանէ:

43. Կրկին ընդօրինակել, եւ ստորագծել այն բառերը որոնց մէջ յ գիրը անծայն կը մնայ:

Է. ԴԱՍ. — Ծ ԳՐԸ

15. Յ գիրը Հ ի ձայն կը հանէ բառերուն սկիզբը, ինչպէս. յասակ, յաջող:

16. Յ գիրը անծայն կը մնայ բառերուն վերջը, բաց ի մէկ քանի միավանկներէ ինչպէս. հայ, բայ, եւայն:

17. Յ գիրը երբ բառերուն մէջտեղն է, ձայնաւորէ մը ետքը, Ե ի պէս կը հնչուի, ինչպէս. խայծ, հայոքիւն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

44. Երրորդ անգամ օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել այն բառերը, որոնց մէջ յ գիրը Ե ի պէս կը հնչուի:

45. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

46. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ.	Ծով	Մարդ	Հայ	Ձի
Սեռ.	Ծով ու	Մարդ ու	Հայ ու	Ձի ու
Բաց.	Ծով է	Մարդ է	Հայ է	Ձի է
Գործ.	Ծով ով	Մարդ ով	Հայ ով	Ձի ով

7. ԱՐՏԱԱՆՈՒԹԻՒՆ. — ԶԿՆՈՐՍԻՆ ՆԱԻԱԿԸ

Խոր գիշեր է լըռին.	Մեղմ, անուշ գեփիւռով
Խաղաղ են ծով, ակիք.	Թո՛ղ սահի իր նաւակ.
Նաւակը ձկնորսին	Սըլանայ անվրդով
Կը սահի միայնիկ.	Արծաթէ լուսնին տակ:
Երկինքէն լուսնկան	Եւ ձուկեր հոյլ ի հոյլ
Կը փայլի բացիւրփիկ.	Թեփերով ոսկեգոյն
Աստղերը կը խնդան.	Ուռկանին մէջ իր թռչ
Ու չըկայ փոթորիկ.	Գան լեցուին Թո՛ղ իսկոյն:

Ձի իր տունն անհամբեր
Կնոջն հետ դեռատի,
Իր փոքրիկ մանուկներ
Կ'սպասեն անօթի:

Ը. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — Ա.Գ.Ա.ՐԱ.ԿԸ

Գիտէ՞ք ինչ է ազարակ մը: Ես անցեալ տարի փոքրիկ ճամբորդութիւն մը ըրի հօրս հետ Պրուսայի կողմերը, և այնտեղ տեսայ: Մեծ անդաստակ մըն է ազարակը, ուր տեսակ տեսակ անասուններ կը պահեն: Փարախներ կան ոչխարներու, այծերու համար. գոմեր կան կովերու, եզերու, գոմէջներու համար: Ախտներ շինած են ձիերու, ջորիներու, էջերու համար: Հաւերը, աքաղաղները կը բուծանին հաւնոցներու մէջ: Յետոյ կան շտեմարաններ, մառաններ ուր կը պահեն ազարակին բերքերը: Այս ընտանի անասուններէն ոմանք կաթ կու տան, ոմանք հաւկիթ կ'ածեն, ուրիշներ սալ կը քաշեն, հողը կը հերկեն: Ազարակին մէջ կան շատ մը ծառաներ, հովիւներ, մշակներ, ձիապաններ, յետոյ ազարակապանը, իր կինը և զաւակները: Ասոնք բոլորն ալ կ'աշխատին պատրաստելու կարագ, պանիր, մածուն, և արտադրելու ցորեն, գարի, վարսակ, և այլն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

47. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ՝ գրաւոր.

1. Ի՞նչ է ազարակը. — 2. Ո՞ր կը պահեն ձիերը. — 3. Եզերը — 4. Հաւերը. — 5. Շտեմարանին մէջ ի՞նչ կը պահեն. — 6. Ո՞ր անասունները հողը կը հերկեն. — 7. Որո՞նք կաթ կու տան. — 8. Որո՞նք ոչխարները կ'արածեն. — 9. Որո՞նք սալերը կը քաշեն. — 10. Ազարակին մէջ ի՞նչ կը պատրաստուի:

48. Սորվիլ հետեւեալ բառերը.

Անդաստակ, բուծանել, մառան, բերք, հերկել, արտադրել, վարսակ,

49. Սորվիլ վերի Ընթերցուածին ուղղագրութիւնը:

Ը. ԴԱՍ. — Ա.ՆՈՒՆ ԿԱՏ ԳՈՅԱԿԱՆ

18. Ամէն անձ, ամէն անասուն, ամէն իր անուն մը ունի որուն գոչական ալ կ'ըսուի, ինչպէս. հայր (մարդու անուն), կաջու (անասունի անուն), տուն (իրի անուն):

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

50. Դրել զատ զատ սիւնակներու մէջ վերի Ընթերցուածին մէջ գտնուած անձի, անասունի եւ իրի անունները:

51. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ.	Տարի	Օր
Սեռ.	Տար ու աճ	Օր ու աճ
Բաց.	Տարի է կամ	Տար ու ընէ կամ Օր ու ընէ
Գործ.	Տարի ով	Օր ով

52. Այսպէս հոլովել գրաւոր եւ բերանացի.

Ամառ, ձմեռ, երէկ, հիմակ, վաղը, տառն:


8. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄՇԱԿԻՆ ԵՐԳԸ

Անձ ծագեց կարմիր արև,
 Տար և պայծառ է օղը,
 Դէհ, քաշեցէք, սիրուն եզեր,
 Առաջ տարէք արօրը:

Երբ գայ ձըմեռ, մենք վախ չունինք.
 Ուրախ կ'անցնի մեր օրը.
 Ուտելու միշտ պաշար ունինք,
 Լի և կուշտ է մեր փօրը:

Վարը վարենք, ախօս փորենք,
 Թոր ախօսներ հողին մէջ.
 Սերմը ցանենք որ հունձք հնձենք,
 Յորեն զիգենք կալին մէջ:


Դէհ, քաշեցէք, սիրուն եզեր,
 Շուտով վարենք արտերը.
 Թող չըսեն մեր զըրացիներ.
 Ե՛րբ ծոյլ են սա եզերը:



Ագարակին մէջ կան օտս մը ծառաներ (տե՛ս էջ 26) :



Մեր տունը ընդարձակ պարտէզ մը ունի որուն մէջ զանազան տունկեր եւ ծառեր կան (տե՛ս էջ 30) :



Ագարակին հատերուն կը նայէր (տե՛ս էջ 32) :

Թ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՄԵՐ ՊԱՐՏԷՋԸ

Մենք երեք եղբայր, երեք քույր ենք, և Վոսիորի Գանսիլիի գիւղը կը բնակինք: Մեր տունը ընդարձակ պարտէզ մը ունի որուն մէջ զանազան տունկեր, թուփեր և ծառեր կան: Մայրս բոլորն ալ բաժնած է մեր մէջ: Սիսակին տուած է նշենիները, Արամին՝ կեռասնիները, Հարմային վարդենիները: Ալիս առած է սալորենիները, Նարդիկ՝ թթենիները, իսկ ես փափաքած եմ ունենալ ելակի և մանուշակի ածուները: Ամէնքս ալ կը խնամենք մեր ծառերն ու ծաղիկները, որոնց մէկ մասը Միջերկրականի կղզիներէն բերուած են: Ամէն առտու կը ջրենք, կը մաքրենք զանոնք, կը նետենք խամրած թերթերը, կը զատենք թրթուրները, ճճիները, և ամէն տարի կը պատուաստենք անոնց ճիւղերը, կը փոխենք կը նորոգենք հողը, որպէս զի հետզհետէ զարգանան ու պտղաբերին մեր բոյսերը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

53. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ՝ գրաւոր.

1. Դուք ո՞ր կը բնակիք: — 2. Ի՞նչ կայ ձեր պարտէզին մէջ: — 3. Մայրդ ի՞նչ տուած է Սիսակին: — 4. Նարդիկին: — 5. Վարդենիները որո՞ւ տուած է: — 6. Ալիս ի՞նչ առած է: — 7. Արամ: — 8. Դուն ի՞նչ փափաքած ես ունենալու: — 9. Ի՞նչ խնամք կը տանիք այդ ծառերուն և ծաղիկներուն: — 10. Ինչո՞ւ այդքան խնամք կը տանիք:

54. Սորվիլ հետեւեալ քառերը.

Տունկ, նշենի, կեռասնի, վարդենի, մանուշակ, ածու, խամրած, թրթուր, ճճի, կը պատուաստենք, զարգանան, թուփ:

55. Սորվիլ վերի Ընթերցուածին ուղղագրութիւնը:

Թ. ԴԱՍ. — ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

19. Գոյական անունը երկու տեսակ է. յատուկ և հասարակ:

20. Յատուկ անունը մասնաւոր անձի մը կամ իրի մը կը արուի զայն իր նմաններէն զանազանելու համար: Յատուկ են մարդոց, ընտանիքներու, քաղաքներու, ծովերու անունները, ինչպէս. Արշակ, Պոլիս, Վոսիոր:

21. Հասարակ են այն անունները որոնք միեւնոյն տեսակէն ամէն անձելու կամ իրերու կրնան արուիլ, ինչպէս. աշակերտ, ֆաղաֆ, դպրոց, ծով:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

56. Օրինակել վերի Ընթերցուածը եւ ստորագծել յատուկ անունները:

57. Գրկին օրինակել եւ ստորագծել հասարակ անունները:

58. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղական	Հայր
Սեռական	Հօր
Բացառական	Հօրմէ
Գործիական	Հօրմով

59. Այսպէս հոլովել.

Մայր, եղբայր, կ'ըքամայր, մօրեղբայր, հօրեղբայր, սանահայր, սանամայր:

60. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ.	Ներ	Քոյր	Կին
Սեռ.	Ներ ոջ	Քր ոջ	Կն ոջ
Բաց.	Ներ ոջմէ	Քր ոջմէ	Կն ոջմէ
Գործ.	Ներ ոջմով	Քր ոջմով	Կն ոջմով

Ժ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՃՆՃՂՈՒԿԸ

Ճնճղուկ մը ազարակի մը պատին վրայ բոյն դրեր էր: Ազարակին հաւերուն կը նայէր, և անոնց զուարթ ու անփոյթ կեանքը իր դժբախտ վիճակին հետ բաղդատելով, սաստիկ կը նախանձէր: Ձմեռուան ձիւնին ցուրտին, ինք բոյս մը, հատիկ մը չէր գտներ ուտելու, մինչդեռ անոնք առատ կեր ունէին: Իր խեղճ թեւիկները կը մտէին, փետուրները կը թրջուէին, ոսկորներուն կը փակչէին անձրեւին տակ, մինչդեռ անոնք տաքուկ հաւնոցին թառերուն վրայ խաղաղ կը հանգչէին: Առտու մը սակայն աղմուկ մը լսեց, ու դողալով արթնցաւ քունէն: Ուշադրութեամբ դիտեց. ազարակին տէրը հաւնոցը մտաւ, մէկ քանի վառեակներ բռնեց ու գլուխնին կտրեց: Ճնճղուկը ա՛լ չգանգատեցաւ իր վիճակէն, որովհետեւ հասկցաւ թէ անոնք իրմէ աւելի դժբախտ էին: Ինք թէև անօթի՝ բայց ազատ էր:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

61. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի՝ յետոյ գրաւոր.
1. Ճնճղուկը ո՞ր բոյն դրեր էր — 2. Ինչո՞ւ կը նախանձէր ազարակին հաւերէն — 3. Առտու մը ի՞նչ պատահեցաւ իրեն — 4. Ազարակին տէրը ի՞նչ ըրաւ — 5. Ճնճղուկը ալ ինչո՞ւ չգանգատեցաւ իր վիճակէն — 6. Ինչո՞ւ ինք անոնցմէ երջանիկ էր
62. Սորվիլ հետեւեալ բառերը.
- Անփոյթ, բաղդատել, կեր, թառ, չգանգատեցաւ:
63. Սորվիլ վերի Ընթերցուածին ուղղագրութիւնը:
64. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծելեզակի անունները:

Ժ. ԴԱՍ. — ԳՈՅԱԿԱՆԻՆ ԹԻՒԻԸ

22. Թիւը երկուք է. եզակի և յոյնակի:
23. Անուն մը եզակի է, երբ մէկ առարկայ կը ցուցնէ, յոքնակի է երբ մէկէ աւելի առարկայ կը ցուցնէ:
24. Միավանկ բառ մը յոքնակի կ'ըլլայ, երբ ծայրը եր աւելցնենք, ինչպէս. հաւեր, բոյսեր, տուներ:
25. Բազմավանկ բառ մը յոքնակի կ'ըլլայ, երբ ծայրը ներ աւելցնենք, ինչպէս. փետուրներ, ազարակներ, ճնճղուկներ:
26. Անձայն Յ ու վերջացող բառերը երբ յոքնակի ընենք, պէտք է ծայրի Յ գիրը ջնջինք, ինչպէս. մեքենայ — մեքենաւեր, ծառայ — ծառաւեր:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

65. Յորնակի ընել հետեւեալ բառերը.
- Պատ, բոյն, կեանք, ձիւն, ցուրտ, հատիկ, առտու, թեւ, հաւնոց, թառ, տէր, վիճակ, անձրեւ, բոյս, կեր:
66. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հորվումները.
- | | | | |
|-------|-----------|----------|----------|
| Ուղղ. | Աղջիկ | Էրիկ | Կնիկ |
| Սեռ. | Աղջի ան | Էրկ ան | Կնկ ան |
| Բաց. | Աղջիկ է | Էրիկ է | Կնիկ է |
| Գործ. | Աղջիկ ուլ | Էրիկ ուլ | Կնիկ ուլ |
67. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հորվումները.
- | | | |
|-------------|-------------|---------|
| Ուղղական | Աստուած | Սէր |
| Սեռական | Աստուած ոյ | Սիր ոյ |
| Բացառական | Աստուած մէ | Սէր է |
| Գործ յաւկա՛ | Աստուած ուլ | Սիր ուլ |

ԺԱ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՆԿԱՐՉԻ ԱՇԽԱՏԱՆՈՅ ՄԸ

Այցելած էք երբեք նկարչի մը աշխատանոցը: Ես երէկ գացի Պ. Գեղամյն տունը որ ընկերներէս մէկուն եղբայրն է: Ինք անձամբ տարաւ զիս ընդարձակ սրահ մը որ ձեղունին վրայ բացուած պատուհաններէ լոյս կ'առնէ: Ամէն կողմ խառն ի խուռն դրուած էին արձաններ, շրջանակով կամ առանց շրջանակի պատկերներ. կիսաւարտ նկար մը՝ այստեղ, ճակատէն գծուած դէմք մը՝ այնտեղ, բազուկի մը մէկ մասը գունամատիտով, ձեռքի մը մատերը իւզանկար, ծաղիկներէ կազմուած փունջ մը ջրաներկ, արևորութեան տեսարան մը, կողովէ մը թափած ելակներ, լացող տղու մը դէմքին ծամածուծութիւնը: Ասոնցմէ զատ, զգեստներ, փետուրներ, զէնքեր, տուփերով ներկեր, պատկերակախներու վրայ կտաւներ, սեղանի մը վրայ գունապնակներ, վրձիններ: Հրացած մնացի այս տեսարանին առջև: Ինչ զուարճալի արուեստ պէտք է ըլլայ նկարչութիւնը:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

68. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ՝ գրաւոր.

- 1. Ո՞վ է Պ. Գեղամս — 2. Ո՞ւր տարաւ գձեզ — 3. Սրահը ո՞րկէ լոյս կ'առնէր — 4. Գունամատիտով ի՞նչ գծուած կար — 5. Իւզանկար — 6. Ջրաներկ — 7. Կտաւները ո՞ր դրուած էին — 8. Սեղանի մը վրայ ի՞նչ տեսար — 9. Ի՞նչ զգացիր այս տեսարանին առջև — 10. Ի՞նչ մտածեցիր:

69. Սորվիլ հետեւեալ րաւերը.

Գունամատիտ, իւզանկար, ջրաներկ, պատկերակալ, կտաւ, գունապնակ:

ԺԱ. ԴԱՍ. — ՀՈՒՈՎՆԵՐ

27. Անունի մը վերջաւորութեան փոխուելուն հոդովում կ'ըսուի:

28. Հորովը վեց է. ուղղական և հայցական, սեռական և սրական, բացառական, գործիական:

29. Հորովման ընդհանուր կանոնն է եզակիի մէջ՝ ի, է, ոյ. իսկ յոքնակիի մէջ՝ եր, երու, երե, երով կամ ներ, ներու, ներե, ներով: Տե՛ս տուի, պսակեր:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

70. Որոշել այս Ընթերցուածին բոլոր հոլովումները եւ զատ զատ սիւեակներու մէջ գրել.

ՕՐԻՆԱԿ. — Ուղղ. Հայց. Սեռ. Տրկ. Բաց. Գործ.
Սրահ Զեղուն ին Պատուհան ԳՆԵՒ Երկ Երկ երով

71. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ. Հայց.	Տուփ	Տուփ եր	Պատկեր	Պատկեր ԳՆԵՐ
Սեռ. Տրկ.	Տուփ ի	Տուփ երու	Պատկեր ի	Պատկեր ԳՆԵՐԱ
Բաց.	Տուփ է	Տուփ երէ	Պատկեր է	Պատկեր ԳՆԵՒԷ
Գործ.	Տուփ ոյ	Տուփ երով	Պատկեր ոյ	Պատկեր ԳՆԵՐՈՎ


72. Սորվիլ Ընթերցուածին ուղղագրութիւնը:

9. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԲԱՐԵՆԱՄՈՒԹԻՒՆԸ

Երկրի մէջ ամէն իր Ծառն ունի զայարին.
Ունի մաս արևէն. Մեղուն՝ մեղր անուշիկ.
Փուշն ունի վարդ կարմիր, Հոսող ջուրն՝ իր հծծիւն.
Եւ գիշերն՝ այգն իրեն: Եւ շիրիմն՝ իր երկինք:
Էն տուաւ խոտ մարգին, Լաւագոյն կեղրոնի
Դաշտերուն՝ հունձք բեղուն. Իրերն հոս կը ձգտին.
Եւ օլին՝ գոռ արծուին, Ծաղկին պէտք ծիլն ունի,
Մացառներ՝ բոյներուն: Եւ սիրտն ալ՝ մտերմին:



Հերմինե աղբաս գործաւորուհի մըն էր որ իր աշխատութեամբ
ընտանիքը կ'ապրեցնէր (տե՛ս էջ 38) :



Մանէ՛, մանէ՛, հախարակ
Նսիմբ բանէ՛, հախարակ
(տե՛ս էջ 39) :

ԺԲ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ԱՂԿԱՑ ԳՈՐԾԱԽՈՐՈՒՀԻ

Հերմիանէ աղքատ գործաւորունի մըն էր որ իր աշխատութեամբ ընտանիքը կ'ապրեցնէր, իր հօրը մօրը ծերութիւնը կը խնամէր, և քրոջը դաստիարակութեան հոգ կը տանէր: Առտուընէ մինչև իրիկուն չարաչար յոգնութենէ ետքը, շատ անգամ կ'ատիպուէր գիշերուան քունն ալ գոհել, և այս անվերջանալի զբաղման արդիւնքը հազիւ կը բաւէր տանը անհատնում պէտքերուն: Չմեռուան մէջ, գիշեր մը, երբ լամպարին լոյսին տակ կը ջանար աւարտել շրջազգեստ մը, հալուէն սաստկութենէն պատուհանը բացուեցաւ, լամպարը շրջեցաւ, և զգեստին թեզանիքներէն մէկը այրեցաւ: Խեղճ աղջիկը յուսահատութեան մէջ ինկաւ, և լացաւ. ինչպէ՞ս պիտի համարձակէր ներկայանալ զգեստին տէրոջը: Սակայն յիշեալ տիկինը բարեկիրթ և ազնիւ սրտի տէր ըլլալով, փոխանակ յանդիմանելու, մխիթարեց զինքը, և զբամական նուէր մըն ալ տուաւ անոր կրած յուզման և անձկութեան փոխարէն:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

73. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի, յետոյ՝ գրաւոր.

1. Ո՞վ էր Հերմիանէ. — 2. Իր աշխատութեամբ ի՞նչ կ'ընէր. — 3. Յորեկը կ'աշխատէր թէ՛ գիշերը. — 4. Չմեռ գիշեր մը ի՞նչ պատահեցաւ.
5. Հերմիանէ ի՞նչ ըրաւ. — 6. Զգեստին տէրը ի՞նչ տեսակ կ'իյն էր. — 7. Ի՞նչ ըրաւ Հերմիանէին.

74. Սորվիլ հետեւեալ բառերը.

Լամպար, շրջեցաւ, թեզանիք, շրջազգեստ, յուզում, անձկութիւն:

ԺԲ. ԴԱՍ. — ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐՈՒՆ ԶԵՒԵՐԸ

30. Ընդհանուր օրէնքէն տարբեր կերպով կը հողովուին.
31. Ուրիւն վերջացող բառերը. աշխատքիւն, աշխատքեան, եւայլն:
32. Ուն վերջացող բառերը. զբաղում, զբաղեան, եւն.:
33. Ժանևանակ ցուցնող բառերը. գիշեր, գիշերուան, եւն.:
34. Կարգ մը միավանկ բառեր. ծով, ծովու, եւն.:
35. Ազգականութեան կապ ցուցնող բառերը. հայր, հօր, եւայլն:
35. Ատոնցմէ զատ կան նաև կարգ մը բառեր որոնց հողովումը զարտուղի է, ինչպէս. Աստուած, տղայ, սեր, եւն.:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

75. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել անոր մէջ զարտուղի հողովում բառերը:
 76. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
 77. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հողովումները.
- | | | |
|-------------|-----------------------------------|---------------------------|
| Ուղղ. Հայց. | Աշխատութիւններ | Զբաղումներ |
| Սեռ. Տրկ. | Աշխատութեանց կամ Աշխատութիւններու | Զբաղմանց կամ Զբաղումներու |
| Բաց. Գործ. | Աշխատութիւններէ | Զբաղումներէ |
| | Աշխատութիւններով | Զբաղումներով |

10. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԳՈՐԾԱԽՈՐՈՒՀԻՆ ԵՐԳԸ

Մանէ, մանէ, ճախարակ, Նստիւր, բանէ, ճախարակ, Անտերին տէր ճախարակ, Որբերուն հար ճախարակ, Լուսնակ ծագեր է վերէն, Աչքս լուսեր է նորէն, Լուսին լոյսով մանեմ ես.	ձերմակ ոստեր շինեմ ես: Աղքատ օրով ու լացով, Որբեր պահեմ մանածով: Մանէ, մանէ, ճախարակ, Նստիւր բանէ, ճախարակ, Անտերին տէր ճախարակ, Որբերուն հար ճախարակ:
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

ԳԳ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԱՐԵՒԻՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

Լուսմայրիկը իր աղջիկն ու տղան զրկեց որ երթան աշխարհքը լուսաւորեն փոխն ի փոխ. մէկը՝ ցորեկը, միւսը՝ գիշերը: Աղջկանը անունը Արեւ էր. տղունը՝ Լուսին: «— Քուրիկ, ես ցորեկը կ'երթամ, դուն ալ՝ գիշերը,» ըսաւ չարածճի Լուսինը: «— Չէ, ես աղջիկ եմ. ես գիշերը կը վախնամ,» առարկեց Արեւը: Եւ քոյր եղբայր վէճի բռնուելով, իրենց մօրը դիմեցին որ խմոր կը չաղուէր: «— Դուն գիշերը պտըտէ՛, Լուսին, ըսաւ մայրը, քոյրդ չղջիկէն և բուէն կը վախնայ:» Բայց Լուսինը հակառակեցաւ և չուզեց հնազանդիլ: Այն ատեն մայրիկը դայրացած, խմորին մէջէն ձեռքը հանելով, սպտակ մը տուաւ մանչուն, որ խմորտ դէմքով ելաւ գործին գնաց: Սակայն Արեւը նորէն սկսաւ նազիլ. «— Մայրիկ, ես ցորեկը կ'ամչնամ, ամէնքը երեսս կը նային:» Լուսմայրիկը ափ մը ասեղ տուաւ իր աղջկանը ու ըսաւ. «— Ով որ երեսդ նայի, աչքերը ծակծկէ այս ասեղներով:» Այն օրէն ի վեր, Լուսինը խմորէն ձերմկած երեսով կը չըջի գիշերը, իսկ Արեւը ցորեկը դուրս կ'ելլէ տունէն, և երեսը նայողին աչքերը կը ծակծկէ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

88. Պատասխանել հետեւեալ հարցումներուն.
1. Լուսմայրիկը ո՞ր զրկեց Արեւն ու Լուսինը — 2. Լուսինը ի՞նչ ըսաւ իր քրոջը — 3. Արեւը ի՞նչ պատասխանեց — 4. Երբ իրենց մօր դիմեցին, ի՞նչ ըսաւ — 5. Տղան հնազանդեցա՞ւ — 6. Մայրը ի՞նչ ըրաւ տղուն — 7. Արեւուն ի՞նչ տուաւ մայրիկը որպէս զի երեսը մարդ չնայի — 8. Լուսինը ի՞նչպէս և երբ կը պտըտի — 9. Իսկ Արեւը ի՞նչ կ'ընէ:

ԳԳ. ԴԱՍ. — ԹՕԴ

36. Երկու տեսակ յօդ կայ. Որոշից և անորոշ:
37. Որոշից յօդ կը կոչուին ը և ն գիրերը որոնք անուններուն վրայ կը դրուին որոշ իմաստ մը տալու համար անոնց:
38. Ը կը դրուի այն բառերուն ծայրը որոնց վերջին գիրը բաղաձայն է, ինչպէս. Լուսնայրիկ, շուսնայրիկ:
39. Ն կը դրուի այն բառերուն ծայրը որոնց վերջին գիրը ձայնաւոր է, ինչպէս. Բու, բուն:
40. Ն յօդը կը դրուի նաև ու, ալ, է, և այլն բառերէն առաջ:
41. Անձայն յով վերջացող բառերուն յն կը ջնջուի յօդ դնելէ առաջ, ինչպէս. Տղայ, տղան:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

89. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել որոշիչ յօդերը.
90. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
91. Պէտք եղած յօդերը դնել հետեւեալ գոյականներուն ծայրը.
Գաւաթ, նշնի, շուն, կատու, գիտութիւն, մայր ալ, տղայ, աղջիկ, ծով ու ցամաք, գորգ, իր պատկեր է, ենթակայ, մեր տուներ ալ, հարս ու փեսայ, ամառ ալ, այս ձեր այգի է, աղջիկ ու տղայ, փոստուայ, Թիթեռնիկ ու մեղու, այդ մեր սպասաւոր է, առարկայ, ժողովուրդ ալ, շուն ու կատու, գորգ ալ, մայր, պատկեր, ծով, այս իր գաւաթ է, Թիթեռնիկ, իշխան ու ծառայ:
92. Սորվիլ հետեւեալ բառերը.
Մոլորակ, արբանակ, գիսաւոր, համաստեղութիւն, ասուպ:

ԺԴ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ԼԱԻՍԳՈՅՆ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

Կարեւոր վաճառատան մը համար պաշտօնեայ մը կը փնտռուէր: Չանազան վարժարաններէ չըջանաւարտ պատանիներ վկայականներով ու յանձնարականներով ներկայացան. բայց տէրը անոնց ոչ մէկուն հաւանեցաւ, և ընտրեց տղայ մը որ լրագրի մը մէջ իր ազգը կարդալով, համարձակեր էր ինքնիրեն ներկայանալ: Երբ հարցուցին վաճառականին թէ ինչ էր պատճառը որ նախընտրութիւն կու տար այդ տղան որ յանձնարարական մը իսկ չունէր, պատասխանեց. «Անիկա սքանչելի յանձնարարական մը ունի. չդիտեցի՞ք թէ ներս մտած ատեն ինչպէս ոտքերը մաքրեց և դուռը ինչ զգուշութեամբ գոցեց իր ետեւէն: Ասիկա մաքրասիրութեան և կարգապահութեան նշան մըն էր: Յետոյ իր աթոռէն ելաւ ու զայն տաւաւ ձերուսի նամակաբերին որ ոտքի վրայ կ'սպասէր: Այս ալ բարեսրտութեան ապացոյց մըն էր: Ուշադրութիւն չըրի՞ք որ զետնէն վերցուց գիրք մը զոր դիտմամբ ձգեր էի, ու հանդարտ սպասեց որ կարգը իրեն գայ ինձի մօտենալու: Ատոնք ալ արթնութեան և բարեկրթութեան նշաններ են. ու այս յատկութիւնները բարձր յանձնարարականներէ աւելի կ'արժեն տղու մը համար:»

Հ Ի Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

93. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի, յետոյ գրաւոր.
1. Վաճառատան մը համար ինչ կը փնտռուէր: — 2. Որո՞նք ներկայացան: — 3. Վաճառատան տէրը զո՞վ ընտրեց: — 4. Երբ այդ ընտրութեան պատճառը հարցուցին, ինչ պատասխանեց: — 5. Ինչպէ՞ս հասկցեր էր անոր մաքրասէր և կարգապահ ըլլալը: — 6. Բարեսիրտ ըլլալը, — 7. Արթուն և բարեկիրթ ըլլալը:

ԺԴ. ԴԱՍ

42. Անորոշ յօդն է մը կամ մըն:
43. Մը կը գործածուի ամէն անորոշ գոյականի քով, ինչպէս. Պաշտօնեայ մը (ով ըլլալը չենք գիտեր):
44. Մըն կը գործածուի միւսնոյն պարագային ըլլալ բային սահմանական ներկայէն, անկատարէն և ալ բառէն առաջ, ինչպէս. Ասիկա ապացոյց մըն է, որո՞ք ուսանող մըն էի, և այլն:

Հ Ի Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

94. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել անորոշ յօդերը եւ գոյականները:
95. Բերանացի ըսել թէ այդ յօդերը ո՞ր անուններուն կը պատկանին:
96. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
97. Սորվիլ հետեւեալ բառերը.
Պատանի, յանձնարարական, վաճառատուն, նախընտրութիւն, ապացոյց:
98. Անորոշ յօդեր դնել հետեւեալ գոյականներուն վրայ.
Քահանայ . . . եկաւ Աշակերտ . . . ալ աւելցաւ Գոյր . . .
ալ ունեցայ Գիրք . . . բերի Բարի տղայ . . . ես դուն Հօրաբոյր
. . . ունիմ Դեռ պզտիկ աղջիկ . . . է ան Լամպար . . . վառէ:
Եղբայրս մրցանակ . . . ստացաւ Պատիժ . . . էր աս:

11. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾՈՒՆԵՆ ԵՒ ԲՈՅՔ

Ծուխը կ'ըսէր բոցին, իր մօր լուսավառ.
— Մայրիկ, ըսէ, ինչ է աս
Որ քեզմէ կեանք առի, բայց միշտ եմ խաւար.
— Մինչ դուն այդպէս կը շողաս
— Ազգիկս, ըսաւ բոցն անոր,
Անուր բան չէ, ոչ ալ նոր.
Եւ դուն ալ փաստ մ'ես հիմակ
Թէ մարդ միայն անձին լոյսովն է փայլուն.
Բուական չէ որ աղղաբ
Ծընին հօրմէ մեծանուն:

ԺԵ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՈՒՆԵՑԱԾԷՆ ԳՈՂ ԸԼԼԱՍԼ

Մարդ մը միշտ իր վիճակին խեղճութենէն կը գանգատէր, և ուրիշներուն ունեցածէն կը նախանձէր: Հարուստի մը ապարանքը տեսնելով, չքեղ կառքի մը հանգիւղելով, դրամատէրի մը հարստութեան վրայ խօսուիլը լսելով, գոհավաճառի մը ցուցափեղկը դիտելով, կը գոչէր. «Աստուած ուրիշներուն ամէն բան տուած է. իսկ ինձի՝ ոչինչ:»

Այս մարդուն կինը որ խելացի և լուրջ էր, օր մը ըսաւ անոր. «Եթէ սա իշխանին ապարանքը քեզի տան, կը թող՞ուս որ ձախ թեւդ կտրեն: — Ո՛չ, պատասխանեց ամուսինը: — Եթէ գոհարավաճառը իր բոլոր խանութին ապրանքները քեզի նուիրէ, կը հաւանի՞ս որ աջ ձեռքդ միայն կտրէ: — Ամենեւին: — Իսկ սասը հազար ոսկիի փոխարէն՝ երկու աչքդ չի՞ս տար: — Երբե՛ք, երբե՛ք, պոռաց մարդուկը սարսափած: — Կը տեսնես թէ, ըսաւ կինը, դուն ալ արժէքաւոր բաներ ունիս՝ զորս չես ուզեր փոխանակել այնքան թանկագին բաներու հետ. ինչո՞ւ ուրեմն անոնց յարգը չես գիտեր ու կը գանգատիս:»

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

99. Պապասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Մարդը ինչ բանէ կը գանգատէր և կը նախանձէր: — 2. Ուրիշներուն բարիքները տեսնելով. ինչ կ'ըսէր: — 3. Կինը ինչ ըսաւ: — 4. Ամուսինը հաւնեցանաւ: — 5. Ուրիշ ինչ հարցուց կինը: — 6. Ի՞նչ պատասխանեց կինը: — 7. Իսկ կնոջը երբորդ հարցումին ինչ պատասխանեց: — 8. Այն ատեն կինը ինչ ըսաւ:

100. Սորվիլ հետեւեալ բառերը.

Ապարանք, շքեղ, գոհարավաճառ, ցուցափեղկ, լուրջ, փոխանակել:

ԺԵ. ԴԱՍ. — ՅԱՏԿԱԳՈՒՅԻՉ ԵՒ ՅԱՏԿԱԳԵԱՂ

45. Յատկացուցիչ կը կոչուի այն անունը որ բանի մը որուն ըլլալը, կը ցուցնէ, ինչպէս. իշխանին ապարանքը:

46. Յատկացուցիչին վերաբերող անունը յատկացեալ կը կոչուի, ինչպէս. իշխանին ապարանքը:

47. Յատկացուցիչը սեռական հոլով կ'ըլլայ:

48. Յատկացուցիչը որո՞ւն հարցման կը պատասխանէ և յատկացեալէն առաջ կը դրուի, ինչպէս. Որո՞ւն ապարանքը. — իշխանին ապարանքը:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

101. Օրինակել վերի Ընթերցուածը եւ ստորագծել յատկացուցիչները:
102. Կրկին օրինակել եւ ստորագծել յատկացեալները:
103. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը.
104. Մէյմէկ յատկացուցիչ գտնել հետեւեալ յատկացեալներուն յարմար.

Դուռը, սպակին, ծայրը, կոծը, տերեւը, ճիւղը, դեկը, անիւը, շրջանակը, զօտին, ալիքը, բանալին, վանդակը, ակոսն, սփռոցը, կօշիկը, տետրակը, ծամիկները, հաւկիճը, փետուրը, պոչը:

12. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԿԱՐՈՒԱԿՆ ՈՒ ՄԵՆՍԱՏՈՒՆԸ

Կարուակ մը կար ատենօք Որ թէև խեղճ, չըբաւոր, Կ'երգէր զըւարձ և անհոգ Աշխատելով ամէն օր:

Դրացի մ'ունէր մեծատուն Որ շըբեղ կեանք կը վարէր. Բայց ոչ հանգիստ և ոչ բուն Ունէր ցորեկն ու գիշեր:

Աւտըւան դէմ էրը նիրհէր, Կարուակն ելած էր արդէն, Եւ իր երգով, անվեհեր՝ Կ'արձնցընէր զայն բունէն:

Հարուստն ըսաւ օր մ'անոր՝ «Կ'ուզեմ, չըլլաս դուն Յշուառ. Ա՛ռ քեզ ոսկի բիւրաւոր, Ու աղօթէ ինձ համար:»

(Շարունակելի)

Ամպը ունի չորս զաւակ. երկուքը՝ մանչ, երկուքը՝ աղջիկ: Անդրանիկ մանչը քիչ մը խնդուկ է. կը վազէ, կը վազէ, կ'երթայ գետերուն մէջ կը թափի, զանոնք կ'ուռեցնէ, եղերքներէն դուրս կը վանէ. սակայն բարի է, ծարաւ ծաղիկները կը զովացնէ, ծառերուն փոշոտ տերեւները կը մաքրէ, ցամքած հողը կը ջրէ: Մեծ քոյրը ճերմակ աղջիկ մըն է. երբ սաստիկ ցուրտերը սկսին, մէջտեղ կ'ընէ, իր բամպակէ սպիտակ քօլը կը սփռէ դաշտերուն երեսը, որպէս զի չմսին փոքրիկ սերմերը հողին տակ: Երկրորդ եղբայրնին աղմկայոյզ անզուսպ մանչ մըն է որ մեծ ժխոր կը հանէ, և ամէն բան կը կոտորէ կը թափէ. պատուհանները կը խորտակէ, արտերը կը փճացնէ: Ամէնէն անուշիկը փոքրիկ քոյրերնին է, քնքուշ աղջիկ մը որ գարնան՝ ծաղիկներուն ճակատը փայլուն աղամանդներով կը զարդարէ, իսկ ձմեռը՝ մեր պատուհաններուն վրայ ճերմակ մատիտով հիանալի պատկերներ կը պծէ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 105. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Ամպը բանի՞ զաւակ ունի — 2. Անդրանիկ մանչը ինչպէ՞ս էր —
 3. Ի՞նչ կ'ընէ. — 4. Մեծ քոյրը ի՞նչ կ'ընէ. — 5. Երկրորդ եղբայրը ի՞նչ կ'ընէ. — 6. Փոքրիկ քոյրերնին ի՞նչ կ'ընէ. — 7. Կրնա՞ք բնիկ ասոնց անունները:
- 106. Սորվիլ հետեւեալ բառերը.

Կը վանէ, կը սփռէ, սերմ, աղմկայոյզ, անզուսպ, ժխոր, կը խորտակէ, կը փճացնէ, քնքուշ, հիանալի:
- 107. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

49. Ածականը բառ մըն է որ անունէ մը առաջ կը գրուի, և անոր մէկ յասկութիւնը կը ցուցնէ, ինչպէս. Ծարաւ ծաղիկ, ճերմակ աղջիկ:

50. Ածականները ոչ թիւ ունին և ոչ՝ հոլով. անուններու հետ կը գործածուին և անկոյտիս կը մնան:

51. Որակական ածականը անունի մը ինչպէս ըլլալը կը ցուցնէ, և իճնչպէս հարցման կը պատասխանէ. Մախռո, զգեղ, պզտիկ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 108. Օրինակել այս ընթերցուածը եւ ստորագծել որակական ածականները:
- 109. Օրինակել հետեւեալները, ստորագծելով անունները.

Փոքրիկ տղան, կապոյտ երկինք, սեւ ամպեր, անկեղծ բարեկամը, պարարտ կովերը, հնազանդ աշակերտը, աղուոր խնձոր մը, յստակ ջուր, սուր դանակը:
- 110. Հետեւեալ անուններուն զոյնը ցոյց տուող ածականներ գտնել.

Ածուխ, կաւիճ, գինի, նարինջ, խոտ, ծով, խնձոր, գրատախտակ, սեր, նուռ, մարգրիտ, շուշան, տերեւ:
- 111. Ըսէ՛ք ծիածանին եօթը զոյները:

12. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԿԱՐՈՒԱԿՆ ՈՒ ՄԵԾԱՑՈՒՆԸ

(Շարունակութիւն)

Կարուակն առաւ երբ ուկին,
Ա՛լ աշխարհք իրն էր կարծես.
Բայց այդ գանձով Սանկագին
Հոգն ալ մըտաւ տունէն ներս:
Դադրեցաւ ձայնն իր երգին,
Ի՞նչն ալ փախաւ աչքերէն,

Տանջանքն եղաւ իր բաժին
Թաղաղ կեանքին փոխարէն:
Օր մ'ալ զընաց հարուստին
Որ ալ հանգիստ էր առտուն.
«Ա՛ռ ոսկիներդ, բաւա, սին.
«Տուր բունն ու երգս ինձի դուն»

Մոցարդ որ գերմանացի հոչակաւոր երգահան մըն է, որ մը հիւր կ'երթայ իր ծանօթներէն մէկուն: Այդ տանը մէջ տասերեք տարեկան աղջիկ մը կար որ հիանալի դաշնակ կը նուագէր: Մեծ երգահանը քաջալերեց այդ դեռատի երաժիշտը: Այն ատեն փոքրիկ աղջիկը հարցուց վարպետին. «Շատ կը փափաքիմ եղանակ մը հնարել և ձայնագրել. ըսէ՛ք ինձի թէ ինչպէս ընեմ: — Դեռ շատ փոքր էք այդ գործին համար. սպասեցէ՛ք քիչ մը, պտտասխանեց արուեստագէտը: — Բայց դուք ալ շատ կանուխ սխաժ էք հեղինակել, առարկեց տղեկը. ես կարգացած եմ ձեր կենսագրութեան մէջ թէ մանուկ էք եղեր երբ գրեր էք ձեր թատրերգութիւններէն մէկ քանին: — Ճիշդ է, պատասխանեց Մոցարդ, բայց այդ խաղերը գրած ատենս, ես ուրիշին չէի հարցնէր: Այն տղան որ տաղանդ ունի, ինքզինքը կը շարչարէ, կը հնարէ, կը գրէ, առանց ուրիշին հարցնելու թէ ինչպէս ընէ:»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

112. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Ո՞վ է Մոցարդ: — 2. Ո՞ւր կ'երթայ: — 3. Այդ տանը աղջիկը քանի տարեկան էր և ի՞նչ կ'ընէր: — 4. Ի՞նչ հարցուց վարպետին: — 5. Ի՞նչ պատասխանեց արուեստագէտը: — 6. Ի՞նչ առակեց տղեկը: — 7. Ի՞նչ պատասխանեց Մոցարդ:
 113. Սորվիլ հետեւեալ բառերը.
 Յրգահան, քաջալերել, երաժիշտ, վարպետ, հնարել, ձայնագրել, արուեստագէտ, հեղինակել, առարկել, կենսագրութիւն, տաղանդ, ծափերգութիւն:


52. Յուցական ածականները ցոյց կուտան այն անունները որոնց վրայ կը խօսուի:
 53. Յուցական ածականներն են՝ այս, աս, սա, այդ, աք, այն, ան:
 54. Այս կը գործածուի մեղի ամէնէն մօտ առարկային համար, այդ՝ քիչ մը հեռու եզոյին, այն՝ աւելի հեռու եզոյին:
 55. Յուցական ածականէն ետքը եկող գոյականը և կամ ը յօդը կ'առնէ, ինչպէս. Այս մարդը, այդ կատուն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

114. Օրինակել այս ընթերցումը, եւ ստորագծել Յուցական ածականները:
 115. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը:
 116. Յարմար գոյականներ դնել հետեւեալ ածականներուն քով.
 ձերմակ, անուշ, դեղին, կարմիր, ոսկեգօծ, բարակ, երկար, խոշոր, կլոր, քառակուսի, կարծ, հուժ, չոր, սուր, տափակ, ցուրտ, տաք:

13. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԵԹԷ . . .

եթէ հով ըլլայի	եթէ ձիւն ըլլայի
եւ տային ինձ Պեւեր,	կակուղ զիրգ ու ճերմակ,
ես ինչու երթայի,	Աղքատին կու տայի
Կոճեկ դաշտն ու ծովեր	Բամպակէ մեծ վերմակ:
եթէ ամպ ըլլայի	եթէ ցօղ ըլլայի,
ինձ տրբուէր ջուր առատ,	Ինքն ծաղկին անժըպիտ
Չոր արտին կու տայի	կու տայի լիուլի
Իմ անձրեւս ազամանդ:	Իմ շաղէս մարզըլիտ:



Մոցարդ Կերմանացի հոշակաւոր երգահան մըն է (տե՛ս էջ 48)



Աւնան մէջ, որ մը Այիսին մայրը զինքը զիւր սարաւ (տե՛ս էջ 64)

ԺԸ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՍՍԻԳՆԵՐՆ ՈՒ ՇԵՐԱՍԳ

Սարգերը օր մը ըսին չերամին. «Քու յոգնութիւնդ մեծ է, ու աշխատանքդ՝ երկար: Որքան կը պտըտիս բժոժիդ մէջ, որքան կը դառնաս, և սակայն այնքան դանգազ ես որ օրերով շարախներով չես կրնար քու չնչին գործդ աւարտել: Մինչդեռ մենք երկու վայրկեանի մէջ մեր լայն ոստայնները կը հիւսենք: Ի դուր մարդիկ մեզի դէմ կը մաքառին իրենց աւերիչ գործիքներով. մենք շարունակ իրենց սուները, պալատները, պարտեզներն ու անտառները կը պաշարենք մեր ցանցերով: Շերամը պատասխանեց. «— Իրաւ ձեր գործելու եղանակը արագ է, բայց ձեր գործը անօգուտ և զգուելի: Ամէն մարդ ձեր ոստայնը կ'աւլէ կը նետէ, իսկ մեր մետաքսին համար ոսկիներ կը վճարէ: Մեր թելերէն շինուած շղարշներով է որ վայելչասէր տիկիները կը հագուին և կը վարդարեն իրենց սրահները:»

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

117. Պատասխանել հետեւեալ հարցումներուն ըերանացի եւ գրաւոր.
1. Սարդը միջոտ է թէ թիթեռնիկ: — 2. Սարդը հըր տեսած է ք: — 3. Սարդը իր ցանցերով հր տեղերը կը պաշարէ: — 4. Շերամը հրդ է թէ թիթեռնիկ: — 5. Շերամին շինած թելերը ինչ կը կոչուին: — 6. Ո՞ր վետաբանը կը հագնի: — 7. Մետաքսեղէն ինչ կերպասի անուներ գիտէր:

118. Սորվիլ հետեւեալ բառերը.
Սարդ, շերամ, բժոժ, կը մաքառին, ցանց, կը պաշարենք, զգուելի, ոստայն, շղարշ, վայելչասէր, սրահ:

ԺԸ. ԴԱՍ. — ՍՏԱՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

56. Ստացական ածականները բանի մը որուն ըլլալը կը ցուցնեն:

57. Ստացական ածականներն են.

Եզակի

Յոֆնակի

խլ, ֆու, իր

մեր, ձեր, իրենց

58. Ստացական ածականին վերաբերող գոյականները իրենց վերջը ա, դ, և կամ ը գիրքը կ'առնեն, ինչպէս. իմ գլխարկս, ֆու հովանոցդ, իր ձեռնոցը, մեր, ձեր, իրենց գիրքեր:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 119. Օրինակել այս ընթերցուածը, եւ ստորագծել ստացական ածականները:
- 120. Բերանացի ըսել այս ընթերցուածին բոլոր գոյականները:
- 121. Սորվիլ այս ընթերցուածին ուղղագրութիւնը:
- 122. Յարմար ստացական ածականներ դնել կէտերուն տեղի:
Մարիամ. . բարեկամոհիս այցելութեան եկաւ ինծի. . Լեւոն եղբօրը հետ. . մայրն ալ մէկտեղ էր: Մէկը. . մասնոցը և ստեղծ բերք էր. . կարիս օգնելու համար. միւսն ալ. . հողերը և գնդակները. . տղոց հետ խաղալու համար: Ճաշէն ետքը, մենք ալ. . խաղախիկները մէջտեղ հանեցինք և զուարճացանք:

14. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՍՄՈՒՂ ՀԱՍԿՆ ՈՒ ՊՍԸՐՊ Տ Ա Ա Ս ՈՒ Ը

— Հասուն հասկեր երբ զըլուինին կը խոնարեն մինչեւ գետին,	— Սա տակառն ալ զոր այգեպան կը զլտորէ դէպի հնձան,
Սա մէկն ինչո՞ւ բարձր է այնքան:	Ինչո՞ւ կ'ընէ արժուկ այնչափ:
— Զի զլտուն մէջ հատեր չըլան:	— Որովհետեւ մէջն է պարապ:

ԺԹ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ԳԵՂՋԿՈՒՀԻՒՆ ԵՐԱԶԸ

Գիւղացի կին մը կողով մը հաւկիթ կը տանէր քաղաք ծախելու: Ճամբան քաղած ատեն կը խորհէր որ եթէ հաւկիթներուն ամէն մէկը եօթը փարայի ծախէր բաւական գումար մը պիտի շահէր: Դժբախտաբար հինգ հատը կոտրեցաւ: Խեղճ գեղջկուհին շատ ցաւեցաւ որովհետեւ երեսունը հինգ փարայ կորսնցուց, և ասիկա կարեւոր գումար մըն էր իրեն պէս աղքատ կնոջ մը համար: Սկսաւ երկար բարակ հաշուել, և վերջապէս գտաւ որ բնաւ կորուստ չպիտի ունենար, եթէ մնացածներէն իւրաքանչիւրը ութը փարայի ծախէր: Այդ հաւկիթներուն հատոյթովը քանի մը հատ ածան հաւ պիտի գնէր, և երկրորդ անգամ քաղաք գալուն՝ երեք անգամ աւելի դրամ պիտի շահէր: Այսպէս հետզհետէ ընդարձակելով իր ստուտուրը, էջ մը պիտի գնէր, և անոր վրայ հեծած պիտի երթեւեկէր գիւղէն քաղաք, շաբաթը երկու անգամ: Էջը լեռներէն վեր, լեռներէն վար հօ՛ք հօ՛ք պիտի վազէր ու ցատքէր: Գեղջկուհին այս գաղափարէն խանդավառուած, ինք ալ ցատքեց ու թաքը սայթաքելով ինկաւ, և բոլոր հաւկիթները կտարտեցան:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

123. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1. Գիւղացի կինը ինչ կը տանէր քաղաքի — 2. Քանի՞ պիտի ծախէր իր հաւկիթները — 3. Ճամբան ինչ պատահեցաւ — 4. Այն ատեն հաշուելով ինչ գտաւ գեղջկուհին — 5. Կրնա՞ր ըսել Թէ կողովին մէջ ամէնը բանի հատ հաւկիթ կար — 6. Անոնց դրամով ինչ պիտի գնէր — 7. Եթէ առուտուրը ընդարձակուէր ինչ պիտի գնէր — 8. Էջը ինչ պիտի ընէր — 9. Ասիկա խորհած ատեն ինչ ըրաւ և ինչ պատահեցաւ:

ԺԹ. ԴԱՍ. — ԹՈՒՍԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

60. Թուական ասական կ'ըսուին այն բառերը որոնք անունի մը ֆակի հաս կամ ֆակիտորոյ ըլլալը կը ցուցնեն, ինչպէս. մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը, և այլն: Առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութներորդ, իններորդ, տասներորդ, և այլն:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

114. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել րուական ասականները:
115. Սորվիլ հետեւեալ բառերը.
Գեղջկուհի, գումար, իւրաքանչիւր, հատոյթ, ածան, երթեւեկել, խանդավառուած, սայթաքիլ:
116. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
117. Թուական ասականներ դնել կէտերուն տեղ.
Յակոր իր տան . . . յարկը վարձու տուաւ — Ես . . . տարեկան էի երբ դպրոց մտայ — . . . տարի աշխատեցայ շրջանաւարտ ըլլալու համար — Պետրոս մեր դպրոցին . . . կարգի աշակերտներէն է: — Հաւերը ժամը . . . ին իրենց թաղը կ'ելլեն: — Տարին . . . օր է: — Ժամը . . . ին կէս օր և կէս գիշեր կ'ըլլայ:

15. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄՐՋԻՒՆԸ

Եզը դաշտէն վաստակարեկ կը դառնար
յամբարար.
Մըշին մըն ալ իր եղջիւրին ծայրն ելեր
Թառեր էր:
Երբ գիւղն հասան, ընկերները պողացին
մըջիւնին.
«Բուրբիկ մըջին, այդպէս ուրիշ կը դառնաս,
ինչ է սաւ — կը հարցնէք, ապուշներ,
չէք տեսներ.
Հողն հերկեցինք արտերուն
օրն ի բունս»

Ի. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՄԻՌՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է

Մեր ուսուցիչը, անցեալ օր, խօսեցաւ մեզի միաբանութեան առաւելութեանց վրայ. պատմեց մեզի թէ ինչ չարիքներ կրած է մեր ազգը անմիաբանութեան երեսէն. բացատրեց մեզի Միւրաքիւնը զօրութիւն և առածը, և ստիկա ապացուցանելու համար մեզի ցոյց տուաւ քանի մը բարակ ոտիկներ, ու իր առաջարկութեամբ, մեր մէջէն ամէնէն վատուժ տղան առանց ձիգի ծոնց և կտորեց անոնցմէ մէկը. յետոյ տուաւ ուրիշ սօս մը, յետոյ երրորդ մը, և դեռ շատեր. տղան հետզհետէ կտորեց միւս սօսերն ալ: Հուսկ ուրեմն, մեր ուսուցիչը բոլոր ոտիկները միացուց, իրարու կապեց, և դասարանին ամէն աշակերտները փորձեցին ու չյաջողեցան խորտակել զայն: «Միեւնոյն բանն է, ըսաւ, մարդոց մասին ալ. ամէն մէկ անհատ զատ զատ կրնայ տկարանալ, ընկճուիլ, յաղթուիլ, բայց երբ միացած են, ոչ մէկ զօրութիւն կրնայ անոնց յաղթել:»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

118. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Ի՞նչ բանի վրայ խօսեցաւ ձեր ուսուցիչը անցեալ օր: — 2. Ի՞նչ պատմեց ձեզի: — 3. Ատիկա ապացուցանելու համար ի՞նչ բերաւ: — 4. Ձեր մէջէն ամէնէն վատուժ տղան ի՞նչ ըրաւ այդ ոտիկներէն մէկը: — 5. Յետոյ ի՞նչ ըրաւ: — 6. Ետքը ձեր ուսուցիչը ի՞նչ ըրաւ: — 7. Դասարանին ամէն աշակերտները ի՞նչ ըրին: — 8. Կոյսն խորտակել այդ իրարու կապուած ոտիկները: — 9. Այն ատեն ի՞նչ ըսաւ ուսուցիչը:

119. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

Ի. ԴԱՍ. — ԱՆՈՐՈՇ ԱՒԱԿԱՆ

61. Անորոյ ածականները անոնք են որ անորոյ իմաստ մը կուտան անունին, ինչպէս. Ամեն, բոլոր, ամեն մեկ, ոչ մեկ, ուրիշ, միւս, միեւնոյն, քանի մը, առանկ, աւանկ, անանկ, այսպի, այդպի, այնպի, քանի՞, ինչպի՞ս, ո՞ր, ի՞նչ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

120. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել անորոյ ածականները:

121. Սորվիլ հետեւեալ բառերը.

Առաւելութիւն, ապացուցանել, ոտիկ, առաջարկութիւն, վատուժ, հուսկ ուրեմն, խորտակել, ընկճուիլ:

122. Անորոյ ածական դնել կէտերուն տեղ.

. . . ինձոր գտայ ծառին տակէն - Այս տղան բարի է, բայց . . . տղան չար է. . . դասերս սորվեցայ այս գիշերս. . . խօսքը շարունակ լսելը հաճելի բան չէ: Իր . . . խօսքը հարուած մըն է ինձի համար. . . կը համարձակիք դէմ խօսիլ ձեր մօրը. . . յաւակնութիւն անտանկի է:

16. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄԻՌՈՒԹԻՒՆ

Բաժիլ բաժիլ կը տեղայ ձիւն, Դաշտին վըրայ ծառեր ցանցաւ
Եւ ձիւները երբ կը հիւժին, Մորիկներէն սարսափահար,
Կ'ըսեն. «Մ'իսակ մենք ոչինչ ենք. Կ'ըսեն. «Մ'իսակ մենք ոչինչ ենք.
Երբ միանանք, դաշտ կը ծածկենք:» Երբ միանանք, անտառ ենք մենք:»

Կաժիլ կաժիլ կուգայ անձրեւ, Այսպէս կ'ըսեն ձիւն ու անձրեւ,
Շիժեր ցամքած հողին ներքեւ Այսպէս կ'ըսեն ծառ ու տերեւ,
Կ'ըսեն. «Մ'իսակ մենք ոչինչ ենք. Ու միշտ կ'երգէ աշխարհ համարուն.
Երբ միանանք, գետ կը կազմենք:» «Մ'իւնձեան մէջ է զօրութիւն:»

ԻԱ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Մենք երեք հոգի ենք մեր տանը մէջ. մայրս, եղբայրս և ես: Մայրս զաջնակի դասեր կուտայ. իսկ եղբայրս դպրոց կ'երթայ տակաւին: Ինծի կը մնայ տան մատակարարութիւնն ու խնամքը, և ես ամէն ջանք կ'ընեմ որպէս զի անոնք հանդիստ ընեն: Մայրիկս զմեզ շատ կը սիրէ և շատ երջանիկ է մեզմով. մենք այ լիտադարձաբար այնքան կը սիրենք զինքը, որ երբեք ասիթ չենք տար որ սիրտ հատցնէ մեզի համար և կշտամբանք մը ընէ մեզի. միշտ իր հրամանները կը գործադրենք, կը հնազանդինք իրեն և իր փափաքները կը կանխենք: Ուստի գոհ է մենէ: Եղբայրս ստէպ կ'ըսէ ինծի. «Անգամ մը որ չըջանաւարտ ըլլամ, ու դպրոցէն ելլեմ, ա՛յ մայրս և դուն հանդիստ պիտի ընէք. որովհետեւ ես ձեզի համար պիտի աշխատիմ, ինչպէս դուք ինձի համար կ'աշխատիք:»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

123. Պատասխանել հետեւեալ հարցումներուն ըերանացի եւ գրաւոր.

1. Քանի հոգի էք ձեր տան մէջ? — 2. Մայրդ ի՞նչ կ'ընէ? — 3. Եղբայրդ? — 4. Քեզի ի՞նչ կը մնայ? — 5. Դուն ի՞նչ բանի ջանք կ'ընես? — 6. Մայրիկդ կը սիրէ զքեզ? — 7. Դուք ի՞նչպէս կը լայտնէք ձեր սէրը ձեր մայրիկին? — 8. Եղբայրդ ի՞նչ կ'ըսէ քեզի:

124. Սորվիլ հետեւեալ բառերը.

Փոխադարձաբար, կանխել, կշտամբանք, ստէպ, մատակարարութիւն:

125. Սորվիլ այս Ընթերցողածին ուղղագրութիւնը:

ԻԱ. ԴԱՍ. — ԳԵՐԱՆՈՒՆ

- 62. Դերսմունը բառ մըն է որ գոյականի տեղ կը չբուրի զայն չկրկնելու համար, և ունի թիւ, հոլով, դեմք:
- 63. Դէմքը երեք է. առային, երկրորդ, երրորդ:
- 64. Անձնական դերանուններն են.

	Եզակի	Յոգնակի
Ա. Դեմք	Ես	Մենք
Բ. Դեմք	Դուն	Դուք
Գ. Դեմք	Ինք, Ան	Իրենք, Անոնք

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 126. Օրինակել այս հատուածը եւ ստորագծել դերանունները:
- 127. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

	Եզակի	Յոգնակի
Ուշ.	Ես	Մենք
Հայց.	Զիս	Զմեզ
Սեռ.	Իմ	Մեր
Տրակ.	Ինձ, Ինծի	Մեզ, Մեզի
Բաց.	Ինձմէ, Ինէ	Մեզմէ, Մենէ
Գործ.	Ինձմով	Մեզմով

17. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄԱՅՐԻԿԻՆ ՍԷՐԸ

Մեր Թաղին մէջ խեղճ աղբատ Օր մը, մանչը մօրն ըսաւ. Մայր մը կար շատ երջանիկ. «Իիտեմ, զիս շատ կը սիրես. Ունէր զաւակ երկու հատ. Բայց չես կրնար դուն բնաւ Մէկը մանչ, միւսն էր աղջիկ: Սիրել, ինչպէս ես զքեզ:»

Ասոնք մէկտեղ կ'ապրէին Մայրը հարցուց իր աղուն. Փայրիպելով զիրար միշտ, «—Ինչո՞ւ կ'ըսես ատանկ բան: Կապուծ սիրով կամոզին, —Երկու զաւակ ունիս դուն, Զէին ճանչնար երբեք վիշտ: Գոչեց, ես՝ մայր մը միայն:»

ԻՔ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԴՈՒՆ ԴՈՒՆ, ԲԱՆՏԻ ԱՐԹՈՒՆ

Թուականէս երեսուն տարիի չափ առաջ, Լոնտոն քաղաքին չրջականերէն՝ պառաւ կին մը կ'անցնէր, կըռնակը առած փայտի աճազին խուրձ մը, և կըքած անոր ծանրութեան ներքեւ: Ստէշը կը կենար շունչ առնելու համար, և յայտնի էր թէ այդ բնոր շատ կուզար իրեն, ու ինքը ընկճուած էր անկէ:

Նոյն պահուն երիտասարդ մը անցաւ հեծանիւով անոր քովէն արագութեամբ:

— Կեցի՛ր, կեցի՛ր, կ'աղաչեմ, գոչեց պառաւը, բնու շատ ծանր է, և ես շատ յոգնած եմ: Դուն երիտասարդ և ուժեղ ես. օգնէ՛ ինձի ասիկա մինչև տուն տանելու:

Երիտասարդը կանգ առաւ. կարեկցութեամբ նայեցաւ պառաւին ու ըսաւ: «Մամի՛կ, ես ստիպողական գործ ունիմ, չեմ կրնար քեզի օգնել, բայց սա նուէրը կուտամ քեզի. ա՛ռ, մօրս պատկերն է:»

— Խե՛նդ ես, ի՛նչ ես, ըսաւ կնիկը զայրոյթով, ես ի՛նչ ընեմ մօրդ պատկերը. ասիկա իմ բնու չի կրնար շալկել:

— Ո՛վ զիտէ. գուցէ օգտակար ըլլայ քեզի, ըսաւ ժպտելով անձանօթը, և փայլուն բան մը զբաւ պառաւին ձեռքը:

Հէգ կինը զարմանքի ճիչ մը արձակեց. բայց երբ շուրջը նայեցաւ իր երախտագիտութիւնը յայտնելու համար երիտասարդին, անիկա աներեւոյթ եղեր էր արդէն:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ը

128. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Պառաւ կինը հերկէ կ'անցնէր — 2. Ի՞նչ կը տանէր և ինչպէս
- 3. Ո՞վ անցաւ մօտէն — 4. Պառաւը ինչ ըսաւ անոր — 5. Երիտասարդը ինչ պատասխանեց անոր — 6. Ի՞նչ տուաւ պառաւին — 7. Կրնա՞ր զուշակել Թէ ով էր այդ երիտասարդը և ինչ էր տուածը:

ԻՔ. ԴԱՍ. — ՅՈՒՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

65. Յուշական դերանունները հետեւեալներն են.

	Եզակի	Յոգնակի
Ա. Դեմք	Այս, Աս, Ատիկա	Ատոնք
Բ. Դեմք	Այդ, Ատ, Ատիկա	Ատոնք
Գ. Դեմք	Այն, Ան, Անիկա	Անոնք

66. Ան, անիկա, անոնք իբրև անձնական դերանուն ալ կը գործածուին:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ը

129. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել ցուցական դերանունները:

130. Սորվիլ Ընթերցուածին ուղղագրութիւնը:

131. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հորովումը.

	Եզակի	Յոգնակի
Ուղ.	Այն, Ան, Անիկա	Անոնք
Սեռ.	Անոր	Անոնց
Բաց.	Անկէ	Անոնցմէ
Գործ.	Անով	Անոնցմով

18. ԱՐՏԱԱՆՈՒԹԻՒՆ. — ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Հակէ, հրեշտակ, իմ զարթումիս,
Այնպէս ըսաւ քանի որ Տէր.
Մահճիս մօտիկ պահպանէ զիս,
Երբոր ննչեմ ամէն զիշերս
Գուժ ունեցի՛ր անձիս անգոր
Ու մի Թողոր զիս մենաւորս
Խօսէ՛ ճամբան ինձ շարունակ.
Եւ երբ մըտիկ կ'ընեմ քեզ լուռ,
Որպէս զի վար չիյնամ մի՛նակ,
Բարբի հրեշտակ, ձեռքդ ինձի տուր:

ԻԳ. ԸՆԹԵՐՅՈՒՄԾ. — ԿԱՏՈՒԻ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Արտինէն դպրոցէն դարձին, տեսաւ որ մայրիկը պընակի մը մէջ շագանակներ դրեր է իրեն և Վահրամին համար: Իրենները եփեց, յետոյ եղբօրը շագանակներն ալ տաք մոխրիւն մէջ թաղելով, սեղանատուն գնաց նախընթրիք ընելու: Խոհանոցին պատուհանը բաց ըլլալով, երկու կատուներ ներս մտան, և ախորժանամ պտուղին հօտը առնելով, վառարանին մօտեցան, ու սկսան խորհրդակցիլ զանոնք մոխրիւն հանելու եղանակին վրայ, իբր թէ իրենցը ըլլային: Վերջապէս համաձայնեցան. մէկը թաթիկովը զանոնք կամաց կամաց դուրս քաշեց, և միւսը մէկիկ մէկիկ ստկեց: Յետոյ սկսան բաժնիլ. բայց մէկ հատ մը աւելի էր: Ասոր վրայ կռիւը փրթաւ: Մէկը կ'ըսէր. «Ասիկա իմս է, քանի որ ես դուրս հանեցի վառարանէն:» Իսկ միւսը կը պնդէր. «Խնչո՛ւ քուկդ պիտի ըլլայ, քանի որ ես ստկեցի:» Երկուքն ալ չէին խորհեր կրօնի զայն: Չայներնին բարձրացաւ. և տանը կատուն լսելով, վրայ հասաւ ու ըսաւ. «Ասոնք ձերինը չեն, այլ իմինս՝ քանի որ ես եմ տանը կատուն:» Եւ վռնտելով զանոնք, շագանակները անոնց ձեռքէն առաւ ու բոլորն ալ ախորժակով կերաւ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

132. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Արտինէն դպրոցէն դարձին ի՞նչ տեսաւ — 2. Խնչ ըրաւ այդ շագանակները: — 3. Յետոյ ո՞ր գնաց: — 4. Կատուները ուրի՞նչ ներս մտան: — 5. Խնչ ըրին: — 6. Շագանակները ո՞վ դուրս քաշեց և ստկեց: — 7. Յետոյ ի՞նչ ըրին: — 8. Մէկը ի՞նչ կ'ըսէր: — 9. Ո՞վ վրայ հասաւ: — 10. Տանը կատուն ի՞նչ ըսաւ անոնց: — 11. Խնչ ըրաւ:

ԻԳ. ԴԱՍ. — ՄՏԱՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

67. Մտացական դերանունները բանի մը որուն ըլլալը կը ցուցնեն և հետեւեալներն են.

	Եզակի	Յոհնակի
Ա. Դեմք	Իմս, Իմինս	Մերը, Մերինը
Բ. Դեմք	Քուկդ, Քուկինդ	Չերը, Չերինը
Գ. Դեմք	Իրը, Իրենը	Իրենցը

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

133. Օրինակել այս Ընթերցումը եւ ստորագծել usացական դերանունները.
134. Սորվիլ այս Ընթերցումին ուղղագրութիւնը:
135. Օրինակել եւ սորվիլ հետեւեալ հոլովումը.

	Եզակի	Յոհնակի
Ուղ. Հայց.	Իմս, Իմինս	Մերը, Մերինը
Սեռ. Տրակ.	Իմինիս	Մերինիս
Բաց.	Իմինէս	Մերինէն
Գործ.	Իմինովս	Մերինով

19. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՁԻՆ ԵՒ ՅՈՒՂԸ

Առոյգ ձի մը մանուկ մ'առած իր վրան, Դաշտերուն մէջ՝ ապին անդին կուգար ման. Մերձ կը վազէր, կը վազվըզէր ոստոստուն, Եւ մերձ հազիւ կը դաչէր Թարմ խոտերուն.

— Ի՛նչ, մռնչեց ցուրն անդիէն զայրացած, Ըզբեզ վարել փոքրիկ տղո՞ւն այդ մընաց: Շուտ պատժէ՛ զայն, ու վըրայէդ նետէ՛ վար.

Երթայ սորվի որ ձիուն հետ չեն խաղար: — Ի՛նչ յաղթանակ, ի՛նչ փառք և ի՛նչ մեծ պատիւ, Ըսաւ անոր ծիծաղելով ձին ազնիւ. Անձ չէ ինձ, և չե՞ն խնդար իմ վըրայ, Երբ վար նետեմ սա խեղճ մանուկն անվընաս:

ԻՒ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԳԱՐՈՒՆԸ ԵՒ ԿԵՍՆՔԸ

Աշնան մէջ, որ մը Ալիսին մայրը զինքը գիւղ տա-
րաւ: Տերեւները դեղներ էին արգէն, ու կամաց կամաց
կը թափէին ծառերէն: Թուփերուն վրայ՝ ծաղիկները չոր-
ցեր էին, և դաշտը, որ ցորենով լիցուն էր, խոտի թափ-
թփուքներով ծածկուեր էր հիմայ: Գետինը, խոնաւ հո-
ղին վրայ, թերթերու, ստերու, շիւղերու ցամքած բե-
կորներ կը խշրտային ոտքերնուն տակ, և աշնան արեւը,
որուն զէմքը տփգուններ էր ցուրտէն, կը պահուըտէր ամ-
պերուն թանձր վերմակին տակ:

Ալիս այս տխուր տեսարանէն աղղուած, մօրը ըսաւ.
«Մայրիկ, ո՛ւր են այն աղուոր ծաղիկները որոնցմով ծա-
ռերը զարդարուած էին երեք ամիս առաջ, երբ հոս էինք:
Ի՛նչ շուտ անցաւ ամէն բան:»

—Ասոնք ալ պիտի անցնին, աղջիկս, ըսաւ մայրը,
վերստին պիտի կանանչան ծառերը որոնցմով լիցուն է
անտառը: Միայն մարդուս երիտասարդութիւնն է որ չի
նորոգուիր: Ուստի գիտցի՛ր անոր յարգը, և ջանա՛՛ օգուտ
քաղել անկէ, զարդարելով միտքդ ու սիրտդ այնպիսի
յատկութիւններով զորս չկարենայ խամրեցնել ոչ աշունը,
ոչ ձմեռը կեանքիդ, ինչպէս սա մշտադալար եղելինները
որոնց ոչ ցուրտը, ոչ ձիւնը կրնայ երբեք վնասել:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

136. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ
գրաւոր.

- 1. Ալիսին մայրը ո՛ւր տարաւ զինքը: — 2. Տերեւները ի՞նչպէս
էին: — 3. Ծաղիկները ի՞նչ եղեր էին: — 4. Գաշտը ի՞նչ եղեր էր: —
5. Գետինը ի՞նչ կար: — 6. Աշնան արեւը ի՞նչ կ'ընէր: — 7. Ալիս ի՞նչ
ըսաւ մօրը: — 8. Մայրը ի՞նչ պատասխանեց: — 9. Ի՞նչ խրատ տուաւ ա-
նոր: — 10. Ո՞րն է այն մշտադալար ծառը որուն չի վնասեր ձիւնն ու ցուրտը:

ԻՒ. ԴԱՍ. — ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

68. Յարաքերական դերանունը որ բառն է, և իրմէ
առաջ յիշուած բառ մը կը յարաբերէ. այդ բառն ալ կ'ըս-
ուի յարաբերեալ:

69. Յարաքերական դերանունը թիւ և հոլով ունի, և
կրնայ գործածուիլ երեք զէմքերու համար միեւնոյն ձեւով:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 137. Օրինակել այս ընթերցուածը եւ ստորագծել յարաքերական
դերանունները.
- 138. Սորվիլ հետեւեալ բառերը.
Խար, շիւղ, բեկոր, ազդուած, խամրեցնել, մշտադալար, եղելին:
- 139. Օրինակել հետեւեալ հոլովումը եւ սորվիլ զայն.

Եզակի Ծագակի

Եզակի	Ցագակի	Ծագակի
Ուղ.	Որ	Որոնք
Հայց.	Ձոր	Ձորս
Սեռ.	Որուն	Որոնց
Տրակ.	Որու	Որոնց
Բաց.	Որմէ	Որոնցմէ
Գործ.	Որով	Որոնցմով

20. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՏՂՈՒ ՀԱՐՑՈՒԾ

— Հայրիկ, ո՞վ կ'անցնի ամէնէն արագ. Աւանը խլուած եզերքէն ծովուն,
Հովերը արդեօք, գետը սըրընծաց, ձերմակ օճառին պղպըջակն ոսին.
Արդեօք ասուպն որ կ'իյնայ վայրահակ Օղապարիկը, տերեւն ազազուն,
Առկայծ ափստով բոցի պէս վառուած: Երանզը, արդեօք ոստայնը սարդին:
Արդեօք ամպերը, ծիւղին եմերային, — Իցիւ Թէ անզէտ մընաս դուն,
Եւ կամ օղապար ծիծեռն ուղեւոր. որդեակի,
Բոցածաւալ փոնջն արդեօք հրթիռին. Անուշ և տխուր սաճմարտուծեան
Երկինքին շանթը Թէ փայլակն անոր: Թէ ինչ որ կ'անցնի ամէնէն արագ
Մեր երչանկուծեան օրերն են միայն:

ԻԵ՛ ԸՆԹԵՐՅՈՒԱԾ՝ — ՄԻՍԱՄԻՑ ԿԿՈՒՆ

Ձորին վերեւ սար մը կար . սարին վրայ ծառեր կային .
 և անոնցմէ մէկուն վրայ կիւռն բոյն զրեր էր , ու իր ձա-
 գուկները շուրջը բոլորած՝ առտունէ մինչև իրիկուն կ'եր-
 գէր : Աղուէսը օր մը մօտեցաւ այդ ծառին , ու ըսաւ .
 «Անմիտ կիւռ , այս սարը իմն է , այս ծառերուն ամէնքն
 ալ իմն են . ինչպէս համարձակեցար դուն այս բոլորին
 տէր ըլլալ : Ըսէ՛ տեսնեմ , քանի՞ ձագ ունիս : — Երեք
 հատ , պատասխանեց հէգ թռչունը դողալով : — Ծճւտ ,
 ատոնցմէ մէկը վար նետէ՛ , ապա թէ ոչ կացինս կը բե-
 բեմ , և այս ծառը արմատէն կը կտրեմ :» Կիւռն վախնա-
 լով որ թռչունները բոլորը մէկտեղ բնաջինջ կ'ըլլան , ան-
 միջպէս ձագերէն մէկը վար նետեց , միւսները ազատե-
 լու համար : Աղուէսը , զայն առաւ փախաւ : Իսկ դժբախտ
 թռչունը ձայնը ձգած սկսաւ լալ : Ագռաւը հոնկէ անց-
 նելով , հարցուց , հասկցաւ անոր վշտին պատճառը ու
 ըսաւ անոր . «Անմիտ քուրիկ , ինչպէս հաւատացիր այդ
 խաբեբային խօսքերուն . անիկա բան մը չունի . ոչ սարը
 իրն է , ոչ ալ այս ծառերէն մէկը : Ինչ որ ըսեր է քեզի ,
 բոլորն ալ սուտ է . կացինը ռ՛ւր պիտի գտնէ : Եթէ նորէն
 դայ , վանտէ՛ զինքը :» Այս ըսելով ելաւ գնաց : Եւ անս՛
 նորէն աղուէսը եկաւ , ու երբ բերանը բացաւ : Կիւռն
 վերէն պոռաց . «Ոչ սարը քուկդ է , ոչ ծառը , և զիտեմ
 թէ կացին չունիս դուն . ա՛լ քեզմէ չեմ վախնար . կոր-
 սու՛ է՛ գնա ուրիշը խաբելու :»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

140. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր .
 1. Կիւռն ո՞ր բոյն զրեր էր — 2. Աղուէսը քնչ ըսաւ կիւռին —
 3. Կիւռն քնչ պատասխանեց — 4. Աղուէսը քնչ պահանջեց և քնչ ըս-
 պառնալիք ըրաւ — 5. Աղուէսը քնչ ըրաւ — 6. Աղուէսը մեկնելէ ետքը
 ո՞վ անցաւ հոնկէ — 7. Ի՞նչ ըսաւ կիւռին — 8. Երբ Աղուէսը նորէն ե-
 կաւ , կիւռն քնչ պոռաց անոր :

ԻԵ՛. ԴԱՍ. — ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

70. Անորոշ կ'ըսուին այն դերանունները որ անորոշ
 գաղափար մը կ'արթնցնեն մեր մտքին մէջ , ինչպէս . Ա-
 մեկնը , մեկը , ուսմի , իրար , բան մը , ինչ որ , ոչինչ , առեւ
 մեկը , ոչ մեկը , ուրիշը , միեւնոյնը , միւսը , այսպաիւր ,
 ո՞րը , որչա՞փը , ի՞նչ , և այլն :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

141. Օրինակել այս Ընթերցուածը , եւ ստորագծել անորոշ դերա-
 նունները :
142. Սորվիլ հետեւեալ բառերը .
 Սար , շուրջ բոլորած , կիւռ , բնաջինջ կ'ըլլայ , կացին , արմատ :
143. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը :
144. Անորոշ դերանուններ դնել հետեւեալ կէտերուն տեղ .
 Ընկերներուս . . . ալ հոն էին . . . կար հոն : Այս երկու գիրքերն
 ալ . . . են . . . կ'ուզես ինձմէ , իմ ուզած զլիարկս այս չէ . . . է . . .
 բաւական է : Այս բանալիներէն . . . իմն է , . . . քուկդ է . . . չունիմ
 քեզի տալու :
145. Գտնել հետեւեալ խօսքերուն մէջ գտնուած դերանունները .
 Անիկա ստախօս տղոցմէ չ'ախորժիր — Գրոջս տուէք ասոնք —
 Բովս մէկը չունիմ — Եղածները պատմեցի իրեն — Ինքը իմ բարեկամս
 է — Մեր տունը երեք սենեակ ունի , ձերը՝ հինգ հատ — Ամէնքը հոն
 նստեր էին — Այս կերպաներէն որը աւելի աղուոր է — Մենք բան մը
 չենք պահանջեր իրենցմէ — Այդ կօշիկները նեղ են , ատոնցմով չես կըր-
 նար քալել — Հաճեցէք զրել մեզի մէկ երբ կ'ընդունիք զայն :
146. Գոյականներ դնել վերոգրեալ խօսքերուն մէջ գտնուած դե-
 րանուններուն տեղ :

ԻԶ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՄԱՅՐԻԿԻՆ ԷԱՄԵՌՈՅՐԸ

Կազանդ էր: Տղաք շատ ուրախ կ'ըլլան այդ օրը, որովհետեւ ամէնքն ալ փափաքած բաներնին կ'ստանան: Շաքարներ, խաղալիկներ, միրգեր և զանազան ընծաներ կը տրուի իրենց: Բայց փոքրիկ Արսէնը, որ հայր մայր չունէր, մասնակից չէր իր տարեկից տղոց ուրախութեան: Արդէն շատ աղքատ էր, և իր հացը ձարելու համար՝ ստիպուած էր ձեռք կարկառել: Ուստի Կազանդին իրիկունը, երբ մութը կոխեց, փողոց ելաւ անցորդներէն ու զորմութիւն խնդրելու համար: Բայց մէկը չէր նայեր աւտոր երեսը. ամէնքը զբաղած էին իրենց տղոցմով: Դրժբախտ տղեկը յուսահատեցաւ, և քարի մը վրայ նստելով, ձիւնին ցուրտին տակ, սկսաւ լալ: Տիկին մը որ քովէն կ'անցնէր, զայն տեսաւ, ու քովը մօտենալով հարցուց. «Ինչո՞ւ կուլաս, տղաս: Ի՞նչ կ'ուզես. ըսէ՛ ի՞նչ. չաքա՞ր, պուպրի՞կ, ձի՞, պտուղնե՞ր. ամէնքն ալ տամ քեզի: — Այդ բաներէն ոչ մէկը կ'ուզեմ, պատասխանեց Արսէն լալով: Կը յիշեմ թէ անցեալ տարի, Կազանդին, երբ մայրս ողջ էր, զիս գիրկը առաւ, սրտին վրայ սեղմեց և տաք համբոյր մը տուաւ ինձի. ա՛խ, տիկին, մայրիկիս համբոյրը տուէ՛ք ինձի:»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

147. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Տղաք ինչո՞ւ ուրախ կ'ըլլան Կազանդին. — 2. Փոքրիկ Արսէնը ինչո՞ւ մասնակից չէր անոնց ուրախութեան. — 3. Ինչո՞ւ ձեռք կը կարկառէր անցորդներուն. — 4. Կազանդին իրիկունը ի՞նչ ըրաւ. — 5. Անցորդները ինչո՞ւ անոր երեսը չէին նայեր. — 6. Տղեկը ի՞նչ ըրաւ. — 7. Ով մօտեցաւ իրեն. — 8. Ի՞նչ հարցուց. — 9. Ի՞նչ պատասխանեց Արսէն:

ԻԶ. ԴԱՍ. — ՌԱՅ ԵՒ ԵՆԹԱԿԱՅ

71. Բայը բան մը ընել կամ ըլլալ կը ցուցնէ, ինչպէս. Երգել, մարիլ:

72. Ենթական բային գործողութիւնը ընողն է, ինչպէս. ես երգեցի, տղան մարեցաւ:

73. Ենթական կը գտնուի ո՞վ հարցումը ընելով, ինչպէս. Ո՞վ երգեց. ես: — Ո՞վ մարեցաւ. — տղան:

74. Ենթական ընդհանրապէս անուն մը կամ դերանուն մըն է, ինչպէս. ես, տղան:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր


148. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել լայերը:
149. Վերստին օրինակել եւ ստորագծել ենթականները:
150. Սորվիլ հետեւեալ բառերը.
Մասնակից չէք, ձեռք կարկառել, տարեկից, միրգ, ընծայ, զանազան:
151. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը.

21. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԿՈՅՐ ՑՂԱՆ

- | | |
|-----------------------------|--------------------------------|
| 1. Գեղեցիկ է կ'ըսեն արփին. | 2. Բոլորը, կ'ըսեն, ծաղիկներուն |
| Ծաղիկին ոտներն ալ կը հակին | Այն թոյրերուն չափ չէ սիրուն |
| Գետին վըրայ վայելչօրէն. | Որ թերթերուն կը ձօնէ լոյս. |
| Թէ պերճախօս թռչնիկն աղու | Թէ բըլբուլներ, ձոր ու ծործոր, |
| Եւ միջատներն այերաչու | Լիճեր, մարգեր, ջուրեր բոլոր, |
| Շողող՝ լոյսին մէջ կը պարեն: | Եւ պուրակներ եւ այգեր կոյս |
-
- | | |
|---------------------------------|--------------------------------|
| 3. Այնքան հրապոյր ունին գողտրիկ | 4. Ոչ երկինքը, ոչ շողի այգուն, |
| Որ ծունկի գան պէտք է մարդիկ | Ոչ պուրակը, ոչ միրգն հասուն, |
| Այդ պերճանքին առջեւ շքեղ: | Ոչ թռչնիկը, լոյսն անսահման... |
| Բայց իմ սրտիս չէ ցաւ ու խոց | Բոլոր այս պերճ բարիքներէս |
| Որ չեմ տեսներ ծովն ալեկոծ, | Հատ մը միայն կ'ընտրէի ես, |
| Ոչ ալ ծաղիկն գոյներն ու զեղ: | Տեսնել մայրիկս իմ սիրականս |



Ս. ՆԱԼԱԿ ՊԱՐԹԵՆԻ (Տե՛ս էջ 72)



Ս. ԿԵՅԻՐՈՊ (Տե՛ս էջ 72)

ԻԷ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՀԱՅ ԳԻՐԵՐԸ

Հայ եկեղեցին տարին անգամ մը կը կատարէ Սահակ եւ Մեսրոպ սուրբ հայրապետներուն տօնը:

Ս. Սահակ որդին էր Մեծն Ներսէս Պարթև հայրապետին, և Ս. Մեսրոպ քարտուղարն էր Արշակ Երկրորդի արքունիքին: Երկուքը միատեղ աշխատելով, գտան մեր լեզուն գիրերը: Անոնցմէ առաջ, մենք օտար գիրեր կը գործածէինք: Անոնք տարածեցին հայերէնի ուսումը բոլոր Հայաստանի մէջ. անոնք թարգմանեցին Աստուածաշունչը, և այնքան առաջ տարին մեր լեզուն, ծաղկեցուցին մեր գրականութիւնը, որ պատմագիրները Ոսկեդար անուանեցին հինգերորդ դարը: Անոնք իրենց աշակերտ ունեցան մեր ամէնէն նշանաւոր հեղինակներէն Եղնիկը և Շղիշէն, որոնք գրած են մեր գրաբար մասնագրութեան հրաշակերտները:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

152. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Հայ եկեղեցին որո՞նք տօնը կը կատարէ տարին անգամ մը — 2. Ո՞վ էր Ս. Սահակ — 3. Ո՞վ էր Ս. Մեսրոպ — 4. Ո՞վ էր Արշակ Երկրորդ — 5. Ո՞վ գտած է հայ գիրերը — 6. Ո՞վ թարգմանեց Աստուածաշունչը — 7. Ի՞նչ կոչուեցաւ հինգերորդ դարը — 8. Որո՞նք են Ս. Մեսրոպի եւ Ս. Սահակի ամէնէն նշանաւոր աշակերտները:

153. Սորվիլ հետեւեալ բառերը.

Քարտուղար, արքունիք, գրականութիւն, դար, ոսկեդար, մատենագրութիւն, հրաշակերտ, հեղինակ:

ԻԷ. ԴԱՍ. — ՍՅՈՒ ԽՆԴԻՐ

75. Երկու տեսակ խնդիր կայ. սեռի խնդիր և բնութեան խնդիր:

76. Սեռի խնդիրը հայցական հոլով կ'ըլլայ, և զո՞վ կամ ի՞նչ բանը հարցումով կը գտնուի. կասուն ծեծեցի: Զո՞վ ծեծեցիր: — կասուն:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

154. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել սեռի խնդիրները
155. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը
156. Գտնել հետեւեալ բայերուն յարմար սեռի խնդիրներ.

Դասատուն կը յանդիմանէ . . . — Մայրը . . . կը մուսկանէ — Որդերը . . . կը կրծեն — Արեւը տաքցուց . . . — Ատաղձագործը . . . մը շինեց — Հովը . . . պիտի խորտակէ — Կովը . . . կուտայ — Ոչխարը . . . կ'ուտէ — Կատուն . . . բռնեց — Մեղուները . . . կը շինեն — Բոլորս իր . . . կորսնցուց — Հայրս երկու . . . ունի — Դուն . . . չես սորված:

22. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՅՈՅՍ

Թո՛ղ փչէ քամին պաղ պաղ երեսիս, թուխալ Թո՛ղ պատէ երկինքը պայծառ. Վերէն, ամպերէն սաստիկ ձիւն թանձրը մառախուղ լոյսը Թո՛ղ փակէ. Թող գայ, Տարբերն աշխարհիս խառնուրդ իրար. Որքան որ կ'ուզէ, Թո՛ղ փչէ հիւսիս. Յոյս ունիմ. վաղ ուշ արեւ կը ծագէ: Յոյս ունիմ. վաղ ուշ գարուն պիտի գայ:

Թո՛ղ գայ փորձութիւն, Թո՛ղ գայ հալածանք,
Խաւար Թո՛ղ դառնայ անողօտ լոյսը.
Սարսափելի չեն մարդուն տառապանք.
Միայն . . . չըհասնի խեղճուկին յոյսը:

ԻՐ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԲԱՆՂԵՂՆ ԵՒ ԿԱՂՆԻՆ

Բաղեղ մը կաղնիի մը կոճղին փաթթուած, կ'աճէր ու կը բողբոջէր ծլարձակ: Կաղնին կը պաշտպանէր զայն հովէն ու անձրեւէն, տարածելով անոր վրայ իր սաղարթագեղ տերեւները: Իսկ բաղեղը կը գեղազարդէր դարաւոր ծառը իր գունագեղ ծաղիկներով ու թարմ ուղէշներով: Օր մը, բաղեղը շատ ձանձրանալով այս հանգիստ ու խաղաղ կեանքէն, կամաց մը բաժնուեցաւ իր պաշտպան հովանիէն, ու գնաց մինակ ապրիլ բաց օդին մէջ: Բայց չուտով գտաւ իր յանձնապատասանութեան և անխոհմտութեան պատիժը, որովհետեւ հիւսիսակը փչեց ուժգին՝ հորիզոնէն, և իր բարակ բունը, որ ամէն զեփիւռի կը շարժի, սկսաւ ծածանիլ, ծռիլ, կլկլել, իջնել, մինչեւ որ խորտակուելով ինկաւ հողին վրայ, ու ցամքեցաւ հովին և արեւուն տակ: Անխորձ բաղեղը շատ զղջաց իր անխոհմտութեան վրայ. բայց եղածը եղած էր, և իր զղջումը օգուտ չունէր:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

157. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ զրաւոր.

1. Բաղեղը ի՞նչպէս կ'աճէր: — 2. Կաղնին ի՞նչ կ'ընէր անոր: — 3. Իսկ բաղեղը ի՞նչ կ'ընէր դարաւոր ծառին: — 4. Բաղեղը օր մը ինչո՞ւ բաժնուեցաւ իր պաշտպան հովանիէն: — 5. Ո՞վ էր իր պաշտպան հովանին: — 6. Գտնու իր պատիժը: — 7. Իր բարակ բունը ի՞նչ եղաւ: — 8. Բաղեղը զո՞ն մնաց իր անխոհմտութենէն: — 9. Իր զղջումը օգուտ ունեցնու:

158. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

ԻՐ. ԴԱՍ. — ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

77. Բնութեան խնդիրը ընդհանրապէս տրական, բացառական և գործիական կ'ըլլայ, և կը գտնուի որո՞ւ կամ ի՞նչ բանի, որովհէ՞ կամ ի՞նչ բանէ, ինչո՞վ կամ ի՞նչ բանով հարցումներով:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

159. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել բնութեան խնդիրները:

160. Սորվիլ հետեւեալ քառերը.
Բաղեղ, կաղնի, կոճղ, կը բողբոջէր, սաղարթագեղ, կը գեղազարդէր, դարաւոր, գունագեղ, ուղէշ, յանձնապատասանութիւն, հիւսիսակ,

161. Գտնել հետեւեալ բայերուն յարմար բնութեան խնդիրներ եւ դնել հարցումներուն տեղ.

Ագարակապանը (որմէ) կամ կը կթէ: — Մշակները ցորենը կը հնձն (ինչո՞վ): — Երկու ոչխար յանձնեցինք (որո՞ւ) արածելու համար: — Ես (ինչո՞վ) չեմ կրնար զուարճանալ: — Անոնք (ինչ բանի) ուշադրութիւն չեն ընէր: — Մենք կը ճամբորդենք միշտ (ի՞նչով):

162. Գտէք հետեւեալ խօսքերուն մէջ՝ բնութեան խնդիրները.

Ծովը լեցուն է ձուկերով: — Միշտ ձեզմէ մեծերուն նայեցէք եւ անոնցմէ օրինակ առէք: — Փայտը կացինով կը կտրեն: — Անժանօթ տղոց հետ մի խաղաք: — Հեռու կեցէք անմիտ բարեկամներէ: — Հաւատքով ապրեցէք:

23. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԲԱՆՂԵՂՆ ՈՒ ՎԱՐԳՆԻՆ

Սողոսկելով բաղեղն ելաւ պաան ի վեր. վարդենիին հասակն հոնկէ կը ծաղրէր: Փորրիկ Թուփը ըսաւ անոր. «Առանձին ես բարձրացայ այս կէտին. Բայց դուն, որ սէք ես այդքան, կը սողայի՛ր առանց պատին օգնութեան»:

ԻՅ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիքը այն երկիրն է ուր ծնած ու մեծցած ենք, ուր անցած է մեր մանկութիւնը, ուր թոթոված ենք մեր առաջին բառերը և առաջին աղօթքը: Մենք կապուած ենք անոր հողին, ջուրին, ծառերուն, ծաղիկներուն, անասարաններուն: Երբ հեռանանք մեր հայրենիքէն, անոր կարօտը կը քաշենք, և եթէ աւելի շքեղ, աւելի հարուստ, աւելի զարգացած ու քաղաքակրթուած երկիրներ ալ երթանք, դարձեալ կը բազմանք մեր ծննդավայրին. եթէ անիկա նոյն իսկ ամէնէն խոնարհ, ամէնէն աղքատ, ամէնէն յետամնաց գիւղը ըլլայ: Ուրեմն շատ սիրելի և նուիրական է մեզի մեր հայրենիքը, ինչպէս մեր հայրենի տունը: Անոր յիշատակը կ'ապրի մեր սրտին մէջ միշտ սուրբ և անմոռանալի: Անոր նկատմամբ մենք շատ պարտքեր ունինք. և ինչպէս մեր հօրը, մեր մօրը համար աշխատիլ, անոնց օգնել, անոնց նուիրուիլ պարտական ենք, նոյնպէս պարտական ենք նաեւ մեր հայրենիքին:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

163. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր:

1. Ի՞նչ է հայրենիքը: — 2. Մենք ի՞նչ բանի կապուած ենք: — 3. Երբ հեռանանք մեր հայրենիքէն, ի՞նչ կ'զգանք: — 4. Եթէ մեր հայրենիքէն աւելի շքեղ երկիր մը երթանք, մեր հայրենիքը կը մոռնանք: — 5. Ի՞նչ պարտական ենք մեր հայրենիքին:

164. Սորվիլ այս ընթացումին ուղղազրուելիւնը:

ԻՅ. ԴԱՍ. — ԲԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

78. Ժառանակը երեք է. ներկայ, անցեալ, ապառնի:

79. Ներկան մէկ է: Անցեալը երկու է. անցեալ անկասար և անցեալ կասարեալ: Ապառնին երկու է. բացարձակ ապառնի և անկասար ապառնի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 165. Օրինակել այս ընթերցումը եւ ստորագծել բայերը:
- 166. Կրկին օրինակել, ստորագծել ենթակաները, եւ եթէ չկայ, դնել:
- 167. Խոնարհել եւ գոց սորվիլ հետեւեալ բայը:

Յգակի

Ես կը բաշէի

Դուն կը բաշէիր

Ան կը բաշէր

Յոգնակի

Մենք կը բաշէինք

Դուք կը բաշէիք

Անոնք կը բաշէին

- 168. Հետեւեալ բառերը եզակի ընել.
 Կը կարգաբար — Կը փափաքին: — Պիտի ժպտինք: — Երգեցինք: — Կը պարենք: — Պիտի խնդանք: — Կը յուզուիք: — Դրկեցինք: — Պուսցիք:

24. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾԻՐԱՆԻ

Ես ծառ մըն եմ ծիրանի.

Հին արձատ եմ անուանի.

Պտուղներըս բազմաբան՝

Բոլոր մարդոց պիտանի:

Տունկերըս ուր ալ գնան,

Թէպէտ նոյնը կը մընան.

Բայց օտարի նողին վրայ

Չեն անիր, այլ կը չորնան:

Հին ծառ մըն եմ հայկական.

Չունիմ որոշ այգեպան.

Ինկած են բաժան բաժան

Տունկերըս ամէն երկիր

Չորս հազար տարուան ծառ եմ.

Արձատըս պինդ կայտառ եմ.

Թէպէտ ուժըս պակաս է,

Բայց անունով պայծառ եմ:

Լ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.— ՓԻՂԸ

Տեսէ՛ք սա փիղին պատկերը: Ահարկու կենդանի մըն է, գրեթէ չըջուն լեռ մը որ իր ոտքերուն տակ գետինը կը սարսէ: Իր բարձրութիւնը հինգ մէթր է շատ անգամ: Իր մորթը բիրտ՝ ճեղքոտ՝ և թանձր է: Գլուխը ահագին է և ականջներն ալ՝ խոշոր: Իր լսողութիւնը շատ սուր է: Խիստ փոքր աչքեր ունի որոնք առոյգ են: Իր քիթը որ չափազանց երկար և ուժեղ ըլլալով, պատիճ կը կոչուի, միշտ կը շարժի և կը գործէ: Ան իր բազուկն է, իր ձեռքը, իր զէնքը: Իր մարմինը այնքան ուժեղ է որ անով կրնայ պատ մը կործանել առանց ճիգի: Օրը մինչև երեսուն փարսախ տեղ կրնայ քալել և հազար քիլո բեռ կրել: Սակաւակեր է իր մարմինն համեմատութեամբ, խոտ և բանջարեղէն միայն կ'ուտէ, օրը տասներհինգ զոյլի չափ ջուրի պէտք ունի: Կոր ատամները, որոնք փղոսկր կը կոչուին, մինչև երեք մէթր կրնան երկննայ: Այս կենդանին շատ երախտագէտ՝ և սոսկալի վրէժխնդիր է:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

169. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Ինչպէ՞ս կենդանի է փիղը: —
2. Իր բարձրութիւնը որչա՞փ է: —
3. Իր մորթը ի՞նչպէս է: —
4. Ինչպէս է իր զլուխը: —
5. Ականջները: —
6. Լսողութիւնը: —
7. Աչքերը: —
8. Իր պատիճը ի՞նչ կ'ընէ: —
9. Իր մարմնով ի՞նչ կրնայ ընել: —
10. Ո՞րչափ տեղ կրնայ քալել: —
11. Ի՞նչ կ'ուտէ, որքան ջուր կը խմէ: —
12. Իր ատամները ի՞նչ կը կոչուին: —
13. Իր բնատրութիւնը ինչպէ՞ս է:

Լ. ԴԱՍ. — ՍՏՈՐՈԳԵԼԻ

80. *Ստորգեղին անուն մը կամ անական մըն է որ սովորաբար էական բային հետ կը գործածուի, և ենթակային ինչ կամ ինչպէս ըլլալը կը ցուցնէ:*

81. *Ստորգեղին սովորաբար ուղղական կ'ըլլայ և եզակի կը մնայ:*

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

170. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել ստորգեղինները:

171. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

172. Սորվիլ հետեւեալ բառերը.

Ահարկու, շրջուն, կը սարսէ, բիրտ, թանձր, հեզ, փարսախ, սակաւակեր, դոյլ, անդամ, թանկագին, վրէժխնդիր:

173. Գրել հետեւեալ խօսքերը միայն մէկ ենթակայով:

Յակոբ եւ Մարգիս չար եղանկ — Մաննիկ և Սամենիկ խոտացան հնազանդ ըլլալ — Սոխակն ու դեզմանիկը երգիչ են — Կատուն եւ մուկը գող են — Ես եւ ըոյրս տկար ենք — Հայրս եւ մայրս երջանիկ պիտի ըլլան — Մեր ուսուցիչները զոհ կը մնան երբ աշխատասէր ըլլանք — Ամառուան մէջ օրերը կարճ կ'ըլլան — Եթէ կ'ուզես յաջողիլ, պէտք է հաստատափութ ըլլաս:

25. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԱՆԾԵՂՆ ՈՒ ԽԱՅՑԻՑԸ

*Օր մը ըստ շատագրուց
Անձեղն անուշ խայտիտին.
«Սորվեցուր երգ մ'ինձ բերնուց
«Դարնան երգէր զոր լըսողներ կ'զմայլին»
« Կատակ չ'ուզեր, սիրելիս,
«Բու տեսակէդ անձեր բան մը չեն սորվիր»
« Դատնառն ըսել կը հաճիս»
— Ով որ կ'ուզէ բան մը սորվիլ, այնպիսին
«Պէտք է ըլլայ ունկնդիր.
«Շատախօսն ալ մտիկ չ'ընէր ուրիշին»*

ԼԱ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԱՐԾԱԹ ԴՐԱՄԸ

Կաղանդին օրը, Տիգրանին հայրը արծաթ դրամ մը տուաւ իրեն որ իր քրոջը, Նոյեմին հետ երթայ շաքար գնէ: Գոյր, եղբայր ձամբան քալած ատեննին խանութնուրուն կը նայէին, որոնց ցուցափեղկերուն մէջ շարուած էին գոյնզգոյն շաքարէ խաղալիկներ, ծաղիկներ, պտուղներ: Տեղ տեղ կը տեսնուէին փոքրիկ նուագարաններ, եւ խաւաքարտէ աճպարարներ որոնք կը ցատկուտէին լարով մը կապուած մնքննայի մը վրայ: Նոյեմի ամէնուն ալ կը հաւնէր եւ ամէնէն ալ գնել կը բաղձար: Իսկ Տիգրան կը հաշուէր, ու կը մտածէր թէ պէտք չէ դրամը պարապ տեղը վասնել: Յանկարծ պղտիկ աղքատ աղջիկ մը որ ձեռք չունէր, և որուն վիզէն մը պարկ մը կախուած էր, եկաւ քովերնին կայնեցաւ: Ոչ ոտքը կօշիկ կար, ոչ ալ վերարկու հագած էր: «Անօթի եմ» ըսաւ: Տիգրան եւ Նոյեմի իրարու երես նայեցան: Իրենք կուշտ էին և աղէկ հագուած: Ալ շաքար ուտելու կամ խաղալիկ գնելու ախորժակ չմնաց: Տիգրան կամաց մը իր արծաթ դրամը աղջկանը պարկին մէջ նետեց, և տուն վերադարձան երկուքն ալ զուարթ և երջանիկ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

174. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Տիգրանին հայրը ինչու դրամ տուաւ անոր Կաղանդին — 2. ձամբան քալած ատեննին ի՞նչ կը տեսնէին ցուցափեղկերուն մէջ — 3. Նոյեմի ատոնք տեսնելով ի՞նչ կ'ըզգար — 4. Տիգրան ինչ կ'ընէր — 5. Յանկարծ ո՞վ եկաւ կեցաւ քովերնին — 6. Աղքատ աղջիկը ի՞նչ ըսաւ — 7. Տիգրան և Նոյեմի ի՞նչ ըրին — 8. Տիգրան ի՞նչ ըրաւ — 9. Ի՞նչ պէս տուն վերադարձան:

ԼԱ. ԴԱՍ. — ԵՐԵՒ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

82. Երեկ շոտրոքիւն կայ. Ա. եղ վերջաւորող բայերը, ինչպէս երգել. Բ. իղ վերջաւորող բայերը, ինչպէս ստոյղ. Գ. աղ վերջաւորող բայերը, ինչպէս հազար:

83. Աներեւոյքը բային այն ձեւն է որ եղ, իղ, աղ կը վերջաւորի. բային անունն է:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

175. Օրինակել այս ընթերցուածը եւ բոլոր բայերուն վրայ նշանակել իրենց շոտրոքիւնները Ա. Բ. Գ. գրելով:
176. Սորվիլ այս ընթերցուածին ուղղագրութիւնը:
177. Սորվիլ հետեւեալ բառերը.
Յուցափեղկ, նուագարան, խաւաքարտ, աճպարար, լար:
178. Աներեւոյթի վերածել այս ընթերցուածին բոլոր բայերը:
179. Գտնել տասը բայ Ա. շոտրոքեակէն, տասը բայ Բ. էն, տասը Գ. էն:

26. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԽԵՂԸ ՏՂԱՆ

Մուծ անտառին մէջ ման կուգամ.

Բուն ու ազուս ինձ կ'ըսեն.

— Ա՛խ, խեղճ տղայ, ի՞նչ տըխուր ես.

Դուն հիւանդ ես,» ինձ կ'ըսեն:

Մուծ անտառին մէջ ման կուգամ.

Յող կը շաղէ ծառերէն.

— Ա՛յ, խեղճ տղայ, վէրբըդ խոր է.

Վըրադ կուլանք,» ինձ կ'ըսեն:

ԼԲ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՓՈՍՏՈՒՌԱՆԵՐՆ ՈՒ ԼՈՒՍՆԵՒԿՆԵՐԸ

Փոստուսաները մանուկներուն ամէնէն սիրելի կենդանիներն են. զանոնք կը ճանչնաք դուք: Գարնան ծաղիկներուն հետ երեւան կ'ելլեն: Ասոնք ճանճիկներ են որ մանրիկ աստղերու պէս պլլալալով կը թռչտին օդին մէջ: Սակայն ասոնց լոյսը շատ տկար ու աղօտ է լուսնիկներուն քով որոնք կը գտնուին Հարաւային Ամերիկայի մէջ: Ասոնք այնչափ գեղեցիկ են որ Բերուի կիները անոնցմով գլուխնին և ուլերնին կը զարդարեն: Հնդիկները զանոնք իրենց ոտքին մասերուն կը փակցնեն ճամբանին լուսաւորելու և օձերը փակցնելու համար: Անթիլեան կղզիներուն մէջ լամպարի տեղ կը գործածուին: Տեսակ մը թռչուն կայ բայտ անտունով որ լուսնիկները կաւէ դնդիկներու վրայ փակցնելով, իր բոյնը կը լուսաւորէ: Ասոնց լոյսը յատուկ կուգայ իրենց դիտուն և եղջիւրիկներուն վրայ զանուած փոստուսաներէն, որ մութին մէջ լոյս արտադրելու յատկութիւնը ունի:

Հ Ր Ա Հ Ա Գ Ն Ե Ր

180. Պատասխանել հետեւեալ հարցումներու բերանայի եւ գրաւոր.

1. Փոստուսան ի՞նչ է: — 2. Ե՞րբ երեւան կ'ելլէ: — 3. Ի՞նչ կ'ընէ:
4. Ի՞նչպէս է իր լոյսը: — 5. Ասոր նմանող ուրիշ ի՞նչ կենդանիներ կան:
- 6. Լուսնիկները ո՞ւր կը գտնուին: — 7. Բերուի կիները ի՞նչ կ'ընեն լուսնիկներով: — 8. Հնդիկները ի՞նչ կ'ընեն: — 9. Ինչո՞ւ համար: — 10. Ուրտեղ իբր լամպար կը գործածուին: — 11. Անթիլեան կղզիները ո՞ւր կը գտնուին: — 12. Բայտ Թռչունը ի՞նչ կ'ընէ լուսնիկները: — 13. Ուրկէ առաջ կուգայ անոնց լոյսը: — 14. Փոստուսան ի՞նչ յատկութիւն ունի:

ԼԲ. ԴԱՍ. — ԲԱՅԵՐ ՎԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

84. Բայը թիւով ու դէմքով կը համաձայնի իր ենթակային հետ:

85. Բայը յոքնակի կը դրուի երբ իր ենթական յոքնակի է, կամ երբ քանի մը եզակի ենթակայ ունի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

181. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել բայերը:
182. Կրկին օրինակել, եւ ստորագծել ենթակաները:
183. Բերանացի ըսել թէ ո՞ր ենթակաները ո՞ր բայերուն կը պատկանին:
184. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
185. Սորվիլ հետեւեալ բառերը.
Փոստուս, լուսնիկ, աղօտ, Բերու, Հնդիկ, Անթիլեանք, բայտ, փոստուս, եղջիւր, ուլ:
186. Յոքնակիի վերածել այս Ընթերցուածը:
187. Խոնարհել զարդարել եւ փակցնել բայերը:

27. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՍՏՈՒՌԱՆ

Ես կը սիրեմ բացասաններն անտառին Գիշերուան զով ժամերուն մէջ առանձին. Ըստուերին մէջ կը գտնեմ լոյս բաւական, Զի իմ կանթեղս է միշտ ինձմէ անբաժան: Երբ երկինքին մարին շողերն ու կայծեր, ճամբուն վըրայ, զոր մուծ գիշերն է անցորդին: Ես ցոյց կուտամ իրեն շաւիղն անցորդին: Աստղերն երբոր Թաւ քօղի տակ պահուելովն: Սակայն ցորեկն երբ ճանաչուիլն արեւուն Կ'ըլլան դաշտերն ու քաղաքներն ողորուն, Ես կը քաշուիմ. ինձմէ մեծեր Թոյլ ճգնին Լուսաւորել Թատերաբեմն աշխարհին:

ԼԳ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՄՐՋՈՒԻՆԸ ԵՒ Ա.Ղ.Ա.ԻՆԻՆ

Մըջիւն մը ջուրը ինկեր էր, ու քիչ մնացեր էր որ խեղդուի, երբ աղաւնի մը որ հոն մօտը կը կենար, կը տեսնէ զայն ու կը մեղքնայ: Անմիջապէս կ'երթայ կառուցովը խոտի շիւղ մը կը բերէ, և կամայ մը ջուրին երեսը կը դնէ, որպէս զի մըջիւնը տեսնէ զայն ու վրան ելլելով աղատի: Արդարեւ մըջիւնը կը նշմարէ թռչունին ըրածը, և անոր բարութենէն օգտուելով, շիւղին միջոցաւ դուրս կ'ելլէ ջուրէն, ու կ'ազատի խեղդուելէ: Իսկ աղաւնին իր գործէն գո՞՛ կ'երթայ ծառի մը վրայ կը թափ: Այդ միջոցին որսորդ մը անցաւ հոնկէ, տեսաւ ճերմակ թռչունը ծառին կանաչ տերեւներուն մէջ, հրացանը լեցուց և պատրաստուեցաւ զայն սպաննելու: Բայց մըջիւնը հոն է. չլլտի թողու որ իր բարերարը վիրաւորուի: Ուստի կ'երթայ անմիջապէս որսորդին ոտքը կը խայթէ, որ նեղուելով, վար կը ծռի, և աղաւնին ծառին վրայէն կը թռի: Բարի գործ մը երբեք անվարձ չի մնար:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 188. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Մըջիւնը ո՞ր ինկեր էր: — 2. Աղաւնին ի՞նչ ըրաւ — 3. Ինչո՞ւ շիւղը բերաւ — 4. Մըջիւնը շիւղը նշմարելով ի՞նչ ըրաւ — 5. Որսորդը ի՞նչ ըրաւ — 6 Մըջիւնը թողո՞ւց որ որսորդը իր բարերարը սպաննէ: — 7. Ի՞նչ ըրաւ — 8. Որսորդը ի՞նչ ըրաւ:
- 189. Սորվիլ հետեւեալ բառերը.

Մըջիւն, աղաւնի, շիւղ, օգտուիլ, խայթել, անվարձ:
- 190. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը:

ԼԳ. ԴԱՍ. — ՍՍ. ՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ

86. Բային վերջաւորութենէն կը հասկցուին իր թիւը, դեմքը, եղանակը, ժառանակը:

87. Բային վերջաւորութիւնները ամէն լծորդութեան մէջ կը տարբերին իրարմէ:

88. Սահմանական ներկային վերջաւորութիւնները հետեւեալներն են.

Ա.	Լծորդութեան մէջ՝	եւ, ես, ե, եւի, եի, են:
Բ.	»	» իւ, իս, ի, իւի, իի, ին:
Գ.	»	» աւ, աւս, այ, աւի, աի, աւն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

191. Օրինակել այս ըթերցուածը եւ ստորագծել ըստերուն սահմանական ներկայները:

28. ԱՅՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԿԱՊՈՅՑ ՊԱՐԻՆԸ

Պառաւ կին մը որ մը կողով մը շալկած	Տըւաւ փայտի մեծ ու պզտիկ կտորներ:
Միրզով լեցուն զանազան,	Տըղուն ձեռքը կար շատ բան.
Լեռնէն կ'երթար անկասկած,	Այդ փայտերը ի՞նչ ընէր:
Երրորդը պաւ բար մ'ահագին	Երկու հատը ծոցը զըրաւ
Իր ոտքին,	Դժուարաւ,
Միրզերն ալ վար թափեցան:	Յետոյ զընաց իր ճամբան:
Ճիշդ այդ պահուն գեղուկ տղեկ մը	Բայց տեսաւ որ անոնք զինքը կը նեղեն.
Կ'անցնէր	Մոցէն քաշեց ու ժգնակի.
Շուտ վազելով անդադար	Փայտերն էին ոսկեղէն:
Ձեռքը բըռնած ձրքարներ:	Եւ մեր տղեկն ըզզաց մեծ ցաւ.
«Տըղաս, ըսաւ կընիկն անոր	Ետ դարձաւ.
Խընդրաւոր,	Ոչ փայտ զըտաւ, ոչ ոսկի:
Ի՞նչ մը կեցիր, մի՞ փուծար.	Կապոյտ պարիկն էր այդ պառաւն
Սա միրզերը մէկտեղ ժողվենք, կ'ա-	արտաոց
ղաչեմ.	
Գիւղէն կու գամ շատ յոգնած,	Որ գիւղին մէջ կը շրջէր,
Եւ առանձին կարող չեմ»	Եւ աղջըկանց ու աղջոց
Երբ տղան գործն աւարտեց	Ոսկի, զոհար ու մարմաշներ
Խանդով մեծ.	Կը բաժնէր.
Պառաւն անոր բով զընաց.	Մե՞ղբ որ տղան ճանչցած չէր:

ԼԴ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՀԵՏԱՔՐԻՐՈՒԹՅԱՆ ՎՑԱՆԳԸ

Առտու մը, երբ Մելինէ զպրոց կ'երթար, նամակ մը տեսաւ գետինը. առաւ զայն, և ուզելով հասկնալ թէ ի՞նչ կը պարունակէր, առնն տարաւ զայն, բացաւ ու կարդաց: Նամակագիրը, որուն ձեռքէն ինկած էր հաւանականաբար նամակը, կ'իմացնէր անձի մը թէ անոր մայրը ծանրապէս հիւանդ էր, և թէ կը բողձար որ գար զայն տեսնել առանց ժամանակ կորսնցնելու: Փոքրիկ հետաքրքիրը այս մանրամասնութիւնները կարդալով, զոչաց ըրածին վրայ, ու տարաւ նամակատունը յանձնեց թուղթը: Դժբախտաբար այն օրուան սուրճանդակը քիչ առաջ մեկնեց էր, ու նամակը հետեւեալ օրուան մնաց: Երբ հիւանդին որդին իրեն ուղղուած գիրը ստացաւ, անմիջապէս ճամբայ ելաւ. սակայն ուշ մնաց, և մայրը մեռեր էր արդէն զինքը կանչելով իւրեր: Խեղճ տղան անմիջեմբ մնաց վերջին անգամ իր մայրը չտեսնելուն համար:

Եթէ այդ հետաքրքիր ազջկան տեղը դուք ըլլայիք, սպանդաբար չպիտի միտիթարուէիք երբեք ձեր յանցանքովը այսպիսի վիշտ մը պատճառած ըլլալնուդ համար ուրիշին: Խղճի խայթերով պիտի տանջուէիք ձեր բոլոր կեանքին մէջ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

192. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Մելինէ ի՞նչ գտաւ գետնէն — 2. Ի՞նչ ըրաւ — 3. Նամակին մէջ ի՞նչ գրուած էր — 4. Մելինէ զայն կարդալուն զո՞հ մնաց — 5. Ի՞նչ ըրաւ այդ նամակը — 6. Նամակը ժամանակին տեղը հասա՞ւ — 7. Տղան երբ նամակը առաւ ի՞նչ ըրաւ — 8. Հասա՞ւ իր մօրը մահուընէն առաջ — 9. Եթէ դուք Մելինէին տեղը ըլլայիք, ի՞նչ պիտի զգայիք մէկուն վիշտ պատճառած ըլլալնուդ համար:

ԼԴ. ԴԱՍ. — ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՑԱՐ

89. Անցեալ անկասարին վերջաւորութիւնները հետեւեալներն են.

- Ա. Լծորդութեան մէջ՝ *եի, էիւ, էր, էիմ, էիք, էին:*
 Բ. » » *եի, էիւ, էր, էիմ, էիք, էին:*
 Գ. » » *այի, այիւ, ար, այիմ, այիք, ային:*


90. Մահնահանակն ներկան և անկասարը իրենց սկիզբը կը մասնիկը կ'առնեն:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր


193. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել անցեալ անկասարները:
194. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
195. Այս Ընթերցուածին բոլոր անկասար բայերը կասարեալի վերածել:
196. Հետեւեալ բայերը անկասար ընել.
 Ան քաղել, ես խօսիլ, դուն երգել, մենք խնդալ, դուք պարել, անոնք սորվիլ, քոյս յուզուիլ, եղբարս ճամբորդել:
197. Գ. դէմքի վերածել հետեւեալ բայերը.
 Գրեցինք, խօսեցայ, խաղացիք, մաշեցայ, մարեցայ, տաքցանք, գրեցինք, բուժեցի, լուացիր, մսեցար, պիտի ապաքինիս, կը սխալէիք, կը պոռամ, կը սողաս, կը կարենք, կը լուսաս:

29. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՐՁԻ ՀԱՄԱՐ

Փոքրիկ տղեկ մը զոր փուշն էր խայթեր, իր ցանն արցունքով հօրը կը պատմէր.
 « Ինչո՞ւ գեղեցիկ արտին մէջ մեր տան
 « Բուներ է արդեօք այս Թուփն անպիտանս
 « — Որպէս զի փորձով սորվիս դուն, տըղասս,
 « Թէ պէտք է չարէն միշտ հետու կենասս »



Տեսե՛ք առ փիղին պատկերը, անառկու կենդանի մըն է (Տես էջ 78)



Օր մը ըսաւ շատգրուց
Անձեղն անուշ խայտիսին.
(Տես էջ 79)



Այս դաճեցուն վրայ նեփ ներմակ ֆոլ մը պիտի փռուի (Տես էջ 93)

ԼԵ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԿԱՏՈՒՆ ՈՒ ԵՆԻՔՈՆԻԿԸ

Արուսեակ պատուհանին առջև նստած կար կը կարէր, երբ տանը կատուն իր ձագին հետ եկաւ պառկեցաւ գետինը, ու սկսաւ լիզել իր փխիկը, զգուելով զայն և գուրգուրալով անոր վրայ: Սենեակին պատուհանը բաց էր. յանկարծ եկքանիկ մը ներս մտաւ, ու սարսափահար՝ ասպին անդին նետուեցաւ, պատերուն, ձեղունին զարնուեցաւ, և վերջապէս յոգնած, գետինը ինկաւ: Կատուն խկոյն տեղէն ցատքեց, աչքերը խոշոր խոշոր բացաւ, կըռնակը կլորցուց, ձանկերը գուրս հանեց ու եկքանիկին վրայ յարձակեցաւ: Արուսեակ սաստիկ դող ելաւ. բայց խորհեցաւ որ եթէ փորձէր կատունին ճիրաններէն թռչնիկը բռնի առնել, հէք կենդանին կտոր կտոր պիտի ըլլար: Ուստի ուրիշ հնարք մը մտածեց. գնաց փխիկը առաւ ու պատուհանին առջև տանելով, վար նետակու ձե մը ըրաւ: Կատուն անմիջապէս թռչունը թողուց և իր ձագուկին քով վազեց: Այն ատուն արթուն աղջիկը եկքանիկը առաւ ու թռցուց օդին մէջ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 198. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Երբ Արուսեակ կար կը կարէր, ի՞նչ ըրաւ կատուն: — 2. Ո՞վ ներս մտաւ պատուհանէն: — 3. Ի՞նչ ըրաւ եկքանիկը: — 4. Կատուն ի՞նչ ըրաւ: — 5. Արուսեակ ի՞նչ խորհեցաւ: — 6. Ի՞նչ ըրաւ: — 7. Կատուն ի՞նչ ըրաւ: — 8. Յետոյ ի՞նչ ըրաւ Արուսեակ թռչունին:

ԼԵ. ԴԱՍ. — ԱՆՏԵՍԱԼ ԿԱՑԱՐԵԱԼ

91. Անցեալ կասարեալին վերջաւորութիւնները հետեւեալներն են.

- Ա. Լծորդութեան մէջ՝ եցի, եցիր, եց, եցիմք, եցիք, եցին:
- Բ. » » եցայ, եցար, եցաւ, եցանք, եցաք, եցան:
- Գ. » » ացի, ացիր, աց, ացիմք, ացիք, ացին:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 199. Օրինակել այս Ընթերցուածը եւ ստորագծել անցեալ կասարեալները:
- 200. Սորվիլ հետեւեալ բառերը.
Գուրգուրալ, եկքանիկ, ճիրան, սարսափահար:
- 201. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
- 202. Եզակի ընել հետեւեալ բայերը մէյ մէկ ենթակայ դնելով.
Կար կարեցին, — Պիտի խաղանք, — Կը ցատքէինք, — Մտածեցիր, — Վազեցիր, — Պիտի նկարենք, — Պիտի կտրէք, — Կը թռչնէինք, — Կը հրաւիրէք, — Խորհի՛նք, — Երագեց, — Փորձեցինք, — Կրկնեցիր, — Կը զլորենք, — Կը հեւար, — Պիտի հաւատար, — Խնայեցէ՛ք:

30. ԱՐՏԱՍԱՆՈՒՅԻՒՆ. — ՕՋՆ ՈՒ ՓՈՍՈՒՌԱՆ

Փոսուռայ մը կը խաղար Կնճիններու տակ դալար. Մօտեցաւ օձ մ'անոր խն, Ու զայն խոցեց կարեւոր, — Ի՞նչ ըրի, օձ նենգաւոր, Հարցուց ճանճիկն հէք անոր. — Ամէն գիշեր լուսարձակ Կը փայլէիր համարձակ:

ԼԶ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԵՐԲ ԶՄԵՌ ԳՍԵ

Սուրբէն հինգ տարեկան տղեկ մըն էր. ամառ օր մը երբ իր մեծ քրոջը հետ դպրոցէն կը դառնար, իր շուրջը զիտելով ըսաւ. «Պիտի փափաքէի զիտնալ թէ ի՛նչպէս պիտի ըլլայ այս դաշտը, այս ծառերը, այս փողոցներն ու լեռները, երբ ձմեռը գայ. քուրի՛կ, բացատրէ՛ ինձի:» Քոյրը պատասխանեց. «Կը տեսնե՞ս սա լեռները հեռուն, կանանչ, կապոյտ, մանիշակագոյն. անոնք ամէնքն ալ պիտի ձերմկին: Բոյր ծառերուն տերեւները պիտի թափին, ըսցի կաղնիէն, նոճիէն, մայրիէն ու եղևինէն որոնք մշառադալար են: Զիւնէ ծաղիկներ վար պիտի կախուին չոր ոստերէն, և սառելով բիւրեղի պէս թափանցիկ ու փայլուն պիտի ըլլան: Այս դաշտերուն վրայ ձեռի ձերմակ քօղ մը պիտի փոսի: Երկինքին երեսը՝ արեւը պիտի դեղնի, և ամպերը ամէն կողմէն պիտի ծածկեն զայն: Թռչունները պիտի մեկնին, պիտի երթան հեռու երկիրներ, որովհետեւ եթէ հոս մնային, պիտի սառէին ցուրտէն:»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

203. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Սուրբէն ի՞նչ ճարտուց իր քրոջը — 2. Քոյրը ի՞նչ պատասխանեց լեռներուն մասին — 3. Ծառերո՞ւն նկատմամբ ինչ ըսաւ — 4. Չոր ոստերէն վար ի՞նչ պիտի կախուին ըսաւ — 5. Այդ ձիւնէ ծաղիկները յետոյ ի՞նչ պիտի ըլլան ըսաւ — 6. Դաշտերուն համար ի՞նչ ըսաւ — 7. Արեւո՞ւն համար — 8. Թռչուններո՞ւն համար

ԼԶ. ԴԱՍ. — ԲԱՑԱՐՁԱԿ ԵՒ ԱՆԿԱՑԱՐ ԱՊՍՈՒՆԻ

92. Բացարձակ ապառնին կը շինուի սահմանական ներկային կը մասնիկին տեղ՝ պիտի դնելով, ինչպէս. կը սիրեմ, պիտի սիրեմ: Անկասար ապառնին կը շինուի սահմանական անկատարին կը մասնիկին տեղ՝ պիտի դնելով, ինչպէս. կը սիրեի, պիտի սիրեի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

204. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել բացարձակ ապառնիներն ու անկասար ապառնիները:
205. Սորվիլ հետեւեալ բառերը.
Կաղնի, նոճի, մայրի, եղևին, մշտադալար, Թափանցիկ:
206. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը:
207. Սահմանական ներկայի վերածել այս Ընթերցուածին բացարձակ ապառնիները, եւ սահմանական անկատարի՝ անկասար ապառնիները:

ՅԻ. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԶՄԵՌ

Ո՞ւր էր Թըռեր, գարնան օրե՛ր,
 Զառ սարերու հովին հետ.
 Կ'ըսեմ. ելէ՛ք նախշուն հաւեր
 Վառ շրթունքով վարդին հետ
 Աղբիւր կու գար այս քարափէն.
 Կագան այտեղ երգ կ'ըսէր.
 Խոր ձըմակէն կու գար երէն.
 Սիրտը ուրախ կը զարնէր:
 Հիմայ ցուրտ է. ձիւնն է եկեր,
 Չորս դիս ձըմեռ ու սառոյց.
 Ա՛խ, ա՛լ չըկան արեւ օրեր.
 Սիրտս ալ ստուեր է վաղուց:

Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԼԷ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԱԼԿԷՌԵՒՆ ԲՈՅԵՐ

Օգոստոսի վերջերը, իրիկուն մը, թխաթոյր ամպեր հորիզոնը պատեցին: հովը սկսաւ փչել, փայլակներ կայծկըլտացին օդին մէջ, և հեռուէն լսուեցաւ որոտման խուլ գոռումը: Նուարդ սարսափահար՝ մօրը քով վազեց. բոլոր անդամները կը դողդղային: Մայրը ըսաւ անոր. «Աղջիկս, կայծակը շատ կ'սպառնայ, բայց հազուադէպ է որ վնաս հասցնէ: Ես այսչափ տարիներ ապրած եմ, և չեմ տեսած երբեք կայծակնահար մէկը, մինչդեռ դանազան արկածներով շատերու մահուան ամէն օր ականատես կ'ըլլանք: Ուրեմն, շատ մը վտանգներ կ'սպառնան մեր կեանքին առանց որոտումին չափ աղմուկ հանելու: Բայց վախնալով կամ յոռետեսութեամբ չէ որ կրնանք խուսափիլ անոնցմէ, միայն թէ դժբախտ կ'ըլլանք: Մտիկ ըրէ՛ սա պատմութիւնը, և օրինակ ա՛ն անկէ. «Ալկէոն անունով փոքրիկ թռչուն մը կայ որ ծովեզերքի խարակներուն վրայ բոցն կը դնէ, մամուռներու մէջտեղը: Մըրիկի ատեն՝ ծովը կ'ուռի, կոհակները կը բարձրանան, հովը ուժգին կը մռնչէ և կը ցնցէ բոցը: Սակայն ալկէոններուն մայրը հանդարտ կը նիրհէ, որովհետեւ հազուադէպ է որ ծովը տանի անոր թուխար:» Մենք ալ անոր նմանի՛նք. մեր յոյսը դնենք Նախախնամութեան վրայ. ու մեր քաջարքութեամբ յաղթենք կեանքի բոլոր վտանգներուն և փոթորիկներուն:»

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

208. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Իրիկուն մը ի՞նչ պատահեցաւ — 2. Նուարդ ի՞նչ ըրաւ — 3. Նուարդին մայրը ի՞նչ ըսաւ — 4. Որո՞նք պատմութիւնը պատմեց անոր — 5. Պատմեց՞ք համառօտ կերպով ալկէոնին պատմութիւնը — 6. Ի՞նչ խրատ տուաւ Նուարդին — 7. Ինչո՞վ կրնանք յաղթել կեանքի վտանգներուն:

ԼԷ. ԴԱՍ. — ՀՐԱՆՄԱԹԱԿԱՆ

93. Հրաւայակաւին վերջաւորութիւններն են.
 Ա. Լծորդութեան մէջ՝ կ', եզե՛ք, ե՛նք:
 Բ. » » կ', եզե՛ք, ի՛նք:
 Գ. » » ա', ազե՛ք, ա՛նք:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

209. Օրինակել այս Ընթերցուածը, ստորագծել հրաւայակաւները, ու կրկին ստորագծել ներկայները:
 210. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
 211. Սորվիլ հետեւեալ բառերը.
 Թխաթոյր, կայծկըլտալ, որոտում, գոռում, սարսափահար, սպառնալ, հազուադէպ, ականատես, յոռետեսութիւն, խուսափիլ, խարակ, մամուռ, մրրիկ:
 212. Խոնարհել կայծկոջայ, ուռիչ բայերը:

32. ԱՐՏԱԱՆՈՒԹԻՒՆ. — ՆԱԻՍՍՈՒՆ

Նաւաստի մը կը մեկնէր
 Դէպի հեռու երկիրներ,
 «Կ'երթաս, ըսաւ մէկն իրեն,
 «Բայց չե՞ս վախնար ծովերէն:
 «Հայրդ ու մեծ հայրդ ալ գացին
 «Ու զո՞ն եղան արկածին:
 «Իսկ քու մեծ հայրդ ո՞ւր մեռաւ:
 «Իր անկողինն մէջ հարկաւ:
 «Հապա՛ այնտեղ դուն ի՞նչպէս
 «Ամէն գիշեր կը ննչես:»

ԼԸ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — Ա.Ջ ՉԵՌՌԻՆ ԵՒ ՉԱԽ ՉԵՌՌԻՆ

Օր մը աջ ձեռքը ձախին կ'ըսէ. «Դուն աւելորդ, ընդ մըն ես մարդուն համար. աւելի աղէկ էր որ ընտել գոյութիւն չունենայիր, քանի որ բանի մը չես ծառայիր: Ամէն բանի մէջ ես եմ որ օգտակար կ'ըլլամ իրեն: Եթէ աշխատիլ ուզէ, ես եմ որ կը գրեմ, կը կարեմ, կը հերկեմ, կը ցանեմ, կը հնձեմ, կը քաղեմ: Եթէ անօթեանայ, ես եմ որ զինքը կը կշտացնեմ: Եթէ վտանգի մը հանդիպի, ես եմ որ կը պաշտպանեմ զինքը: Առանց ինծի, ոչ կրնայ ձի հեծնել, ոչ պատերազմիլ, և ոչ իսկ հագուիլ: Հողագործէն սկսեալ մինչև դիւանագէտները, թագաւորները պէտք ունին ինծի: Իսկ դուն ի՞նչ կ'ընես: — Յանցանքը իմս չէ, պատասխանեց ձախ ձեռքը, քեզի չափ գործունեայ չըլլալուս: Մարդիկ եթէ քեզի չափ զիս ալ գործածէին, թերեւս ես ալ քու ըրածներդ ընէի: Սակայն պէտք չէ ուրանաս որ դուն շատ դժուարութիւն պիտի կրէիր, եթէ ես չըլլայի. որովհետև ամէն բանի մէջ, կարօտ ես ինծի:»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր


213. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի և կրաւոր.
 1. Աջ ձեռքը ի՞նչ կ'ըսէ ձախ ձեռքին — 2. Եթէ մարդ աշխատիլ ուզէ, ո՞ր ձեռքը կը գործածէ: — 3. Ինչէ՞ր կ'ընէ աջ ձեռքով: — 4. Առանց աջ ձեռքին ձախը կրնա՞յ օգտակար ըլլալ մարդուն: — 5. Ի՞նչ պատասխանեց ձախ ձեռքը: — 6. Մարդիկ եթէ ձախն ալ գործածէին աշին չափ, ի՞նչ կը պատահէր: — 7. Ի՞նչ կը հետեւի այս երկու ձեռքերուն խօսակցութենէն:
214. Սորվիլ հետեւեալ բառերը.
 Գոյութիւն ունենալ, հերկել, հնձել, քաղել, դիւանագէտ, ուրանալ:
215. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
216. Խոն սրիկ գրաւոր այս Ընթերցուածին բայերուն բոլոր ստորագրական ներկայներն ու անկասարները:

ԼԸ. ԴԱՍ.— ԱՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ԵՒ ԱՆԿԱՏԱՐ

94. Ստորագրական թէ ներկան և թէ անկասարը սահմանական ներկայէն և անկասարէն կը շինուին անոնց առջեւի կը մասնիկը ջնջելով, ինչպէս. կը գրեմ, գրեմ. կը գրէի, գրէի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

217. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել ստորագրական ներկայները եւ անկասարները:
218. Ստորագրական ներկայի, յետոյ անկասարի վերածել հետեւեալ բայերը.
 Կը հագամ, կը ջանամ, կը պտըտիմ, կը խմեմ, կը հառաչես, կը մերժես, կը խօսիս, կը հեւայ, կը ծիծաղի, կը մանէ, կը մեկնիր, կը պարսպիս, կը դառնանք:



33. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԵՐԿՈՒ ՍԵՐՐՆԵՐ

Խոնն արօրի մը ժանգոտած համբուն
 Հանգիստէն երկար,
 Տեսաւ իր եղբայրն որ շողաղ, փայլուն՝
 Դաշտէն կը դառնար,
 «Նոյն նիւթէն շինուած, բազուկներէն նոյն,
 Ըսաւ, ո՞վ եղբայր,
 «Ինչու ես աղօտ՝ իսկ պայծառ ես դունս
 «— Ես կ'աշխատիմ յարս»



Հիմայ ցուրս է. ձիւնն է եկեր,
Զորս դիս ձրմեռ ու սառույց.
(Տես էջ 93)



Ծերունի մը էտուն վրայ հեծած կ'երթար. իր դեռասի տղան ալ քաշելով
կը հետեւէր իրեն: Ճամբան դէմերեքին էլան երկու կիներ (Տես էջ 102)

ԼՔ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՑՈՒՆ

Հարուստ մարդ մը որ ընտանիք չունէր, կ'ըսէր օր մը իր բարեկամներէն մէկուն. «Կ'ուզէի շատ հարուստ ըլլալ. հասութեաբեր կալուածներու տիրանալ, և զանազան եկամուտներ ունենալ, որպէս զի կարենայի իմ բոլոր երազած բարիքներս իրագործել: — Որո՞նք են այդ երեւակայած բարիքներդ, հարցուց իր բարեկամը: — Ազքատներուն օգնել, դպրոցներ կառուցանել, մատենադարաններ հիմնել, որբանոցներ հաստատել, արուեստանոցներ բանալ. դժբախտաբար ունեցածս այնքան քիչ է որ չի բաւեր այս փափաքած գեղեցիկ գործերուս: — Ամէն մարդ կրնայ բարիք ընել իր կարողութեան ներած չափով: Եթէ բոլոր բաղձացած բաներդ ընելու չի բաւեր ունեցածդ, գոնէ մէկ հատին կը բաւէ անշուշտ. նախ այդ մէկ հատը ըրէ՛,» ըսաւ անոր իր գործնական խօսակիցը:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 219. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Հարուստ մարդը ի՞նչ կ'ըսէր իր բարեկամին: — 2. Ի՞նչ հարցուց բարեկամը անոր: — 3. Ի՞նչ պատասխանեց միւսը: — 4. Ի՞նչ խորհուրդ տուաւ անոր գործնական խօսակիցը:
- 220. Սորվիլ հետեւեալ բառերը.

Հասութեաբեր, կալուած, տիրանալ, եկամուտ, իրագործել, կառուցանել, մատենադարան, արուեստանոց:

ԼՔ. ԴԱՍ. — ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ ԿԱՏ ԳԵՐԻԱՑ

- 95. Աներեւոյթը կը շինուի սահմանական ներկային առաջին դէմքէն, առջեւի կըն վերցնելով, ու վերջի մ գիրը շի փոխելով, ինչպէս. Կը խօսիմ, խօսիլ:
- 96. Ներկայ ընդունելութեան վերջաւորութիւնն է՝ ող, անցեալինը՝ ած, ետ, ապառնիինը՝ երու կամ աղու:
- 97. Աներեւոյթը և ընդունելութեան երեք ժամանակները անորոշ եղանակ կամ դերքայ կը կոչուին:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 221. Օրինակել այս ընթերցուածը, եւ ստորագծել աներեւոյթները:
- 222. Կրկին օրինակել եւ ցոյց տալ անցեալ եւ ապառնի ընդունելութիւնները:
- 223. Սորվիլ այս ընթերցուածին ուղղագրութիւնը:
- 224. Խոնարհել գործարեղ, փափափիլ, բաղձալ բայերը:
- 225. Գտնել հետեւեալ բայերուն ներկայ եւ անցեալ ընդունելութիւնները.

Ազատիլ, սորվիլ, նայիլ, համոզել, սողալ, կրկնել, հառաչել, փրկուել, հազալ, լողալ, պոռալ, սառիլ, մարիլ, վառել, ներկել, ծամել, մարսել, խնդալ, ծաղրել, զոցել, գծել, հաւտալ, ծառայել, մխիթարել, վստահիլ, կազալ, ներել, կարել, խմել:

34. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՎԱՐԳՆ ՈՒ ԿԱԿԱԶԸ

Փունջի մը մէջ, ծաղիկներով լի նարտ, կակաչն օր մը եղաւ վարդին զըրացի. Շուտով առաւ բուրբոն անոր քաղցրահոտ, Պէտք է ընտրել միշտ ընկերներ խելացի:

Խ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ ԿԱՐԾԻՔԸ

Ծերունի մը իր էշուն վրայ հեծած կ'երթար. իր դեռատի տղան ալ քալելով կը հետեւէր իրեն: Ճամբան դէմերնին ելան երկու կիներ որոնք սկսան այպանել զինքը, ըսելով. «Ի՞նչ անձնասէր մարդ է սա ծերուկը. ինք էջը հեծեր է, և թող տուեր է որ խեղճ տղան շնչասպառ հտեւէն վագէ:» Ծերունին ասիկա լսելով, էշէն իջաւ, ու տղան նստեցուց: Այս անգամ ալ դէմը կլլողները սկսան դիտողութիւն ընել թէ չէր վայրեր որ երիտասարդը հանգչէր և ծերունին քալէր: Այն ատեն տղան ալ իջաւ, ու էշուն երասանակէն բռնելով, սկսան երկուքն ալ հետի երթալ: Պանի մը մարդիկ որոնք քովերնէն կ'անցնէին, ասիկա տեսնելով, ծիծաղեցան. «Ի՞նչ անմիտ մարդիկ են ատնք, կ'ըսէին, էշ ունին և վրան չեն հեծներ:» Այն ատեն հայր ու տղայ համոզուեցան թէ ինչ որ ալ ընեն, մարդիկ միշտ բան մը պիտի գտնեն ըսելու: Ուստի որոշեցին որ իրենք իրենց լաւագոյն դատաստանը ընեն, և թողուն որ ամէն ոք իր խելքին փչածը ըսէ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

226. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Ծերունին ո՞ր կ'երթար. — 2. Իր տղան ի՞նչ կ'ընէր. — 3. Ճամբան ո՞վ ելաւ դէմերնին և ի՞նչ ըսին. — 4. Ծերունին այս խօսքերը լսելով ի՞նչ ըրաւ. — 5. Այս անգամ դէմը կլլողները ի՞նչ դիտողութիւն ըրին. — 6. Այն ատեն ի՞նչ ըրաւ տղան, ի՞նչ ըրաւ հայրը. — 7. Իրենց քովէն անցնող կիները ի՞նչ ըսին. — 8. Ասոր վրայ հայր ու տղայ ի՞նչ մտածեցին:

227. Սորվիլ այս ընթերցուածին ուղղագրութիւնը:

228. Սորվիլ հետեւեալ բառերը.

Այպանել, հետի, շնչասպառ, երասանակ,

Խ. ԴԱՍ. — ԳՏՆԵԼ, ՄՏՆԵԼ, ԵԼԼԵԼ, ԻՋՆԵԼ, ՀԵՄՆԵԼ ԲԱՍԵՐԸ

98. Գտնել բայը Ա. լծորդութեան սիրելին պէս կը խոնարհուի, և կատարեալը կ'ըլլայ գսայ, գսար, գսաւ, գսանի, գսախ, գսան: Իսկ հրամայականը կ'ըլլայ. գսի՛ր, գսնի՛նք, գսի՛ք:

99. Գտնելին պէս կը խոնարհուին մենեղ, եղեղ, իջնեղ, հեծնեղ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

229. Օրինակել այս ընթերցուածը, եւ ստորագծել նեղ վերջացող բայերը:

230. Խոնարհել բերանացի իջնեղ, գսնեղ, եղեղ բայերը:

231. Գտնել նեղ վերջացող երեք բայեր եւ խոնարհել զանոնք գրաւոր:

232. Գտնել հետեւեալ գոյականներէն շինուած բայեր.

Մշակ, պատասխան, ծիծաղ, համբերութիւն, յուզում, լուռութիւն, օրինակ, քրտինք, կար, անձրև, տարբութիւն, ծառայ, խաղ, աշխատանք, բժիշկ:



35. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՀԱՅԼԻՆ

Փոքրիկ Տիրան հայլիին մէջ կ'գմայլէր
 Իր դէմքին.
 «Շո՛ւտ տեղը դիր, գոչեց մայրիկն անհամբեր,
 Այդ հայլին:
 «— Իմ պատկերս հոն տեսնել կ'ուզեմ, պողոտայ ան
 վերջապէս,
 Ու կը ճըչէր, կու լար, կ'ողբար բարձրածայն
 խենդի պէս:
 «— Տեսնե՞լ կ'ուզես, հարցուց մայրը, նայէ՛ լաւ:
 Եւ Տիրան
 Իր զայրոյթովն ահուելի դէմք մը տեսաւ
 Ինքն էր ան:

ԽԱՆԸՆԹԵՐԳՈՒԱԾ. — ՄՈՒԿԵՐԸ

Այս առտու, անկողնիս մէջ կը կարգայի, երբ թիթե
չուկ մը ուշադրութիւնս դարձուց դէպ ի սննեակին մէկ
անկիւնը, ուրկէ մուկ մը գուրս ելաւ, յետոյ ետ քաշ-
ուեցաւ, և բոպէ մը ետքը



նորէն երեւան ելաւ հետը բե-
րելով ուրիշ մուկ մը որուն ա-
կանջէն խածած էր, և որ ծեր
կ'երեւար: Ծակին հղերքը թո-
ղուց զայն, ու սխաւ սննեա-
կին բոլոր անկիւնները պտը-
տիլ, ու բերնին մէջ, թաթիկ-
ներուն մէջ առնելով կը բերէր

անոր բոլոր հացի փշրանքները, բոլոր շօթի կտորուանք-
ները որոնք թէյի սեղանէն թափեր էին առջի իրիկունը:
Ծեր մուկը անշարժ կեցած, խարխափելով կը գտնէր իր
առջին զրուած ուտելիքները, և ասկէ կը գուշակէի թէ
կոյր էր: Ու հասկցայ թէ աչքիս առջև ունէի զաւակ մը
որ իր տկար հայրը կը սնուցանէր: Յանկարծ սննեակիս
դուռը բացուեցաւ: Երիտասարդ մուկը ճշոց մը արձակեց,
և փութաց ձերունին ծակէն ներս մտցնել, որուն ետեւէն
ինքն ալ աներեւոյթ եղաւ: Այս տեսարանը մտածել տուաւ
ինձի այդ չնչին կենդանիին խորհելու և զգալու կարողու-
թեան վրայ:

Հ Ի Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 233. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Այս առտու ինչ պատահեցաւ բեզի: — 2. Մուկը ո՞վ բերաւ իրեն հետ: — 3. Յետոյ ի՞նչ ըրաւ: — 4. Ծեր մուկը ի՞նչ կ'ընէր: — 5. Ի՞նչ պէս էր: — 6. Ի՞նչ ունէիր աչքիդ առջև: — 7. Յանկարծ ի՞նչ եղաւ: — 8. Մուկը ի՞նչ ըրաւ: — 9. Այս տեսարանը ի՞նչ խորհիլ տուաւ բեզի:

ԽԱՆԸՆԹԵՐԳՈՒԱԾ. — ՄՈՒԿԵՐԸ

100. Առնէ՛ք բայը Ա. լծորդութեան պէս կը խոնարհուի, և կատարեալը կ'ըլլայ առի, առիւ, առաւ, առիւնք, առիւք, առիւն: Հրամայականը կ'ըլլայ ա՛ռ, առնե՛նք, առե՛ք:

101. Այսպէս կը խոնարհուին խաճնէ՛ք, բուրնէ՛ք, պագնէ՛ք:

Հ Ի Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 234. Օրինակել այս ըթերցուածը, եւ ստորագծել նէ՛ վերջացող բայերը:
- 235. Սորվիլ հետեւեալ բառերը.
Շօթ, խարխափել, ճշոց:
- 236. Սորվիլ այս ընթերցուածին ուղղագրութիւնը:
- 237. Խոնարհել առնէք, խաճնէք, բուրնէք, պագնել բայերը:

36. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՏԵՐԵՒԸ

Ի՞նչ ցօղունէ՞դ զատուած դուն,
Խեղճուկ տերեւ ազագո՛ւն,
Ո՞ր կողմ կ'երթաս — Չեմ գիտեր.
Մըրիկն օր մը խորտակեց
Նեցուկս ուժեղ՝ կաղնին մեծ:
Յողողող շունչով զեփիւռներ
Եւ հիւսիսակն ալ հըզօր
Զիս այն օրէն կը վարեն
Դէպ ի դաշտերն անտառէն,
Եւ լեռներէն դէպ ի ձոր:
Կ'երթամ յաւէտ հովաբախ,
Միշտ անարտունջ և անվախ
Ուր ամէն բան կ'երթայ յար.
Թերթը վարդին հողմավար,
Մուրտին տիրեն ալ մուլար:

ԽԲ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՏՂՈՒ ԳՈՐՈՎ.

Յովհաննա՛ Վիգդոր-Հիւկոյի, Քրանսացի մեծ բանաստեղծին թոռն է: Օր մը, յանցանքի մը համար իր ծնողքը զինքը պատժել ուզելով, սենսակի մը մէջ կը բանտարկեն, և ցամաք հացի կը դատապարտեն: Վիգդոր-Հիւկո, որ իր թոռը շատ կը սիրէր, անմիջապէս կը հասնի, և տղուն տխուր վիճակը իր սրտին դպչելով, աման մը անուշ կը տանի անոր դաղտուկ: Տղուն ծնողքը ասիկա իմանալով կը զայրանան, համբերութիւննին կը հատնի, ու կը դանգատին իրենց հորը տկարութեանը մասին, ըսելով թէ շատ երես կու տայ Յովհաննային, թէ աչք կը գոցէ անոր յանցանքներուն, և թէ կարելի չէ այս պայմաններուն մէջ տղան կրթել: Վիգդոր-Հիւկո բոլոր ըսածներնուն կը հաւանի, գլուխը կը ծռէ ու կ'ըսէ. «Իրաւունք ունիք, չեմ կրնար ինքզինքս արդարացնել, իմ ներողամտութիւնս կրնայ պատճառ ըլլալ որ տղան անկիրթ մնայ. ուստի պատժեցէ՛ք, ցամաք հացի դատապարտեցէ՛ք զիս:» — «Այո՛, արժանի ես, ըսին իր ընտանիքին անդամները կատակելով, և պիտի դատապարտենք զքեզ:» Այն ատեն Յովհաննան իր աղուոր աչքերը մեծ հորը վրայ յառած, ցած ձայնով մը կ'ըսէ անոր. «Հոգ մի՛ ընեք, մեծ հայրիկ, ես անուշ կը բերեմ քեզի:»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

238. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Ի՞նչ պատահած էր Յովհաննային — 2. Մեծ հայրը ի՞նչ տարաւ անոր — 3. Ծնողքը երբ իմացան, ի՞նչ ըսին — 4. Ի՞նչ պատասխանեց Վիգդոր Հիւկո — 5. Ընտանիքը ի՞նչ ըսաւ — 6. Յովհաննան ի՞նչ ըսաւ իր մեծ հորը:

ԽԲ. ԴԱՍ. — ՆՈՒ ԵՒ ԶՈՒ ՎԵՐՋԱՑՈՂ ԲԱՅՆԵՐԸ

102. Հասնիչ և թոչիչ բայերը Բ. լծորդութեան խօսիչին պէս կը խոնարհուին, բայց կատարեալնին կ'ըլլայ. հասայ, հասար, հասաւ, հասակ, հասակ, հասակ: Թոայ, թոար, թոաւ, թոակ, թոաք, թոակ: Իսկ հրամայականնին կ'ըլլայ. հասի՛ր, թոի՛ր:

103. Ասոնց պէս կը խոնարհուին նիչ և չիչ վերջացող բայերը, ինչպէս. հասնիչ, բուսնիչ, մեռնիչ, անցնիչ, հագնիչ, փախիչ, փչիչ, դպչիչ, կպչիչ, փակչիչ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

239. Օրինակել այս ընթերցուածը, եւ ստորագծել նիչ եւ չիչ վերջացող բայերը:
 240. Սորվիլ հետեւեալ բառերը.
 Դատապարտել, գայրանալ, յառնած, արդարացնել:
 241. Սորվիլ այս ընթերցուածին ուղղագրութիւնը:
 242. Խոնարհել գրաւոր անցնիչ, փակչիչ բայերը:
 243. Խոնարհել բերանացի ցանիչ, հասնիչ, դպչիչ, հասնիչ բայերը:

37. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾԱՂԻԿԸ

Նետուած ծաղիկ դուն մենաւոր,
 Որ փառքն եղար ծործորին,
 Մորիկներէն ցըրուած բոլոր
 Թերթերդ վար կը ծորին:
 Մարդիկ են զոհ նոյն մանգաղին,
 Եւ նոյն կամքին միշտ հըլու՛
 Թերթ մը կ'իյնայ բեզմէ հողին,
 Եւ ըբողն ըզմեզ կը թողու:
 Կորսընցուցած մարդ հաճոյքներ,
 Կը հարցընէ տրտմորէն.
 Ո՛րն աւելի վաղանցուկ էր,
 Ծաղիկը, Թէ կեանքն իրեն:

ԽԳ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԱՆՀՆԱԶԱՆԳ ԱՂՋԻԿ

Աղքատ կին մը, որ պղտիկ աղջիկ մը ունէր Նուարդ անունով, ամէն օր կ'երթար օրականով աշխատելու հաբուստ տուներու մէջ: Աստուները, մեկնած պահուն, քովը կը կանչէր իր մէկ հատիկ սիրելի աղջիկը, կը համբուրէր, կը համբուրէր զայն ու չէր յագնար. յետոյ խրատներ կու տար անոր, մանաւանդ կը պատուիրէր որ պատուհանէն վար չկախուի, և հորին չմտնայ: Նուարդ բարի և աշխատասէր էր. մօրը բացակայութեան միջոցին տունը կը կենար. իր պարտքերը կը ճանչար և կը կատարէր, որպէս զի մայրիկը հանդիստ ընէ իր դարձին: Բայց մեծ թերութիւն մը ունէր, անհնազանդ էր: Օր մը, լսեց որ յուզարկաւորութիւն մը կ'անցընէին փողոցին ծայրէն, ուզեց հասկնալ թէ որունն էր. պատուհանը բացաւ, և այնքան վար կախուեցաւ որ սալաշատակին վրայ ինկաւ, ու գլուխը ջախջախուեցաւ:

Հիմայ հէք մայրը միս մինակ մնացած տանը մէջ, կուլայ իր սիրելի աղջիկը որ զո՞ գացած է իր անհնազանդութեան:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

244. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Աղքատ կինը ո՞ր կ'երթար ամէն օրս — 2. Մեկնելէն առաջ ի՞նչ կ'ընէր, և ի՞նչ կ'ըսէր իր աղջկանը — 3. Նուարդ ի՞նչպէս աղջիկ էր — 4. Ի՞նչ էր Նուարդին թերութիւնը — 5. Օր մը ի՞նչ պատահեցաւ — 6. Ի՞նչ ըրաւ անհնազանդ աղջիկը — 7. Ի՞նչ փորձանք եկաւ գլխուն — 8. Հիմայ մայրը ի՞նչ կ'ընէ:

ԽԳ. ԴԱՍ. — ՆԱԼ ՎԵՐՋԱՑՈՂ ԲԱՅՆԵՐԸ

104. Բարկանայ բայը Գ. լծորդութեան կարդային պէս կը խոնարհուի, բայց կատարեալը կ'ըլլայ. բարկացայ, բարկացար, բարկացաւ, բարկացանք, բարկացաք, բարկացանք: Իսկ հրամայականը կ'ըլլայ բարկացի՛ր:

105. Այսպէս կը խոնարհուին նալ վերջացող բայերը, ինչպէս. անցնալ, գիճնալ, գողնալ, յախնալ, կեճնալ, անըցնալ, սախնալ, մօտեճնալ, հասկնալ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

245. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել նալ վերջացող բայերը:
246. Սորվիլ հետեւեալ բառերը.
Յագնեալ, յուզարկաւորութիւն, սալաշատակ, ջախջախուիլ:
247. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
248. Գրաւոր խոնարհել յախնալ, անցնալ, սախնալ, հասկնալ բայերը:
249. Գտնել նալ վերջացող հինգ բայ եւ խոնարհել բերանացի:

38. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԽԱՂՈՂԸ

Տերեւներուն մէջէն բարսկ
Որ սնդուսի կը նըմանին,
Կուռ ողկոյզներ սև ու ճերմակ՝
Վար կը կախն հատիկներինս
Ոմանք երկայն, ոմանք կըլտր,
Մանրիկ, փայլուն և լուսանցիկ,
Տերեւներուն վերայ խոշոր՝
Կը կարծելին բանուած ծաղիկ:

Արցունք են, մէ շաղի կամիլ
Ամպին ցանցէն ցօղուած շիժ շիժ,
Զմրո՛ւխտ արդեօք, վարդ նորածիլ
Կամ երկինքէն ինկած ժըպիտ:
Անոնք արցունք չեն ոչ գոհար,
Ոչ ալ ծաղիկ, ոչ ալ կիտուած.
Անուշ խաղող են գովարար,
Միրո՛ւն արդար օրհնեց Աստուած:

Զայն շինեցին լոյս հրեշտակներ
Սուրբ մատներովն իրենց ճարտար,
Այգիներուն աշնան նըւէր,
Միրո՛ւն տըղաք, ձեզի համար:

ԽԴ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՍՈՒՑ ՄԸ ՈՐ ՆԵՐՍԷԼԻ Է

Ծերունի մը փոքրիկ թոռանը հետ զուռնէ զուռ կը մուրար: Խեղճին աչքերը չէին տեսներ, և զժրախտ տղան զիմացը կըլողին լալով կ'աղաչէր որ բան մը սոյ իրեն՝ կոյր ծերունին անուցանելու համար: Օր մը, մինչև իրիկուն ասդին անդին գացեր էին, բոլոր փողոցներէն անցեր դարձեր էին, և կտոր մը հաց միայն կրցեր էին ձեռք անցընել: Օղը ցուրտ էր, ձիւնը սաստիկ կը տեղար, և բաթիլները իրենց երեսին կը զարնէին: Ծերունին շատ անօթեցեր էր. «Տղա՛ս, ըսաւ, քիչ մը բան բեր, ու տեն՛ք:» Թոռը հանեց հացին կտորը անոր տուաւ: «Դուն ալ ունի՛ս,» հարցուց մեծ հայրը հացը առնելով: «Ունիմ, մեծ հայր,» պատասխանեց տղան, և գլուխը անոր ծունկին վրայ դնելով, անօթի պառկեցաւ հանգիստ սրտով, որովհետև իր սուտը պատճառ եղաւ որ ծերունին ալ հանդարտ քնանայ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

250. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Ծերունին ի՞նչ կ'ընէր փոքրիկ թոռանը հետ — 2. Ինչո՞ւ չէին աշխատեր փոխանակ մուրալու — 3. Փոքրիկ տղան ի՞նչ կ'ըսէր զիմացը կըլողին — 4. Օր մը ի՞նչ պատահեցաւ իրենց — 5. Ծերունին ի՞նչ ըսաւ թոռանը — 6. Տղան ի՞նչ պատասխանեց — 7. Յետոյ ի՞նչ ըրաւ — 8. Իր սուտը ի՞նչ բանի պատճառ եղաւ — 9. Այս սուտը խօսելով յանցաւոր եղաւ տղան:

ԽԴ. ԴԱՍ. — Ս.ՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

106. Անկախուն են այն բայերը որոնք առանց յատուկ օրէնքի մը կը տարբերին ընդհանուր կանոնէն կասարեային կամ հրամայականին մէջ, և կամ երկուքին մէջ միանգամայն:

107. Անկախուն բայերն են. բերել, դնել, զարնել, ընել, ըսել, ուսել, տեսնել, տանիլ, գալ, լալ, տալ, երբալ, բանալ, դառնալ, իյնալ, մնալ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

251. Օրինակել այս ընթերցուածը, եւ ստորագծել անկախուն բայերը՝
252. Սորվիլ հետեւեալ բառերը՝

Բաթիլ, շիթ, ցօզ, եղեամ, բուբ, մսախուղ

253. Սորվիլ այս ընթերցուածին ուղղագրութիւնը՝
254. Գրաւոր խոնարհել ուսել, իյնալ, երբալ բայերը՝
255. Սահմանական անկատարի վերածել հետեւեալ բայերը.

Ես զարնել, — Դուն ուտել, — Ան լալ, — Մենք գողալ, — Դուք գալ, — Անոնք տալ, — Իրենք դառնալ, — Ինք իյնալ:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ. — Լալ, տալ, գալ բայերը փոխանակ կըլի կու մասնիկը կ'առնեն խոնարհման մէջ, ինչպէս. կու լաւ, կու տաւ, կու գաւ:

256. Խոնարհել բերանացի հետեւեալ բայերուն կատարեալները. Դառնալ, գալ, տեսնել, ըսել, բերել, տեսնել:

257. Գտնել հետեւեալ բայերուն ապառնի ընդունելութիւնները. Դիր, ըսնք, կերէք, տարիք, բացին, ինկաւ, մնացինք, լացաւ, եկո՞ւր, գարկ, եկաւ, գացի:

ԽԵ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԳՍ.ՂԱ.ԳԱ.ՎԱ.ՐՈՒԹԻՒՆ
ՆՈՒ ՀԱՃՈՅԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

1531ի ձմեռն էր: Յրանսացի կրօնաւոր մը կը ճամբորդէր լեռներուն մէջէն, երբ նշմարեց որ ճամբան կորսընցուցեր էր, և կանգ առաւ. ցուպը գետինը դրաւ, ծառի մը տակ նստաւ, ու ասդին անդին նայելով, տեսաւ փոքրիկ տղայ մը որ խողեր կ'արածէր: Նշանով մը քովը կանչեց զայն. տղան, զլիարկը վար առնելով, մօտեցաւ, քաղաքավարութեամբ պատասխան տուաւ եկեղեցականին հարցումներուն, և ինքնաբերաբար յանձն առաւ առաջնորդել անոր: Ըամբան, կրօնաւորը խօսակցութեան բըռնուելով խողարած մանուկին հետ, հաւնեցաւ անոր քաղաքավար ու հաճոյակատար կերպերուն. հարցումներ ուղղեց տղուն, ու տեսնելով անոր ուսում ստանալու փափաքը, և իր տղիտութեան մասին զգացած ցաւը, առաւ իրեն հետ քաղաք տարաւ ու վանք մը դրաւ զայն:

Այդ գեղջուկ տղեկը իր ուշիմութեամբ և աշխատասիրութեամբ խորունկ հմտութիւն ամբարեց, տարիներու ընթացքին մէջ, քահանայ, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, ու յետոյ Քսենտոս Ե. երեւելի Պապը եղաւ:

Քանի քանի անգամներ պատահած է որ մարդ անուշ բառով մը իր բախտը կը շինէ, և փոխադարձաբար, տմարդի խօսքով մը իր ապագան կը խորտակէ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

258. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Յրանսացի կրօնաւորը ի՞նչ նշմարեց — 2. Ի՞նչ ըրաւ — 3. Զո՞վ տեսաւ և ի՞նչ ըրաւ — 4. Խողարածը ի՞նչ ըրաւ — 5. Կրօնաւորը խողարածին հետ խօսելով ի՞նչ հասկցաւ անոր մասին — 6. Ի՞նչ ըրաւ անոր — 7. Տղեկը ի՞նչ եղաւ — 8. Մեր խօսքերը ազդեցութիւն ունին մեր բախտին վրայ:

ԽԵ. ԴԱՍ. — ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ

108. Ներգործական կ'ըսուին այն բայերը որոնց ենթական ուրիշի մը վրայ գործողութիւն մը կը կատարէ, ինչպէս. կը ծեծեն կասուն, կը պիտեւ մայրս:
109. Միայն ներգործական բայերը սեռի ինդիք կ'առնեն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

259. Օրինակել այս ընթերցումը, եւ ստորագծել ներգործական բայերը:
260. Սորվիլ հետեւեալ բառերը.
Արածել, եկեղեցական, կրօնաւոր, ինքնաբերաբար, հաճոյակատար, վանք, հմտութիւն, ամբարել, ձեռնադրուեցին, Պապ, տմարդի:
261. Սորվիլ այս ընթերցումին ուղղագրութիւնը:
262. Գտնել հետեւեալ բայերուն մէջէն ներգործականները.
Երգել, բանալ, ցանել, ցրուել, նստիլ, բնանալ, տանիլ, պարել, խմել, ծածկել, բերել, բալել, գրել, հագալ, լալ, յոգնիլ, վճարել, ինձալ, բաշել, թռչիլ, բռնել, դառնալ, մոռնալ, պատռել, պահել, շարել, պատկիլ, վառել, մարել:

39. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԳՍ.ՂԱ.ԳԱ.ՎԱ.Ր ՏՂԱՆ

Զուրկ ազնիւ բարբէ, առանց կրթութեան,
Ամէնէն աղուոր ու սիրուն տղան
Կարող չէ սիրուիլ նոյն իսկ ծընողքէն.
Իր ընկերներն ալ զինքը կ'անարգեն
Իսկ ան որ չունի ոչ շքերհ, ոչ գեղ,
Ոչ զարդ, ոչ ոսկի, ոչ ըզգեստ շքերդ,
Այլ իր կերպերովն ու խօսքով համեստ
Գիտէ ընդունիլ ամէնէն գովեստ,
Ան պիտի շինէ իր կեանքին ճամբան,
Պիտի յարգարէ, պիտի պծես զայն,
Ու շրջապատուած համակրանքով տաք,
Միշտ պիտի բալէ, անդուր, անսայթաք:

ԽՁ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԸ

Մեծ եղբայրս, Վարդան, որ 22 տարեկան է, զինուորս գրուեցաւ այս տարի: Հիմայ զինուորական համազգեստ կը հագնի, սուր մը ունի, և հրացան կը կրէ: Այս զգեստաւորումին ներքե կարծես աւելի լուրջ ու մեծ կ'երեւայ: Ես և քոյրերս հիմայ ա'լ աւելի կը յարգենք զինքը, որովհետեւ մայրիկը մեզի բացատրեց թէ ինչ մեծ կոչում ու պարտականութիւններ ունի զինուոր մը: Անիկա պիտի պաշտպանէ իր երկիրը, երբ թշնամին դայ զայն թալլել, աւերել, գրաւել: Անիկա պիտի կռուի բարձր պահելու համար պատիւը իր զրօշակին որ ազգը կը ներկայացնէ. անիկա պիտի վիրաւորուի չթույլատրելու համար որ թշնամին ձեռք զպցնէ իր հողին, իր տունին, իր իրաւունքին. անիկա պիտի մեռնի որպէս զի անաղարտ և անմահ մնայ փառքը իր հայրենիքին:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 263. Պատասխանե՛լ հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Ի՞նչ եղաւ եղբայրդ այս տարի: — 2. Ի՞նչ կը հագնի — 3. Ի՞նչ ունի — 4. Ի՞նչ կը կրէ: — 5. Ի՞նչպէս կ'երեւայ այս զգեստաւորումին ներքե: — 6. Դուն և քոյրերդ ի՞նչպէս կը վերաբերուիք իր նկատմամբ: — 7. Մայրիկը ի՞նչ բացատրեց բեզի: — 8. Զինուորը ի՞նչ պիտի ընէ: — 9. Անիկա ինչո՞ւ պիտի կռուի — 10. Անիկա ինչո՞ւ պիտի վիրաւորուի — 11. Անիկա ինչո՞ւ պիտի մեռնի:

264. Սորվիլ հետեւեալ բառերը.

Համազգեստ, զգեստաւորում, լուրջ, կոչում, թալլել, աւերել, գրաւել, զրօշակ, թույլատրել, անաղարտ, անմահ, փառք:

265. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

ԽՁ. ԴԱՍ. — ՁԷՉՈՒՅ ԲԱՅ

110. Ձեզոք կ'ըսուին այն բայերը, որոնց ենթական գործողութիւնը ինք իր վրայ կը կատարէ, ինչպէս. կը փախել, կը ցատկէ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 266. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել Ձեզոք բայերը:
- 267. Խոնարհել՝ գրաւոր եւ բերանացի՝ փայլի, դեղնիչ չէզոք բայերը:
- 268. Սկզբնատաւերով ցոյց տալ հետեւեալ բայերէն չէզոքներն ու ներգործականները.

Թնդալ, կարդալ, լուծել, հիւսել, գրկել, փաթծել, ձանձրանալ, զուարճանալ, թափիլ, բարձրանալ, երթալ, վազել, ճամբորդել, լուել, լսել, կանչել, չորնալ, չորցնել, ուտել, պտըտիլ, լողալ, տալ:

40. ԱՐՏԱԱՆՈՒԹԻՒՆ. — ՕՐՈՐ

Եկր ար, ո՛վ սոխակ որ կ'երգես հեռուն, Տաղերով բուն բե՛ր տըղուս աչքերուն: Բայց ան կու լայ միշտ. ա՛լ մ'երգեր դուն ալ. Իմ որդիս չ'ուզեր տիրացու դառնալ:

Ե՛կ, արեղածա՛գ, Թո՛ղ արտ ու արօտ. Օրօրէ՛. տըղաս բունի է կարօտ: Բայց ան կու լայ միշտ. հեռացի՛ր դուն ալ. Իմ որդիս չ'ուզեր արեղայ դառնալ:

Թո՛ղ, ո՛վ տատրակիկ, բու ձագերդ ու բոն. Վուլուով տըղուս բե՛ր դուն անուշ բուն: Բայց ան կու լայ միշտ. ետ դարձի՛ր դուն ալ. Իմ որդիս չ'ուզեր սգաւոր դառնալ:

Կաշաղակ ճարպի՛կ, գող, արժանթատեր, Շահու վէպերով զակկիս բունը բե՛ր: Բայց ան կու լայ միշտ: Մի՛ խօսիր դուն ալ. Իմ որդիս չ'ուզեր վաշխառու դառնալ:

Թո՛ղ որսըդ, արի՛, քաշասիրտ բազէ՛, Բու երգըդ զուցէ իմ որդիս կ'ուզէ: Բազէն սր եկաւ, որդին լուռ կեցաւ. Ռազմի երգերուն ձայնով քնացաւ:



ԽԷ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — Ա. Գ. Ա. Հ ՇՈՒՆԸ

Շուն մը բերանը ոսկոր մը առած կը վազէր ջուրի մը եզերքէն, երբ իր ստուերը ջուրին մէջէն անդրադառնալով երեւցաւ իրեն: Շունը խարուելով այս տեսարանէն, կարծեց թէ ալիքներուն մէջ ուրիշ շուն մը և ուրիշ ոսկոր մըն ալ կար: Հրապուրուած նոր որս մը գտնելու յոյսէն, սկսաւ հետապնդել իր ստուերը որ իր առջեւէն կը վազէր կոհակներէն չըջապատուած: Շունը վերջապէս իր վազքէն յոգնեցաւ, և ստիպուեցաւ կանգ առնել. իր ստուերն ալ կանգ առաւ: Շունը բերանը բացաւ, և ոսկորը սահեցաւ վար ինկաւ ու ալիքներէն տարուելով աներեւոյթ եղաւ ջուրին խորը: Այսպէս պատժուեցաւ շունը իր ագահութեան պատճառաւ, որովհետեւ չգոհանալով իր ունեցած ոսկորէն, ուրիշին ունեցածին կը ցանկար, և իր ունեցածէն ալ զրկուեցաւ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

239. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւզրաւոր.

1. Շունը ի՞նչ կ'ընէր: — 2. Ի՞նչ տեսաւ ջուրին մէջ: — 3. Շունը ի՞նչ կարծեց: — 4. Այն ատեն ի՞նչ ըրաւ: — 5. Երբ յոգնեցաւ ի՞նչ ըրաւ: — 6. Իր ստուերը ի՞նչ ըրաւ: — 7. Երբ շունը բերանը բացաւ, ի՞նչ պատահեցաւ: — 8. Ինչ պատճառաւ պատժուեցաւ շունը:

270. Սորվիլ հետեւեալ բառերը.

Անդրադառնալ, հրապուրուած, հետապնդել, կոհակ, ցանկալ:

ԽԷ. ԴԱՍ. — ԿՐԱՆՈՐԱԿԱՆ ԲԱՅ

111. Կրաւորական կ'ըսուին այն բայերը, որոնց գործողութիւնը ուրիշի մը կողմէն կը կատարուի ենթակային վրայ, ինչպէս. ծեծուիլ, գոյնուիլ, արտախալիլ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

271. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել կրաւորական բայերը:

272. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

273. Ըսել թէ հետեւեալ բայերէն որո՞նք նեգործական են եւ որո՞նք կրաւորական.

Ըսել, կտրել, լսուիլ, ծամուիլ, գրուիլ, կարուիլ, տանիլ, տարուիլ, խնամուիլ, խնամել, երգել, երգուիլ, ուտուիլ, բանալ, բացուիլ, շինուիլ, շինել, պատժել, ծածկուիլ, ծածկել, յանդիմանել, յանդիմանուիլ, վարձատրուիլ, կրկնել, կրթել, կրկնուիլ:

274. Ըսել թէ ի՞նչպէս կ'ըլլան հետեւեալ բայերուն կրաւորականները.

Կանչել, լծել, բռնել, կարգադրել, պատրաստել, հիւսել, նկարել, մերժել, ընդունիլ, համոզել, հարուածել:

275. Խոնարհել այս բայերէն երկու նեգործական բերանացի:

276. Խոնարհել այս բայերէն երկու կրաւորական գրաւոր:

277. Ըսել թէ հետեւեալ բայերէն որո՞նք կրաւորական են, որո՞նք չեզոք.

Սահել, զրկուիլ, բարձրանալ, սրբողիլ, իջնել, մարիլ, վիրաւորուիլ, դեղնիլ, սպաննուիլ, մեռնիլ:

ԽԸ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՊԱՏԺՈՒԱԾ ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Փոքրիկ Նեկտարը Հարմային ձեռքը ոսկի մը տեսնելով հարցուց. «Եղբայր, ուրի՞նչ գտար այդ դրամը: — Ծառէն փրցուցի, պատասխանեց: — Ի՞նչ կ'ըսես, Հարմա՛, դրամը ծառին վրայ կը բուսնի: — Հապա՛, քո՛յրս, չէ՞ս գիտեր. եթէ այս ոսկին տնկես, յառաջիկայ տարին ոսկիէ ծառ մը կ'ըլլայ, ոսկիէ անդարթներով, ոսկիէ պտուղներով:» Եւ ծաղրասէր տղան դրամը գոյրոցին մէջ պահելով, ելաւ դպրոց գնաց: Նեկտար, որ անոր խօսքին հաւատացեր էր, վազեց դրամը գոյրոցէն առաւ և պարտէզին մէջ տնկեց: Իրիկունսն Հարմա դպրոցէն դառնալով, քրոջը բրածը իմացաւ ու զայրացած պարտէզ վազեց, բայց փոքրիկ աղջիկը տնկած տեղը մոռցեր էր, և ստախօս աղան ամէն կողմ փորեց ու դրամը չգտաւ. այն ատեն գնաց մօրը դանդաատեցաւ, որ ըսաւ անոր. «Տղա՛ս, սուտէն միշտ չարիք կը ծնի. ուստի պէտք չէ սուտ խօսիլ նոյն խակ կատակի համար:»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

278. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Նեկտար ի՞նչ հարցուց երօրը: — 2. Հարմա ի՞նչ պատասխանեց: — 3. Նեկտար հաւատո՞ց անոր ըսածին: — 4. Հարմա դրամը ո՞ւր պահեց: — 5. Նեկտար ի՞նչ բրած: — 6. Երբ Հարմա դպրոցէն դարձաւ, ի՞նչ պատահեցաւ: — 7. Ի՞նչ բրած Հարմա, երբ եղելուծիւնը իմացաւ: — 7. Մայրը ի՞նչ ըսաւ:

279. Սորվիլ հետեւեալ բառերը.

Գրոց, զայրացած, եղելուծիւն, սաղարթ:

ԽԸ. ԴԱՍ. — ԿՈԶԱԿԱՆ

112. Կոչական կ'ըսուի այն անձին անունը որուն խօսք կ'ուղղենք, ինչպէս. Եկո՛ւր, գաւա՛կս, համբուրեմ զքեզ:

113. Կոչականը միշտ ուղղականի ձեւը ունի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

280. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել կոչականները:

281. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

282. Գրաւոր խոնարհել յանդիմանաւորի եւ յանդիմանել բայերը:

283. Կոչականներ դնել հետեւեալ կէտերուն տեղ.

... Եկո՛ւր դպրոց երթանք: — Ներէ՛ իմ յանցանքիս ... — ... գնա՛ սուրճ մը բե՛ր ինձի: — ... ինչո՞ւ տխուր ես: — Գժա՛ ինձի, ո՛վ ... :


284. Հետեւեալ կոչականներուն յարմար խօսքեր շինել.

Աստուած, եղբայր, բարեկամ, գաւա՛կս:


41. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՍՏԱԽՕՍԻՆ ՊԱՏԻԺԸ

Փոքրիկ հովիւ մըն էր Միրյան, որ ամէն օր դաշտին վըրան Արածելու կ'երթար առտուն Հօսն իր զիւղին ոչխարներուն: Օր մը նեղուած հոն՝ միս միսակ, ըսաւ. «Աղուոր խաղ մը խաղանք» Ու ըսկըսաւ պոռալ ուժով. «Գայլ կայ, գայլ կայ, հասէք շուտով:»

Գիւղացիներ եկան հասան, Ոչ գայլ զըտան, ոչ ալ զագան Բան բան ինչպե՞ս անկիրձ տղան, Ըսաւ անոնց. «Կատակ էր անս» Գայլեր եկան օր մը իրաւ, Ոչ ոք անոր մըտիկ ըրաւ. Մէկը չեղաւ անոր պաշտպան. Կըտոր կըտոր եղաւ Միրյան:



Շունը բեռանը բացաւ, եւ ոսկորը սահեցաւ վար ինկաւ (Տես էջ 116)



Ամէնքն ալ մէյ մէկ հաս առ ին, գլուխնին դրին (Տես էջ 122)



Վանդակիկ մը դրի աղուր
Իմ պարեգիս մէջ սիրուն
(Տես էջ 125)

ԽՅ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ԴԱՆԻԷԼ ՈՒ ԿԱՊԻԿՆԵՐԸ

Դանիել, Ա. գլուղին գլխարկավածառը, մերձակայ գլուղ մը կ'երթար առուտուր ընելու: Ամառ ըլլալով, օղը շատ տաք էր. ուստի երբ անտառին մէջ մտաւ, պահ մը կանգ առաւ, ու իր գլխարկներուն կողովը վար դնելով, պառկեցաւ ծառի մը տակ, և քունը տարաւ: Այդ անտառին մէջ կը բնակէին խումբ մը կորիչներ, տեսակ մը կապիկներ, որոնք տեսնելով մարդուն գլուխը այն գլխարկներէն մէկը որով կողովը լեցուն էր, ամէնքն ալ մէջ մէկ հատ առին, գլուխնին զրին ու մագլցեցան մայրինսնհերուն, բարտիններուն, այդ հսկայ ծառերուն ոստերուն վրայ: Դանիել արթննալով, երբ տեսաւ որ կողովը պարպուեր է, նախ աստիկ յուզուեցաւ, յետոյ վեր նայելով, տեսաւ կապիկները, այդ մարդակերպ անասունները իր գլխարկներով զարդարուած: Չկրցաւ խնդալը զսպիկ, ու յանկարծ հնարամիտ գաղափար մը ունեցաւ. իր գլխարկը հանեց գետինը նետեց. կապիկները, ուրիշներուն բրածը կրկնելու սովորութեամբ օժտուած այդ կենդանիները, իրենք ալ գլխարկնին գետինը նետեցին: Այն ատեն Դանիել ժողովեց զանոնք, ու ճամբայ ելաւ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

285. Պատտխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Դանիել ո՞ր կ'երթար — 2. Երբ անտառ մտաւ, ի՞նչ ըրաւ —
 3. Այդ անտառին մէջ ո՞վ կը բնակէր — 4. Կապիկները ի՞նչ ըրին —
 5. Դանիել երբ արթնցաւ, նախ ի՞նչ զգաց, — 6. Յետոյ ի՞նչ գաղափար ունեցաւ — 7. Ի՞նչ ըրաւ — 8. Կապիկները ի՞նչ ըրին — 9. Այն ատեն գլխարկավածառը ի՞նչ ըրաւ
286. Սորվիլ հետեւեալ բառերը.
 Գորիչ, մազլցիլ, մայրի բարտի, զսպիկ, հնարամիտ, օժտուած:
287. Սորվիլ այս ընթերցուածին ուղղագրութիւնը:

ԽՅ. ԲԱՍ. — ԲԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԲԱՅԱՍՏԱՆԻ

114. Այն անունը կամ ածականը որ ուրիշ անունի մը ով կամ ինչ ըլլալը կը բացատրէ, բացայայտից կը կոչուի, և միւսը բացայայտեալ, ինչպէս. Մասթիս, Կ. Պոլսոյ Հայոց նախորդ Պատիարիչ. Կ. Պոլիս, Թուրքիոյ մայրաքաղաքը:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

288. Օրինակել այս ընթերցուածը, եւ ստորագծել բացայայտիչները, ցոյց տալ բացայայտեալները:
289. Խոնարհել դրիկը, բարեանալ, խառնուիլ բայերը:

42. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՈՍԿԻ ԵՋՆԱԿՆԵՐԸ

Սաղարթներուն վերայ աղուոր
 Սպասիի բոյն մ'է ինկեր.
 Վարդերուն մէջ փայլուն, բոսոր,
 Լեցուն ոսկի եզնակներս
 Տը՛զ, տը՛զ թուփին մէջ կը թը՛ռին,
 Տը՛զ, տը՛զ կ'եւեն օդն ի վեր,
 Եւ ոստերուն մէջ կը ծափն
 Արեւուն դէմ լուսայեաւ
 Կանանչ ու բիլ ճանճեր խոշոր
 Կը պըտուտըին հոյլ ի հոյլ.
 Թոյլ թեւերնին թոյլ է բոլոր,
 Եւ ձայներնին՝ թեթև սոյլ
 Ճակատնին լայն, կանակնին լայն,
 Թամիկնին հաստ, լերկ ու սուր,
 Բայց մանուկներ կը մօտենան
 Անոնց՝ անվախ, անսարսուռ
 Կեռ ճանկերէն չըլլա՛յ վախնար.
 Չունին ասեղ, ոչ խայծոց.
 Գարնան՝ վարդի ծուփերուն տակ,
 Մեծ գրօսանքն են տըղոց:

Մ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԲԱՆԱԳՈՂՈՒԹԻՒՆ

Տղաք կան որոնք յոռի սովորութիւն մը ունին, երբեմն իրենց շարադրութիւնները գիրքերու մէջէն կ'ընդօրինակեն. ասոնք բանագող կը կոչուին, որ պատուաբեր անուն մը չէ անշուշտ: Արդեօք կը կարծեն թէ այս կերպով կրնան խաբել իրենց ուսուցիչները. երբեք: Միայն, կը կորսնցնեն անոնց վստահութիւնը ու թերեւս համակրանքը, և ծաղրելի կը դառնան: Ժամանակաւ, անմիտ տղայ մը ուղեկով նամակ մը գրել իր բարեկամներէն մէկուն, և չուղեկով ինքզինքը յոգնեցնել, կ'երթայ նամակագիրք մը կը գնէ, և անոր մէջէն իր փափաքածին պէս հատ մը գտնելով, կ'ընդօրինակէ ու տեղը կը դրկէ: Իր բարեկամը որ այդ գիրքէն ունէր, կը գտնէ անոր մէջ այդ նամակը, և անմիջապէս կը պատասխանէ. «Սիրելիս, այսօր ստացայ նամակդ. թերթը դարձուր, և կը գտնես անոր պատասխանը:»

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

290. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Տղոցմէ ոմանք ի՞նչ յոռի սովորութիւն ունին — 2. Ի՞նչ կը կոչուին այդ տղաք: — 3. Այդ կերպով տղաք կրնան խաբել իրենց ուսուցիչները — 4. Անոնք ի՞նչ կը կորսնցնեն իրենց այս վարմունքով և ի՞նչ կ'ըլլան — 5. Անմիտ տղան ի՞նչ միջոց գտաւ իր բարեկամներուն նամակ գրելու համար: — 6. Իր բարեկամը երբ հասկցաւ այդ նամակին զիրբին մէջէն օրինակուած ըլլալը, ի՞նչ պատասխանեց:

291. Սորվիլ հետեւեալ բառերը.

Յոռի, բանագող, նամակագիրք, համակրանք:

Մ. ԴԱՍ. — ՄԱԿՐԱՍ.Յ

115. Մակրայ կ'ըսուին այն բառերը, որոնք գործողութեան մը տեղը, ժամանակը, կետրը, քանակութիւնը ցոյց կու տան. նաև բան մը կը հաստատեն կամ կը ժխտեն:

116. Գլխաւոր մակբայներն են.

Այսօր, վաղը, երբեմն, հիմայ, յետոյ, առաջ, երբեք, վեր, վար, այստեղ, այնտեղ, դիմացը, ժամանակաւ, անկիջապէս, ինչո՞ւ, ո՞ւր, արդեօ՞ք, քերեւս, շատ, քիչ, միայն, կարևոց, շուտ, այո՛, ո՛չ, անշուշտ, ևայլն:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

292. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել մակբայները:

293. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

294. Մէյ մէկ յարմար մակբայ դնել հետեւեալ կէտերուն տեղ.

Տղայ մը պարտական է ... կատարել իր հօրը և ծօրը հրամանները: — Պարկեշտ մարդը ... սուտ չի խօսիր: — Ով որ շուտ կը քալէ կը յոգնի, ով որ ... կը քալէ առանց կանգ առնելու, իր նպատակին կը հասնի: — Ծոյլը կ'ըսէ, այսօր կը հանգչիմ, ... կ'աշխատիմ. աշխատասէրը կ'ըսէ ... կ'աշխատիմ, յետոյ կը հանգչիմ:

43. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՐՐՐԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԸ

Վանդակիկ մը զըրի աղուոր
 Իմ պարտէզիս մէջ սիրուն,
 Որ Յուշուն մը գայ ուղեւոր
 Առտու մը հոն շինել բոյն:
 Ո՛վ քաղցրախօս շիկահաւիկ,
 Իմ հիւզս ընտրէ, բեզ տընակ.
 Միայն երգ մը կ'ուզեմ փոքրիկ
 Տունիս վարձքին փոխանակ:

Երբոր ուզես ամառ օրեր
 Պուրակին մէջ ապրիլ զատ,
 Քու փափաքիդ դէմ չեմ դընբր,
 Ու կ'արձակեմ զքեզ ազատ:
 Բանտարկելու չունիմ փափաք
 Ըզքեզ, Յուշնիկս անուշիկ.
 Ո՛հ, երգով մը եկու՛ր մի՛նակ
 Վարձել հիւզակս իմ փոքրիկ:

ՄԱ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԶԳԱԽԵԺԻԷ ԳՆԳԱԿԸ

Զմեռուան մէջ, իրիկուն մը, Երուանդ դպրոցէն դառնալուն, իրենց տանը մօտ կը խաղար, երբ դրան մը առջև, հինգ զրուշնոց մը նշմարեց հողին վրայ: Ուրախութեամբ առաւ, և անմիջապէս փերեզակի մը խանութը վազելով, ձգախէժէ դնդակ մը գնեց, որուն շատ կը բաղձար: Մեծ եռանդով, օդին մէջ կ'արձակէր զայն, որ գեանէն վեր, յետոյ վար կ'ոստոստէր, ու տղեկը չափազանց կը զուարճանար: Յանկարծ քովի փողոցէն փոքրիկ աղջիկ մը երեւան ելաւ որ լալով կը յառաջանար, և հարցնողներուն կ'ըսէր թէ քաւորդ մը կորսնցուցեր էր որով հաց պիտի գնէր: Երուանդ չսեղ ձեւացուց, և առանց հախի դառնալու, դնդակը առաւ տուն դնաց: Բայց տխուր էր. խիղճը զինքը կը տանջէր: Գնդակը տարաւ անկողնին ներքև պահեց, ու ա՛յ բնաւ չխաղաց անոր հետ:

Եւ գիտէ՞ք ինչ պատահեցաւ. փոքրիկ աղջկան ծնողքը շատ աղքատ էին. իրենց բոլոր հարստութիւնն էր այդ հինդնոցը. այն գիշերը, տանը մէջ, ամէնքն ալ անօթի քնացան:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

295. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
1. Երուանդ դպրոցէն դառնալուն՝ ի՞նչ նշմարեց հողին վրայ — 2. Ի՞նչ ըրաւ — 3. Ի՞նչպէս կը խաղար դնդակին հետ — 4. Ի՞նչ պատահեցաւ երբ Երուանդ կը զուարճանար — 5. Փոքրիկ աղջիկը ի՞նչ կ'ըսէր հարցնողներուն — 6. Երուանդ ի՞նչ ըրաւ — 7. Ի՞նչ վիճակի մէջ էր Երուանդ — 8. Գնդակին հետ խաղաց — 9. Փոքրիկ աղջկան տանը մէջ ի՞նչ պատահեցաւ.

296. Սորվիլ հետեւեալ բառերը.

Փերեզակ, ձգախէժ, կ'արձակէր, կ'ոստոստէր, եռանդով:

ՄԱ. ԴԱՍ. — ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

117. Նախադրութիւնը բառ մըն է, որ երկու բառեր միացնելու և զանոնք յարաբերութեան դնելու կը ծառայէ:

118. Նախադրութեանէն առաջ դրուած բառը անոր խնդիրը կը կոչուի:

119. Գլխաւոր նախադրութիւններն են.

Վրայ, քով, սակ, շուրջ, ի վեր, ի վար, մեջ, մօտ, առջեւ, ետեւ, առանց, համար, հետ, վեր, դիմ, պէս, զոս, մեքտեղ, վերեւ, միջեւ, ներքեւ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

297. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել նախադրութիւնները:

298. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

299. Ըսել թէ հետեւեալ բառերէն ո՞րը նախադրութիւն, ո՞րը մակբայ է.

Երէկ, առանց, համար, թերեւս, զատ, ետք, ինչո՞ւ, հետ, շուրջ:

300. Խոնարհել այս Ընթերցուածին մէջ գտնուած բայերը.

301. Մէյ մէկ խօսքի մէջ դնել հետեւեալ նախադրութիւնները իրենց խնդիրներով.

Մօրս հետ, ձեզմէ զոս, գլխու վերեւ, Աստուծոյ առջեւ, առանց աշխատութեան, ճրագին շուրջը, եկեղեցին մօտ:

44. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԳԻՇՇՐ ՆՆ ԳՈՒՆ

Գիշերն եկաւ, աստղերն ելան,
Լուսնակն անուշ ցոլցըլաց.
Ծաղիկները նոր բուն մշտան
Ամպի ցօղով, շաղով թաց.
Մարդ ու մարմանդ բուն են մշտեր,
Դուք ալ աստղե՛ր, ոսկի աստղեր,
Վարդ ու պղպու՛լ, բուն եղէ՛ք,
Օրօր հովե՛ր, շորոր հովե՛ր,
Անուշ անուշ բուն եղէ՛ք:

ԾԲ. ԸՆԹԵՐՅՈՒՄ. — ՃԱՆՃՆ ՈՒ ԹԻԹԵՈՒՆԻԿԸ

«Անխոհեմ կենդանի, եթէ քիչ մըն ալ լոյսին մօտե-
նայ, թեւերը պիտի այրէ,» կ'ըսէր ճանճ մը՝ թիթեռնիկի
մը ճրագին շուրջը թռչտիլը տեսնելով: Արդարեւ խեղճ
կենդանին կ'երթայ կու գայ և արագ շրջաններ կ'ընէ որ-
պէս զի կարենայ մօտէն վայելիլ լոյսը, ու վերջապէս բո-
ցին մէջ իյնալով, կ'այրի: Բայց ճանճը, որ անոր վտանգը
հեռուէն տեսեր էր, աւելի խոհեմ չէ իր անձին համար:
Ինք ալ կ'երթայ կաթնամանի մը եզերքը կը թափ. յե-
տոյ կը ծռի անկէ խմելու համար, և մէջը իյնալով, կը
խեղդուի: Թէև թիթեռնիկին սպառնացող վտանգը տեսեր
էր, սակայն չէր գուշակեր թէ ինչ անդունդ կար իր ոտ-
քին տակ: Այսպէս են շատ անգամ մարդիկ ալ. ուրիշ-
ներուն խրատ կու տան, իսկ իրենց սխալները չեն տեսներ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

302. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. Ի՞նչ ըսաւ ճանճը թիթեռնիկը տեսնելով. — 2. Թիթեռնիկը ի՞նչ
կ'ընէ. — 3. Ի՞նչ կը պատահի թիթեռնիկին. — 4. Ճանճը ի՞նչպէս է իր
անձին համար. — 5. Ճանճը ո՞ւր կը թափ. — 6. Յետոյ ի՞նչ կ'ընէ. —
7. Ի՞նչ կը պատահի իրեն. — 8. Ճանճը ի՞նչ տեսեր էր. — 9. Ի՞նչ բան
չէր գուշակեր. — 10. Մարդիկ ի՞նչ կ'ընեն ասանկ պարագաներու մէջ:

303. Սորվիլ հետեւեալ բառերը.

Անխոհեմ, արդարեւ, վտանգ, սպառնացող, անդունդ:

304. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:

305. Խոնարհել հետեւեալ բայերը.

Խաղալ, բռնել, դատապարտուիլ, կայնիլ, նետել:

ԾԲ. ԴԱՍ. — ՇԱՂԿԱՊ

120. Շաղկապ կ'ըսուին այն բառերը, որոնք բառերը
կամ խօսքերը իրարու կը կապեն:

121. Գլխաւոր շաղկապներն են.

Բայց, սակայն, կամ, մանաւանդ, եթէ, քի, եւ, ու,
թեւ, ալ, որովհետեւ, որպէս զի, իսկ, քան, և այլն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

306. Օրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել շաղկապները:

307. Ըսել թէ հետեւեալ բառերէն որո՞նք շաղկապ են, եւ որո՞նք
նախադրուչքիւն.

Թէև, առանց, քան թէ, ալ, ըով որովհետև

308. Մէյ մէկ շաղկապ դնել հետեւեալ խօսքերուն մէջ.

Ես կը փափաքիմ քալել, ... ուժ չունիմ — Ես կ'աշխատիմ, ...
գիտեմ թէ անկարելի է բան մը սորվիլ առանց աշխատութեան — Ես
դպրոց կ'երթամ, ... բոլորս տունը կ'աշխատի — Իմացայ ... այս տարի
շրջանաւարտ պիտի ըլլաք:

45. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԱՐԾԻԻԸ

Մանուկը ուղղած աչքերն օդն ի վեր,
Խիզախ արծիւին սապէս կը խօսէր.
«Ո՞ւր կ'երթաս, արծիւ, դուն այդքան հեռու,
Կը թռչիս միշտ վեր հովէն ու ծովէն,
Կորդ և ամայի ծայրը սարերու,
Ի՞նչ գանձ, ի՞նչ վայելք ըզքեզ կը թովեն,
Եւ արծիւն ըսաւ. «Ոչ վայելք, ոչ գանձ
Չեն ազդեր երբեք իմ սրտիս նախանձ,
Իմ ծընած օրէս ըսաւ ինձ Աստուած.
— Աշխարհի մարդոց չըլլան դուն գերի —
Եւ ես աշխարհքը մարդոց եմ թողած.
Ազատութիւնը պահած եմ ինձի»

ՄԳ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՄԵԾ ՄՕՐ ԱՍԵՂԸ

«Վա՛յ, ա՛լ ձանձրացայ», կ'ըսէր Երանիկ ամէն անգամ որ մեծ մայրը զինքը կը կանչէր ասեղը անցընելու համար, ու տփփոհելով, դէմքը ծամածռելով «ա՛խ, ս՛հ» ըսելով, նեղսրտելով կը կատարէր այդ շատ չնչին ծառայութիւնը: Գիշեր մը, շատ ձանձրացած իր հանիէն, քնացաւ, ու երազին մէջ տեսաւ որ բոլոր ծովը ասեղ՝ և ցամաքը դերձան կտրեր էր, ու ինք միս մինակ մնացեր էր անոնց մէջտեղը: Դերձանները կ'անցընէր, կ'անցընէր, ու չէին հատնիր. թեւերը կը յոգնէին ու լալով կ'ըսէր. «Աւա՛ղ, ինչո՞ւ կը դանդատէի խեղճ մեծ մօրս ասեղէն: Իցի՛ւ թէ նորէն քովս ըլլար, ու ամէն վայրկեան իր ասեղը միայն անցընէի. մե՛ղք որ այնքան անքաղաքավարութեամբ կը վարուէի իրեն հետ:» Երբոր առտուն արթնցաւ, հողին լիցուն էր զզջուժով, և երզում ըրաւ այնուհետև յօժարակամ ծառայելու իր մեծ մօրը, և հաճոյակատար ըլլալու անոր նկատմամբ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

309. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.
 1. Ի՞նչ կ'ըսէր Երանիկ երբ մեծ մայրը զինքը կանչէր: — 2. Մեծ մայրը ինչո՞ւ գայն կը կանչէր: — 3. Օր մը երազին մէջ ի՞նչ տեսաւ Երանիկ: — 4. Ի՞նչ կ'ըսէր Երանիկ երազին մէջ: — 5. Ինչո՞ւ այդպէս կ'ըսէր: — 6. Երբ առտուն արթնցաւ ի՞նչ վիճակի մէջ էր: — 7. Ի՞նչ բանի երզում ըրաւ:
 310. Սորվիլ հետեւեալ բառերը.
 Հանի, յօժարակամ, իցիւ թէ, հաճոյակատար ըլլալ:
 311. Սորվիլ այս Ընթերցուածին ուղղագրութիւնը:
 312. Խոնարհել ձանձրանալ, կանկեղ, հասնիչ, յոգնիչ, հրաւայել բայերը:
 313. Ըսել թէ այս Ընթերցուածին բայերէն որո՞նք չէգոր են, որո՞նք ներգործական:

ՄԳ. ԴԱՍ. — ՁՍՕՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

122. Ձայնարկութիւնը բառ մըն է, որ առանց խօսքին հետ կապ ունենալու, վախ, ցաւ, բարձանք, զըղջուժ և բարկութիւն կը յայտնէ:
 123. Գլխաւոր ձայնարկութիւններն են.
 Ա՛խ, աւա՛ղ, վա՛յ, երակն՝ թե, իցի՛ւ թե, անե՛ծփ, օ՛ն, ո՛հ, մե՛ղք, վա՛խ, կեցցե՛, բարե՛, և այլն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

314. Յրինակել այս Ընթերցուածը, եւ ստորագծել ձայնարկութիւնները:

46. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՅԻՍՈՒՍ ՄԱՆՈՒԿԸ

Օրօրոցին մէջ ձիւնի պէս ճերմակ, Սուրբ Գոյսը կ'օրրէր իր մանկիկն Յիսուս Որ կը գեղգեղէր ճիւղ, ճիւղ շարունակ. Ա՛լ մարեր էին լոյսերն ու կըրակ: Մայրիկը կ'երգէր օրօրներ հագար, Յիսուս Մանուկը դեռ չէր բընանար: «Բընացի՛ր, կ'ըսէր, գառնուկս իմ աղւոր, Հովը կը փըչէ. երկինք լոյս չըկայ. Փակէ՛՛ աչուկներդ որ ըսեմ օրօր. Գիրկրս տաքուկ է. դուրսը ձիւն կու գայ: Մայրիկը կ'երգէր անդու անդադար. Յիսուս Մանուկը դեռ չէր բընանար: «Բընացի՛ր որ գան աստղերը բոլոր լոյս լոյս աչքերով բովիկըլ խաղան. կապոյտ Թաշուններն ալ կըրը կըրը Բարձերուդ վըրայ երգեն ու դառնան:» Այսպէս մայրիկը կ'երգէր անդադար. Յիսուս Մանուկը դեռ չէր բընանար: Բայց ա՛լ խեղճ մայրը սաստիկ էր յոգներ. Գրլուիլ կ'ախեց. շունչը կը հատնէր. «Դուն չե՛ս բընանար. Ի՞նչ ըսեմ ես ալ... Սիրտըս կտրեցաւ:» Եւ ըսկըսաւ լալ. Ա՛յն ատեն Յիսուս Մանուկն բզգայուն Աչքերը փակեց. բընացաւ իսկոյն:



ԳՈՅԱԿԱՆ ՆԵՐՈՒՆ ՀՈՒՈՎՈՒՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆ

	Եզակի	Յորճակի
Ո. Հ.	Վարդ	Վարդ ԵՐ
Ս. Տ.	Վարդ ի	Վարդ ԵՐՈՒ
Բ.	Վարդ Է	Վարդ ԵՐԷ
Գ.	Վարդ ուլ	Վարդ ԵՐՈՎ

ԲԱՅԱՌՈՒԹԻՒՆ ՆԵՐ

	Ս.	Յորճակի
	Եզակի	
Ո. Հ.	Ուրախութիւն	Ուրախութիւն ԵՐ
Ս. Տ.	Ուրախութ ԵԱՆ	Ուրախութիւն ԵՐՈՒ
		կամ Ուրախութ ԵԱՆԵ
Բ.	Ուրախութ ԵԵԷ	Ուրախութիւն ԵՐԷ
Գ.	Ուրախութ ԵԱՄԲ	Ուրախութիւն ԵՐՈՎ

	Ռ.	Յորճակի
	Եզակի	
Ո. Հ.	Զարգացում	Զարգացում ԵՐ
Ս. Տ.	Զարգացում ի	Զարգացում ԵՐՈՒ
	կամ Զարգաց ման	կամ Զարգաց մանԵ
Բ.	Զարգացում Է	Զարգացում ԵՐԷ
Գ.	Զարգացում ուլ	Զարգացում ԵՐՈՎ
	կամ Զարգաց մամբ	

	Պ.	Յորճակի
	Եզակի	
Ո. Հ.	Տարի	Տարի ԵՐ
Ս. Տ.	Տար ուան	Տարի ԵՐՈՒ
Բ.	Տարի Է	Տարի ԵՐԷ
	կամ Տար ուրԵԷ	
Գ.	Տարի ուլ	Տարի ԵՐՈՎ

	Պ.	Յորճակի
	Եզակի	
Ո. Հ.	Ծով	Ծով ԵՐ
Ս. Տ.	Ծով ու	Ծով ԵՐՈՒ
Բ.	Ծով Է	Ծով ԵՐԷ
Գ.	Ծով ուլ	Ծով ԵՐՈՎ

	Ն.	Յորճակի	Եզակի	Յորճակի
	Եզակի		Եզակի	
Ո. Հ.	Հայր	Հայր ԵՐ	Ներ	Ներ ԵՐ
Ս. Տ.	Հ օր	Հայր ԵՐՈՒ	Ներ ոջ	Ներ ԵՐՈՒ
Բ.	Հ օրմէ	Հայր ԵՐԷ	Ներ ոջմէ	Ներ ԵՐԷ
Գ.	Հ օրմուլ	Հայր ԵՐՈՎ	Ներ ոջմուլ	Ներ ԵՐՈՎ

	Է.	Յորճակի	Եզակի	Յորճակի
	Եզակի		Եզակի	
Ո. Հ.	Աղջիկ	Աղջիկ ԵՐ	Սէր	Սէր ԵՐ
Ս. Տ.	Աղջիկ աճ	Աղջիկ ԵՐՈՒ	Սիր ոյ	Սէր ԵՐՈՒ
Բ.	Աղջիկ Է	Աղջիկ ԵՐԷ	Սէր Է	Սէր ԵՐԷ
Գ.	Աղջիկ ուլ	Աղջիկ ԵՐՈՎ	Սիր ուլ	Սէր ԵՐՈՎ

	Թ.	Եզակի
Ո. Հ.	Աստուած	
Ս. Տ.	Աստուած ոյ	
Բ.	Աստուած մէ	
Գ.	Աստուած մուլ	

	Ճ.	Յորճակի	Եզակի	Յորճակի
	Եզակի		Եզակի	
Ո. Հ.	Տղայ	Տղա Բ	Մարդ	Մարդ իկ
Ս. Տ.	Տղ ու	Տղ ոյ	Մարդ ու	Մարդ ոյ
Բ.	Տղայ Է	Տղ ոյմէ	Մարդ Է	Մարդ ոյմէ
Գ.	Տղայ ուլ	Տղ ոյմուլ	Մարդ ուլ	Մարդ ոյմուլ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈՒՈՎՈՒՄԸ

Ա. Դ Է Մ Ք

	Եզակի	Յորնակի
Ուղղ.	Ես	Մենք
Հայց.	Զիս	Զմեզ
Սեռ.	Իմ, իմին	Մեր, մերին
Տրակ.	Ինձ, ինձի	Մեզ, մեզի
Բաց.	Ինձմէ, ինէ	Մեզմէ, մենէ
Գործ.	Ինձմով	Մեզմով

Բ. Դ Է Մ Ք

	Եզակի	Յորնակի
Ուղղ.	Դու	Դուք
Հայց.	Զքեզ	Զձեզ
Սեռ.	Բու, քուկին	Ձեր, ձերին
Տրակ.	Քեզ, քեզի	Ձեզ, ձեզի
Բաց.	Քեզմէ, քենէ	Ձեզմէ, ձենէ
Գործ.	Քեզմով	Ձեզմով

Գ. Դ Է Մ Ք

	Եզակի	Յորնակի
Ուղղ.	Ինք	Իրենք
Հայց.	Զինք	Զիրենք
Սեռ.	Իր, իրեն	Իրենց
Տրակ.	Իրեն	Իրենց
Բաց.	Իրմէ	Իրենցմէ
Գործ.	Իրմով	Իրենցմով

ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈՒՈՎՈՒՄԸ

Ա Յ Ս

	Եզակի	Յորնակի
Ուղղ. Հայց.	Այս, աս, ասիկա	Ասոնք
Սեռ. Տրակ.	Ասոր	Ասոնց
Բաց.	Ասկէ	Ասոնցմէ
Գործ.	Ասով	Ասոնցմով

Ա Յ Դ

	Եզակի	Յորնակի
Ուղղ. Հայց.	Այդ, աս, ասիկա	Ասոնք
Սեռ. Տրակ.	Ասոր	Ասոնց
Բաց.	Ասկէ	Ասոնցմէ
Գործ.	Ասով	Ասոնցմով

Ա Յ Ն

	Եզակի	Յորնակի
Ուղղ. Հայց.	Այն, ան, անիկա	Անոնք
Սեռ. Տրակ.	Անոր	Անոնց
Բաց.	Անկէ	Անոնցմէ
Գործ.	Անով	Անոնցմով

Է Ա Կ Ա Ն Բ Ա Յ

Սահմանական եղանակ

Ներկայ

	եզակի		Յորնակի
Ա.	Դեմք Ես եմ		Մենք ենք
Բ.	» Դուն ես		Դուք էք
Գ.	» Ան է		Անոնք են

Անցեալ Անկասար

	եզակի		Յորնակի
Ա.	Դեմք Ես էի		Մենք էինք
Բ.	» Դուն էիր		Դուք էիք
Գ.	» Ան էր		Անոնք էին

Անցեալ Կասարեալ

	եզակի		Յորնակի
Ա.	Դեմք Ես եղայ		Մենք եղանք
Բ.	» Դուն եղար		Դուք եղաք
Գ.	» Ան եղաւ		Անոնք եղան

Բացարձակ Ապառնի

	եզակի		Յորնակի
Ա.	Դեմք Ես պիտի ըլլամ		Մենք պիտի ըլլանք
Բ.	» Դուն պիտի ըլլաս		Դուք պիտի ըլլաք
Գ.	» Ան պիտի ըլլայ		Անոնք պիտի ըլլան

Անկասար Ապառնի

	եզակի		Յորնակի
Ա.	Դեմք Ես պիտի ըլլայի		Մենք պիտի ըլլայինք
Բ.	» Դուն պիտի ըլլայիր		Դուք պիտի ըլլայիք
Գ.	» Ան պիտի ըլլար		Անոնք պիտի ըլլային

Հրամայական եղանակ

	եզակի		Յորնակի
Ա.	Դեմք — —		Մենք ըլլանք
Բ.	» Դուն եղի՛ր		Դուք եղի՛ք

Ասորադասական եղանակ

Ներկայ

	եզակի		Յորնակի
Ա.	Դեմք Ես ըլլամ		Մենք ըլլանք
Բ.	» Դուն ըլլաս		Դուք ըլլաք
Գ.	» Ան ըլլայ		Անոնք ըլլան

Անկասար

	եզակի		Յորնակի
Ա.	Դեմք Ես ըլլայի		Մենք ըլլայինք
Բ.	» Դուն ըլլայիր		Դուք ըլլայիք
Գ.	» Ան ըլլար		Անոնք ըլլային

Անորոշ եղանակ

Աներեւոյր

Ըլլալ

Ներկայ Ընդունելութիւն

Եզող

Անցեալ Ընդունելութիւն

Եզած , եղեր

Ապառնի Ընդունելութիւն

Ըլլալու

Ա. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ. — ՍԻՐԵԼ

Սահմանական եղանակ
Ներկայ

եզակի	Յոթնակի
Կը սիրեմ	Կը սիրենք
Կը սիրես	Կը սիրէք
Կը սիրէ	Կը սիրեն

Անցեալ Անկասար

եզակի	Յոթնակի
Կը սիրէի	Կը սիրէինք
Կը սիրէիր	Կը սիրէիք
Կը սիրէր	Կը սիրէին

Անցեալ Կասարեալ

եզակի	Յոթնակի
Սիրեցի	Սիրեցինք
Սիրեցիր	Սիրեցիք
Սիրեց	Սիրեցին

Բացարձակ Ապառնի

եզակի	Յոթնակի
Պիտի սիրեմ	Պիտի սիրենք
Պիտի սիրես	Պիտի սիրէք
Պիտի սիրէ	Պիտի սիրեն

Անկասար Ապառնի

եզակի	Յոթնակի
Պիտի սիրէի	Պիտի սիրէինք
Պիտի սիրէիր	Պիտի սիրէիք
Պիտի սիրէր	Պիտի սիրէին

Հրամայական եղանակ

եզակի	Յոթնակի
— —	Սիրե՛նք
Սիրէ՛	Սիրեցէ՛ք

Ասոցադասական եղանակ

Ներկայ

եզակի	Յոթնակի
Սիրեմ	Սիրենք
Սիրես	Սիրէք
Սիրէ	Սիրեն

Անկասար

եզակի	Յոթնակի
Սիրէի	Սիրէինք
Սիրէիր	Սիրէիք
Սիրէր	Սիրէին

Անորոշ եղանակ

Աներեւոյթ

Սիրել

Ներկայ Ընդունելութիւն

Սիրող

Անցեալ Ընդունելութիւն

Սիրած, սիրեր

Ապառնի Ընդունելութիւն

Սիրելու

Բ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ. — ԽՕՄԻԼ

Սահմանական եղանակ

Ներկայ

Եզակի	Յորնակի
Կը խօսիմ	Կը խօսինք
Կը խօսիս	Կը խօսիք
Կը խօսի	Կը խօսին

Անցեալ Անկասար

Եզակի	Յորնակի
Կը խօսէի	Կը խօսէինք
Կը խօսէիր	Կը խօսէիք
Կը խօսէր	Կը խօսէին

Անցեալ Կասարեալ

Եզակի	Յորնակի
Խօսեցայ	Խօսեցանք
Խօսեցար	Խօսեցաք
Խօսեցաւ	Խօսեցան

Բացարձակ Ապառնի

Եզակի	Յորնակի
Պիտի խօսիմ	Պիտի խօսինք
Պիտի խօսիս	Պիտի խօսիք
Պիտի խօսի	Պիտի խօսին

Անկասար Ապառնի

Եզակի	Յորնակի
Պիտի խօսէի	Պիտի խօսէինք
Պիտի խօսէիր	Պիտի խօսէիք
Պիտի խօսէր	Պիտի խօսէին

Հրամայական եղանակ

Եզակի	Յորնակի
—	Խօսի՛նք
Խօսէ՛	Խօսեցէ՛ք

Ստորադասական եղանակ

Ներկայ

Եզակի	Յորնակի
Խօսիմ	Խօսինք
Խօսիս	Խօսիք
Խօսի	Խօսին

Անկասար

Եզակի	Յորնակի
Խօսէի	Խօսէինք
Խօսէիր	Խօսէիք
Խօսէր	Խօսէին

Անորոշ եղանակ

ԱՆԵՐԷՆՈՅԲ

Խօսիլ

Ներկայ Ընդունելութիւն

Խօսող

Անցեալ Ընդունելութիւն

Խօսած, խօսեր

Ապառնի Ընդունելութիւն

Խօսելու

Գ. ԼԾՈՐԿՈՒԹԻՒՆ. — ԿԱՐԴԱԼ

Սահմանական եղանակ

Ներկայ

Եզակի	Յորնակի
Կը կարգամ	Կը կարդանք
Կը կարդաս	Կը կարդաք
Կը կարդայ	Կը կարդան

Անցեալ Անկասար

Եզակի	Յորնակի
Կը կարգայի	Կը կարդայինք
Կը կարդայիր	Կը կարդայիք
Կը կարդար	Կը կարդային

Անցեալ Կասարեալ

Եզակի	Յորնակի
Կարդացի	Կարդացինք
Կարդացիր	Կարդացիք
Կարդաց	Կարդացին

Բացարձակ Ապառնի

Եզակի	Յորնակի
Պիտի կարգամ	Պիտի կարդանք
Պիտի կարդաս	Պիտի կարդաք
Պիտի կարդայ	Պիտի կարդան

Անկասար Ապառնի

Եզակի	Յորնակի
Պիտի կարդայի	Պիտի կարդայինք
Պիտի կարդայիր	Պիտի կարդայիք
Պիտի կարդար	Պիտի կարդային

Հրամայական եղանակ

Եզակի	Յորնակի
—	Կարդանք
Կարդա՛	Կարդացե՛ք

Ասորադասական եղանակ

Ներկայ

Եզակի	Յորնակի
Կարդամ	Կարդանք
Կարդաս	Կարդաք
Կարդայ	Կարդան

Անկասար

Եզակի	Յորնակի
Կարդայի	Կարդայինք
Կարդայիր	Կարդայիք
Կարդար	Կարդային

Անորոշ եղանակ

ԱՆԵՐԵՈՅՔ

Կարդայ

Ներկայ Ընդունելութիւն

Կարդացող

Անցեալ Ընդունելութիւն

Կարդացած, կարդացեր

Ապառնի Ընդունելութիւն

Կարդալու

Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Ե Ր

ԱՆԵՐԵՆՅՐ Սահմանական Կասարեալ Հրամայական

Բերել, Բերի, բերիր, բերաւ, Բեր՛ր:
բերինք, բերիք, բերին,

Դնել, Դրի, դրիր, դրաւ, Դր՛ր:
դրինք, դրիք, դրին,

Ձարնել, Ձարկի, զարկիր, զարկաւ, Ձար՛կ:
զարկինք, զարկիք, զարկին,

Ընել, Ըրի, ըրիր, ըրաւ, Ըր՛ի:
ըրինք, ըրիք, ըրին,

Ըսել, Ըսի, ըսիր, ըսաւ, Ըս՛ի:
ըսինք, ըսիք, ըսին,

Ուսել, Կերայ, կերար, կերաւ, Կեր՛ր:
կերանք, կերաք, կերան,

Տեսնել, Տեսայ, տեսար, տեսաւ, Տես՛ս:
տեսանք, տեսաք, տեսան,

Տանիլ, Տարի, տարիր, տարաւ, Տար՛ր:
տարինք, տարիք, տարին,

ԱՆԵՐԵՆՅՐ Սահմանական Կասարեալ Հրամայական

Դալ, Եկայ, եկար, եկաւ, Եկո՛ւր:
եկանք, եկաք, եկան,

Լալ, Լացի, լացիր, լացաւ, Լաց՛ց:
լացինք, լացիք, լացին,

Տալ, Տուի, տուիր, տուաւ, Տո՛ւր:
տուինք, տուիք, տուին,

Բանալ, Բացի, բացիր, բացաւ, Բաց՛ց:
բացինք, բացիք, բացին,

Դարձնալ, Դարձայ, դարձար, դարձաւ, Դարձի՛ր:
դարձանք, դարձաք, դարձան,

Երթալ, Գացի, գացիր, գնաց, Գնա՛՛:
գացինք, գացիք, գացին,

Իշնալ, Ինկայ, ինկար, ինկաւ, Ինկի՛ր:
ինկանք, ինկաք, ինկան,

Մնալ, Մնացի, մնացիր, մնաց, Մնացի՛ր:
մնացինք, մնացիք, մնացին:

Թ Ո Ղ Ո Ւ Լ Բ Ա Յ Ը

Սահմանական եղանակ

Ներկայ

Եզակի	Յոքնակի
Կը թողում	Կը թողունք
Կը թողուս	Կը թողուք
Կը թողու	Կը թողուն

Անցեալ Անկասար

Եզակի	Յոքնակի
Կը թողուի	Կը թողուինք
Կը թողուիր	Կը թողուիք
Կը թողուր	Կը թողուին

Անցեալ Կասարեալ

Եզակի	Յոքնակի
Թողուցի	Թողուցինք
Թողուցիր	Թողուցիք
Թողուց	Թողուցին

Բացարձակ Ապառնի

Եզակի	Յոքնակի
Պիտի թողում	Պիտի թողունք
Պիտի թողուս	Պիտի թողուք
Պիտի թողու	Պիտի թողուն

Անկասար Ապառնի

Եզակի	Յոքնակի
Պիտի թողուի	Պիտի թողուինք
Պիտի թողուիր	Պիտի թողուիք
Պիտի թողուր	Պիտի թողուին

Հրամայական եղանակ

Եզակի	Յոքնակի
---	Թողմենք
Թող	Թողուցէք

Ստորադասական եղանակ

Ներկայ

Եզակի	Յոքնակի
Թողում	Թողունք
Թողուս	Թողուք
Թողու	Թողուն

Անկասար

Եզակի	Յոքնակի
Թողուի	Թողուինք
Թողուիր	Թողուիք
Թողուր	Թողուին

Անորոշ եղանակ

Աներեւոյթ

Թողուլ

Ներկայ Ընդունելութիւն

Թողող

Անցեալ Ընդունելութիւն

Թողած, թողեր

Ապառնի Ընդունելութիւն

Թողելու

Դիտողութիւն.— Ուշ վերջացող բայերէն շատ քիչերը կը գործածուին աշխարհաբարի մէջ, և ընդհանրապէս անկանոն խոնարհում ունին։

1. Առտուն	6	28. Բաղեղը և կաղնին	74
2. Մեր շունը	8	29. Հայրենիք	76
3. Սիրելի աղջիկը	12	30. Փիղը	78
4. Հայրենասեր երուանդ	16	31. Արծաթ դրամը	80
5. Խեղճ աղջիկը	18	32. Փոսուռան ու լուսնիկները	82
6. Սուտ յաջողութիւն	20	33. Մրջիւնը և աղանին	84
7. Զկտրտութիւն	24	34. Հետաքրքրութեան վտանգը	86
8. Ագարակը	26	35. Կատուն ու եկբանիկը	90
9. Մեր պարտէզը	30	36. Երբ ձմեռ գայ	92
10. Ճնճողկը	32	37. Ալկէոնին բոյնը	94
11. Նկարչի աշխատանոց մը	34	38. Աջ ձեռքը և ձախ ձեռքը	96
12. Աղքատ գործաւորուհին	38	39. Գործնական խորհրդատուն	100
13. Արեւն ու լուսինը	40	40. Ուրիշներուն կարծիքը	102
14. Լաւագոյն յանձնարարականը	42	41. Մուկերը	104
15. Ունեցածէն գոն ըլլալ	44	42. Տղու գորով	106
16. Ամպին ընտանիքը	46	43. Անհնազանդ աղջիկը	108
17. Մոցարդ ու փոքրիկ աղջիկը	48	44. Սուտ մը որ ներելի է	110
18. Սարդերն ու շերամը	52	45. Քաղաքավարութիւն և հա- ճոյակատարութիւն	112
19. Գեղջկուհիին երազը	54	46. Հայ զինուորը	114
20. Միտմիւնը զօրութիւն է	56	47. Ագահ շունը	116
21. Մեր ընտանիքը	58	48. Պատժուած ստախոսութիւն	118
22. Դունը բուն, բախտը արժուն	60	49. Դանիէլ ու կապիկները	122
23. Կատուի արդարութիւն	62	50. Բանագործութիւն	124
24. Գարունը և կեանքը	64	51. Զգախէժէ զնդակը	126
25. Միամիտ կիւռն	66	52. Ճանճն ու թիթեռնիկը	128
26. Մայրիկին համրոյրը	68	53. Մեծ մօր ստեղծ	130
27. Հայ գիրկը	72		

Ա. Բառ և խօսք	7	ԼԶ. Բացարձակ և Անկատար Ապաւնի	93
Բ. Վանկ	9	ԼԷ. Հրամայական	95
Գ. Գիրք	13	ԼԸ. Ստորագրական Ներկայ և Անկատար	97
Դ. Ե և Է Չայնաւորներ	17	ԼԹ. Անորոշ Եղանակ կամ Դերբայ	101
Ե. Ո և Օ Չայնաւորներ	19	Խ. Գանել, Մտնել, Ելլել, Իջ- նել, Հեծնել բայերը	103
Զ. ՈՒ ի հնչումը	21	ԽԱ. Առնել, Խածնել, Թուր- նել, Պագնել բայերը	105
Է. Յ գիրք	25	ԽԲ. Նիլ և Չիլ վերջացող բա- յերը	107
Ը. Անուն կամ Գոյական Թ. Յատուկ և Հասարակ Գո- յական անուն	27	ԽԳ. ՆԱԼ վերջացող բայերը	109
Ժ. Գոյականին Թիւր	31	ԽԴ. Անկանոն Բայեր	111
ժԱ. Հոլովներ	33	ԽԵ. Ներգործական Բայ	113
ժԲ. Հոլովումներուն Չեւերը	35	ԽԶ. Զէզոք Բայ	115
ժԳ. Յօդ	39	ԽԷ. Կրաւորական Բայ	117
ժԴ. Անորոշ Յօդ	41	ԽԸ. Կոչական	119
ժԵ. Անորոշ Յօդ	43	ԽԹ. Բացայայտիչ և Բացա- յայտեալ	123
ժԶ. Յատկացուցիչ և Յատ- կացեալ	45	Ճ. Մակբայ	125
ժԷ. Որական Ածական	47	ՃԱ. Նախադրութիւն	127
ժԸ. Յուցական Ածական	49	ՃԲ. Շաղկապ	129
ժԹ. Ստացական Ածական	49	ՃԳ. Չայնարկութիւն	131
ժԺ. Թուական Ածական	53	Դ. Գոյականներուն հոլովումը	132
ժՃ. Անորոշ Ածական	55	Անձնական Դերանուններուն հո- լովումը	134
ժԴ. Դերանուն	57	Յուցական Դերանուններուն հո- լովումը	135
ժԵ. Յուցական Դերանուն	59	Էական Բայ	136
ժԶ. Ստացական Դերանուն	61	Ա. Լծորդութիւն. — Սիրել	138
ժԷ. Յարաբերական Դերանուն	63	Բ. — Խօսիլ	140
ժԸ. Անորոշ Դերանուն	65	Գ. — — Կարգալ	142
ժԹ. Բայ և Ենթակայ	67	Անկանոն Բայեր	144
ԻԷ. Սեռի խնդիր	69	Թողուլ Բայը	146
ԻԸ. Բնութեան խնդիր	73		
ԻԹ. Բային ժամանակները	75		
Լ. Ստորգելի	77		
ԼԱ. Երբք Լծորդութիւններ	79		
ԼԲ. Բային Համաձայնութիւնը	81		
ԼԳ. Սահմանական Ներկայ	83		
ԼԴ. Անցեալ Անկատար	85		
ԼԵ. Անցեալ Կատարեալ	87		
ԼԶ. Անցեալ Կատարեալ	91		

ՅԱՆԿ ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐՈՒ

	Էջ		Էջ
1. Առտուն	7	23. Բաղեղն ու վարդենին . . .	75
2. Սիլլան	9	24. Ծիրանի	77
3. Փոքրիկ Արսինէին	13	25. Անծեղն ու խայտիտը . . .	79
4. Հայ տղան	17	26. Խեղճ տղան	81
5. Փոքրիկ բարձիկը	19	27. Փոսուռան	83
6. Խղունչը	21	28. Կապոյտ պարիկը	85
7. Զկնորսին նաւակը	25	29. Փորձի համար	87
8. Մշակին երգը	27	30. Օձն ու փոսուռան	91
9. Բարեկամուծիւնը	35	31. Զմեռ	93
10. Գործաւորուհիին երգը	39	32. Նաւաստին	95
11. Ծուխը և բոցը	43	33. Երկու արօրներ	97
12. Կարուակն ու մեծատունը	45	34. Վարդն ու կակաչը	101
13. Կարուակն ու մեծատունը (շր.)	47	35. Հայլին	103
13. Եթէ	49	36. Տերեւը	105
14. Ամուլ հասկն ու պարապ տակաւը	53	37. Ծաղիկը	107
15. Մբշիւնը	55	38. Խաղողը	109
16. Միւռթիւն	57	39. Քաղաքավար տղան	113
17. Մայրիկին սէրը	59	40. Օրօր	115
18. Պահապան հրեշտակը	61	41. Ստախօսին պատիժը	119
19. Զին և ցուլը	63	42. Ոսկի եղնակները	123
20. Տղու հարցում	65	43. Փոքրիկ վարձակալը	125
21. Կոյր տղան	69	44. Գիշեր և բուն	127
22. Յոյս	73	45. Մանուկն ու արծիւը	129
		46. Յիսուս Մանուկը	131



5890

ԳՐԱԳԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
Ա. ԵՍԶԸՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՄԻԱԿ ԿԵԴՐՈՆ ԱՏԵՂԻ
Գ. ՍԻՍՏՈՒՅԻՆԻ, Գ. ՔԱՂԱՅԻՆԻ, Ա. ԱՊՐԱԿԵԱՆԻ
Գ. ԻՍԳՆԱՆԻ ԵՎ Մ. ՊՈՆՏՈՒՆԻ (Գ. Ք. ԳԱՅԱՆԻՆԻ)

Մանկավարժական դեղատոմս մեկտուով պատրաստում
գրականության համարներ են, որոնք Հայ բնագետի պարունակվածը, մաթ
մեթոդներով են թվ. տեղի են կազմում: Այս է միակ պատճառը որ
թիվներու արժանացում են գիտնաբարձրության բաղմամբիս սպասար
հասցիին զմեզ առանց եզրույթի միջոցով համար Գրաստան

ԳԻՆ 4 228

رساعات سلطان حمام
بافر جيلر نوسرو ۱۱
یازیدجیان کتبخانه سی

ԳՐԱՏՈՒՆ Ա. ԵՍԶԸՃԵԱՆ
Սուլթան Համամ, Պագրերկար 11
Կ. ՊՈԼԻՍ
Librairie A. YAZIDJIAN

11, Sultan Hamam, Bakrdjilar, CONSTANTINOPLE